Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format
Adapt — remix, transform, and build upon the material

891.99-82
Գ-87

ԳԱՐԵՂԻՆ

127

Թիֆլիս 1919

ՏՊԱՐԱՆ ,,ՄԱՄՈՒԼ''—ՏՆՕՐԷՆՆԵՐ՝ Մ. ԷՓՐԻԿԵԱՆ ԵՒ Յ. ՄԱՅԻԼԵԱՆ

Յովհ. Թումանեանին

Նրա ծննդեան 50-ամեակի առիթով:

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ZUUՊ-Арм.ССР
им. А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

1701 ch-3.

9126-55

ՎԱՀԱՆԻ ՑԱՒԸ

Ամսից աւելի էր Քանանեանների տանը արտասովոր անհանգստութիւն էր տիրում։ Անհանգիստ էին բոլորը— թէ ընտանիքի հայրը՝ ժօտ վաթսուն տարեկան այդ ալեզարդ փաստաբանը, թէ նրա ծերացող կինը՝ տիկին Աննան, թէ նրանց ջահել աղջկերքը՝ զոյգ կեչիների պէս բացւած այդ կենսաթրթիռ օրիորդները, և թէ գեղջկուհի պառաւ աղախինը։ Եւ դա սովորական անհանգստութիւն չէր. պ. Քանանեանը կարծես ծերացել էր մի քանի տարով. օրերով նա քաշւում էր իր առանձնասենեակը և անձնատուր լինում տխուր խոհերի. տիկին Աննային յաճախ տեսնում էին միայնութեան մէջ լաց լինելիս, իսկ օրիորդները—այդ մշտաժպիտ, խնդմոլիկ աղջկերքը—դարձել էին զարմանալի զգաստ ու խոհուն, կարծես մէկը մի ծանր նախատինք էր տւել նրանց։ Խեղճ աղախինը հօ այնպէս էր կորցրել իրեն, որ կերակուրները կամ աղի էր անում կամ ալանի։ Խոհանոցի մօտով անցնողը միշտ կարող էր լսել նրա այս խօսքերը. «Տէր, Քո դուռը բանաս, մինուճար է»...

Այս ընդհանուր անհանգստութեան պատճառը Քանանեանների միակ որդի Վահանի հիւանդութիւնն էր, մի հիւանդութիւն, որ միանգամայն անհասկանալի էր մնում շրջապատողներին։ Քսանեօթ տարեկան մի գունատ, շատ գունատ երիտասարդ էր Վահանը—կարճահասակ, ծայրերը կտրած բարակ բեղերով և խոշոր մտախոհ աչքերով, որոնք երբեմն ստանում էին այնպիսի արտայայտութիւն, որ թւում էր թէ մի թագուն հուր է վառւում նրանց մէջ։ Օտարոտի բան էր թւում սակայն նրա հիւանդութիւնը։—Ինում, ելնում, դատում և խօսում էր Վահանը, ինչպէս ամեն մի առողջ մարդ, բայց երբեմն,—շաբաթը մի կամ երկու անգամ,—երկար կանգնում էր նա որևէ մի տեղ և անշարժ, անթարթ աչքերով նայում մի կէտի, ու մէկ էլ յանկարծ ցնցւում ահաբեկ, տևական մի սարսուռով, յաճախ ինքն իրեն խօսելով. իսկ լայն բացւած աչքերը վառւում էին բոցավառ մի փայլով։ Թւում էր թէ նա պատրաստւում է յարձակւել մէկի վրայ կամ պաշտպանւել—ու չի կարողանում անել ոչ մէկը, ոչ միւսը... Այս ցնցումները պատահում էին թէ ցերեկ և թէ գիշեր ժամանակ։ Եւ Քանանեաններն ուղղակի չգիտէին ինչ անել, չգիտէին ինչ է իրենց որդու իսկական ցաւը։

Մի ամիս առաջ Վահանին բերել էին Մոսկւայից այդ հիւանդութիւնը հետը։ Բերող ընկերը պատմել էր, որ պատերազմի սկզբում իրեն ու Վահանին՝ իրաւագիտական մասնաճիւղը աւարտելուն պէս՝ վերցրել էին երբեմն սպաներ և տարել գերմանական սահմանը կռիւ։ Ծնողներն այդ գիտէին։ Վեց ամիս ճակատում մնալուց յետոյ սակայն Վահանը սրով վիրաւորւել էր թևից և բժշկութեան համար տարւել Մոսկւայի զինւորական հիւանդանոցներից մէկը, ուր և նրա վէրքը առողջացել էր բոլորովին։ Քանանեաններն այդ ևս գիտէին։ Բայց ինչ էր

իսկապէս որդու հիւանդութիւնը—Վահանին բերող ընկերը ուսերն ու յօնքերը վեր էր քաշում միայն. նա ինքը ոչինչ չգիտէր, իսկ հիւանդանոցի բժիշկներն ասել էին, որ դա թեթև ջղացաւ է և հայրենիքում կանցնի։

Բայց ամսից աւելի էր ահա նա հայրենիքումն էր և հիւանդութիւնը չէր անցնում... Տեղական բժիշկները նոյնպէս այն կարծիքի էին, որ դա շուտով կանցնի, և որ լաւ կը լինի ամառը գալուն պէս Վահանին տանել ամառանոց, ուր՝ բնութեան գրկում՝ ամեն ինչ պիտի անցնէր. իսկ առ այժմ—քանի ձմեռ էր—խորհուրդ էին տալիս զբաղեցնել Վահանին հաճելի ու զւարճալի երևոյթներով. տանել զբօսանքի, կրկէսներ, ուրախ կոմեդիաների ներկայացման և, վերջապէս, ամենալաւագոյն միջոցը—կարդալ ուրախ գրքեր... Մի խօսքով, բոլոր բժիշկների կարծիքը գրեթէ մէկ էր. հանգստութիւնն ու հաճելի մթնոլորտը կը բուժի Վահանին։

Ու Ֆանանեաններն ամբողջ տնով աշխատում էին ստեղծել այդ մթնոլորտը. մայրն ու քոյրերը յաճախ Վահանին տանում էին կրկէս, ցերեկւայ ուրախ ներկայացումներին, արև օրերը շրջում էին հասարակաց այգում, իսկ մեծ մասամբ քոյրերը փոխէ-փոխ կարդում էին զաւեշտական գրքեր և աշխատում էին ծիծաղել ամեն մի նախադասութեան, նոյնիսկ ամեն մի խօսքի վրայ, որ ծիծաղ բերեն և Վահանի դէմքին։ Վահանը սակայն բոլոր ժամանակ մնում էր անտարբեր, իսկ եթէ երբեմն միայն ժպտում էր—այդ վայրկեանները Ֆանանեան ընտանիքի համար դառնում էին տօն. ծնողները հրճւում էին, խանդաղատում, քոյրերը զոյգ թիթեռների պէս թրփռում եղբօր շուրջը, և բոլորը միասին ժպիտներով, ակնարկներով ու շարժումներով խնդակցում իրար... Բայց դրանք վայրկեաններ էին միայն, որ ոչինչ չէին փոխում։ Վահանի ցաւն այնուամենայնիւ կրկնւում էր առաջւայ պէս։

Մի գիշեր, սարսուռով բռնված միջոցին, նա ձեռքը բռունցք շինած, անկողնի մէջ նստելով՝ գոռաց ռուսերէն.

— Не смѣй!

Մայրը (որ որդու հիւանդութեան պատճառով նրա սենեակումն էր քնում) գիշերուայ շապկով վեր թռաւ տեղից սարսափահար.

— Ի՞նչ է, Վահան ջան, ի՞նչ է։

Մօր ձայնը կարծես զգաստացրեց Վահանին. նա լարուած ձեռքը իջեցրեց և գլուխն ուսին թեքելով՝ հառաչեց.

— Ի՞նչ է, Վահան ջան,—կրկնեց մայրը անհանգիստ.—ո՞ւմ էիր ասում. այդ ո՞ւմ հետ էիր խօսում։

— Ուզում է ինձ խփել,—արտասանեց Վահանը հևացող ձայնով, աչքերը սենեակի դրանը յառած.—կարծում է քնած եմ...

Մայրը բան չէր հասկանում. նա նայեց դէպի դուռը. այնտեղ ոչ-ոք չկար։

— Ո՞վ, Վահան ջան. ո՞վ էր ուզում խփել. ո՞վ է կարծում...

Վահանը նայեց մօրը և լռեց. իսկ այնուհետև մայրը որքան հարց ու փորձ արաւ—նա բան չխօսեց. ուստի ենթադրելով, որ որդին խօսում է երազի մէջ, դադարեցրեց իր հարցերը և նորից մտաւ անկողին՝ մի ծանր հառաչանքով։

Մի ուրիշ անգամ սակայն Վահանը մի այնպիսի բան արաւ, որ բոլոր տնեցիներին զարմացրեց։

Զրօրհնէքի տօներից յետոյ էր այդ։

Մի ցուրտ առաւօտ քաղաքապահ ոստիկանը ինչ-որ մի թուղթ էր բերել պ. Ֆանանեանին և, պատասխանի սպասելով, շինելի օձիքն ականջներին քաշած, թուրը կողքից կախ, ցրտից կարմրած դէմքով, այտերն ուռցնելով՝ իր բարձր հասակը պտտում էր պատշգամբում և ժամանակ առ ժամանակ՝ գիւղացիներին յատուկ հետաքրքրութեամբ՝ լուսամուտներից նայում ներս։

Վահանը, որ այդ ժամանակ մօր և մեծ քրոջ հետ իր սենեակումն էր—ոստիկանին տեսնելով—յանկարծ գունատուեց և նստած տեղից ցատկեց դէպի լուսամուտը՝ ուսերէն գոչելով.

— Հեռու, հեռու...

Ոստիկանը շարած կանգ առաւ և նայեց Վահանին։

— Հեռու,—կրկնեց Վահանը այս անգամ ոտից մինչև գլուխ դողալով և բռունցքը ոստիկանի վրայ թափ տալով։

Մայր ու աղջիկ բռնեցին Վահանին։

— Ի՞նչ ես ուզում, Վահան ջան, ի՞նչ ես ուզում. նա հայրիկի համար թուղթ է բերել,—ասին նրանք միասին։

Զգալով որ ձեռները բռնել են, Վահանը կարծես զինաթափուեց և սկսեց հեալ։

Ոստիկանը կանգնած տեղը շարունակում էր ապուշի պէս ժպտալ։ Տիկին Փանանեանը ձեռքով նշան արաւ նրան հեռանալու. և երբ ոստիկանը հեռացաւ, յիմար մէ ժպիտ դէմքին, նա դարձաւ որդուն.

— Դու կարծում ես նա գող է, Վահան ջան. չէ. նա հայրիկի համար ինչ-որ թուղթ է բերել ստորագրելու...

Վահանը մի վայրկեան յոգնած հայեացքով նայեց մօրը, ապա ճակատը բռնելով՝ գրեթէ ընկաւ գահաւորակի վրայ ու լաց եղաւ՝ ուսերը ցնցելով։

Տեսնելով այս ամենը՝ Փանանեանները կորցրին իրենց հաւատը դէպի բժիշկները և իրենց ամբողջ յոյսը դրին ամարանոցի վրայ. ամառը գայ՝ ընտանիքով կը փոխադրուեն Դիլիջան։

— Հէնց մայիսին,—ասում էին աղջկերքը։

— Այո, ի հարկէ, մայիսին,—պատասխանում էին ծնողները։

Դիլիջանը նրանց մշտական ամարավայրն էր. նրա

անունը Քանանեանների սրտում զարթեցնում էր միշտ քաղցր յիշատակները—եղևնիների բուրմունք, ջրերի աղմուկ, հաւքերի երգը անտառի թաւուտում. նորից յիշում էին նրանք արահետները ելևէջ, ուղիները օձաձիգ, փըրփըրած կաթը կովի տակ, ճաշը՝ ծառերի հովանու ներքոյ—ու մի անճառ հիացում՝ յոյսերով, սպասելիքներով՝ համակում էր նրանց հոգին և նրանք մտածում էին, որ Դիլիջանում Վահանն անպատճառ կառողջանայ, անպատճառ. թող մի մայիսը գայ...

* * *

Բայց մայիսը հեռու էր տակաւին։ Ուստի Քանանեանները, թէև յուսահատուած բոլոր բժիշկներից ու խորհուրդներից, այնուամենայնիւ սկսեցին զւարճութեան էլի նոր աղբիւրներ որոնել Վահանի համար. թերևս ամեն ինչ կորած չէ, գուցէ էլի մի բան կարելի է անել մինչև մայիս,—մտածում էին նրանք։ Եւ մեծ եղաւ նրանց ուրախութիւնը, երբ մի օր լրագրում կարդացին, որ քաղաքում բացւած է ճոխ ցուցահանդէս, որին մասնակցում էին յայտնի նկարիչներ։ Գրւածքի վերջում ասւած էր. «Մտնելով պատկերասրահը՝ մարդ մոռանում է շրջապատն իր ցաւերով և փոխադրւում է բնութեան կենսատու գիրկը»։ Այս մի քանի խօսքը նոր պայծառ յոյսեր վառեցին Քանանեան ընտանիքում։ Կարծես փրկութեան դուռը բացւել էր. բոլորը ձեռք ու ոտք ընկան. —Պէտք է գնալ, պէտք է Վահանին տանել, որոշեցին նրանք և որոշումը յայտնեցին Վահանին։ Վահանը համաձայնեց.

— Այո՛, գնա՛նք,—ասաւ նա ևս փոքր ինչ ուրախացած,—վաղուց է ես ցուցահանդէս չեմ տեսել։

— Եթէ լաւ լինի, մամա, մի քանի անգամ կերթանք,—ասին աղջկերքը։

Մայրը հաւան կացաւ այդ մտքին.

— Ինչո՞ւ չէ, ինչու չէ. կարելի է։

Եւ իսկոյնևեթ պատրաստութիւն տեսան գնալու։

Մայրը՝ չմրսելու համար՝ հագաւ թևքերն ու օձիքը ճագարի մորթով եզերած ու բամբակած աստառով տաք վերարկուն, իսը կալոշները. քոյրերը՝ չնայած մօր յորդորներին, կալոշներից հրաժարուեցին, թէ ոտները մեծացնում է, բայց նոյնպէս հագան տաք վերարկուները և վերցրին գառան մորթուց մուֆտիները։ Որովհետև այդ օրը սովորականից ցուրտ էր, Վահանին հագցրին հայրիկի մեծ, երկար վերարկուն լայնադարձ օձիքով, և երբ փողոցում քամու պատճառով այդ օձիքը բարձրացրին—Վահանի գլուխն աներևոյթացաւ նրա մէջ, այնպէս որ ետևից նայողին թւում էր թէ փողոցով քայլում է վերարկուն։

Քոյրերը ծիծաղեցին։ Վահանը ժպտաց, և բոլորը միասին ուրախացան. սա լաւ նշան է, լաւ տրամադրութիւնը կարող է լաւ հետևանք ունենալ,—մտածեցին։

Պատկերասրահը երկրորդ յարկումն էր։ Մարմարէ ցուրտ աստիճաններով բարձրացան վերև, գնեցին չորս տոմսակ, մի պատկերացուցակ և մտան սրահը։

Բարձր, լուսաւոր ու ընդարձակ դահլիճի ամբողջ չորս պատն էլ զարդարուած էին բազմաթիւ մեծ ու փոքր նկարներով. եռոտանի կլորիկ պատուանդանների վրայ դրուած էին գաճէ անդրիներ և խաղատիկնիկների չափ փոքրիկ արձաններ։ Այցելուները խումբ-խումբ ու մեկուսի դահլիճում ցրուած, ցուցակները ձեռներին, հեռանալով ու մօտանալով՝ եռանդուն աչքերով դիտում էին նկարները. ոմանք դիմում էին ակնոցի ու դիտակի օգնութեան։ Հերթապահ նկարիչը, երիտասարդ, բայց արդէն ճաղատ գլխով մի պարոն, սպիտակ զօլաւոր մեծ բանտը վզին, անկիւնում նստած լրագիր էր կարդում։

Քանանեանները դիտել սկսեցին դրան մօտից։

Առաջին նկարը լճափ էր՝ խիտ եղեգնուտով. ձկնկուլները մի ոտի վրայ կանգնած, երկար ու սուր կտուցները կախ, կարծես միտք էին անում. ջրերն ասեղնոտում էին, իսկ եղեգնուտը թեռում էր թէ շրշուն է արձակում այդ վէտ-վէտող ջրերի քով։

Նկարը դուր եկաւ նրանց։

— Ի՞նչ սիրուն է,— ասաւ Վահանը հիացած։

— Այո՛, շա՛տ,—պատասխանեցին քոյրերն ուրախացած ոչ այնքան նկարի համար, որքան եղբօր լաւացած տրամադրութեան։

— Միւսներն աւելի լաւն են, Վահան ջան,—աւելացրեց մայրը որդու տրամադրութիւնն աւելի բարձրացնելու նպատակով։

Մօտեցան միւսներին։ Եւ իրաւ. դրանք մէկը միւսից գեղեցիկ էին։ «Կեչիների անտառը» հիացրեց նրանց, «Բեռնակիրն» իր իրական գծերով՝ զարմանք պատճառեց, «Զինարկուտը» յիշեցրեց Դիլիջանը, «Ակրոպոլը»՝ յունաց պատմութիւնը, «Ախուրեանը»՝ Անին. Զիւնակատար «Արարատի» առջև նրանք ցուրտ զգացին, բայց «Արաքսի հովիտը»՝ արևի ոսկեղէն շողերով ողողուած, ջերմութիւն հաղորդեց նրանց։

Երկրորդ պատի կտաւներն աւելի շատ էին։ Բնութեան տեսարաններին այստեղ գերիշխում էին կեանքի պատկերները։ Առաջին կտաւը ներկայացնում էր մուրացկանները, երկրորդը՝ զբօսավայր—մանուկներով ու սպասուհիներով լիքը։ Քանանեաններն անտարբեր անցան սրանց մօտով և կանգ առան երրորդ կտաւի առաջ, որը ցուցակի մէջ կոչւում էր «Վրէժ»։ Ահագին մի նկար էր դա ոսկէ շրջանակի մէջ, որի փայլը խիստ հակադրութիւն էր կազմում պատկերի գորշ ֆոնին, տալով նրան մռայլ ու անհրապոյր տեսք։ Կտաւը ներկայացնում էր ահաւոր ու մթամած մի կիրճ, ուր սպառազէն մի երիտասարդ՝

անհուն հրճւանք ու հպարտանք իր հայեացքում՝ կանգնել էր կանաչների վրայ փռված դիակի մօտ և իր աջ ոտն ու արիւնաթաթաւ սրի ծայրը դէմ տւել նրա կրծքին։ Սպանւածի շորերը թարմ արիւնոտ էին, գլուխը բաց, անօգնական ընկած։ Երևում էր երիտասարդը վրէժխնդիր է եղել նրան և այժմ ցնծութեան մէջ է, անասնական այն ինքնագոհ վիճակում, որ ուռեցնում է մարդու կուրծքը և հուր է վառում նրա աչքերում։ Երիտասարդի ինքնագոհ արտայայտութիւնն այնքան յախուռն էր սպանւածի անմեղօրէն ընկած գլխի հանդէպ, որ տիկին Ֆանանեանը բարձրաձայն իր կասկածը յայտնեց պատկերի իրական լինելու մասին։

— Այսպիսի բան չի կարող լինել,—ասաց նա գլուխը շարժելով.—Սա հնարովի բան է։

— Ինչու է հնարովի,—առարկեցին քոյրերը, որ միշտ աշխատում էին մօրից հասկացող երևալ։—Այսպիսի բան միշտ էլ կարող է լինել։

— Որ մարդ սպանեն ու ոտն էլ դնեն դիակի վրայ —հեգնեց տիկին Աննան.—Սա նկարչի երևակայութիւն է, ուրիշ ոչինչ!

— Բայց և այնպէս լաւ է նկարւած,—ասին քոյրերը միասին։

Մայրը քիթը վեր քաշեց.

— Իհ...

— Մամա, դու բոլորովին մեշչանական ճաշակ ունես,—նկատեց փոքր աղջիկը։

Տիկին Ֆանանեանը խէթեց։

— Իսկ դուք—արիստոկրատ! Ինչպէս չէ!...

Եւ մայր ու աղջիկ սկսեցին վիճել, առանց Վահանին նայելու, որ բոլոր ժամանակ լուռ էր և երբ դիմեցին նրա օգնութեանը խնդիրը պարզելու, նրանք սարսափեցին—այնքան վայրենի կատաղութիւն, վախ և ատելու-

թիւն կար այդ ըոպէին Վահանի աչքերում։ Նա՝ գոյնը գը-ցած, դողում էր. հրաբորբոք աչքերը խաղում էին իրենց բներում։

Տիկին Ֆանանեանը վախեցաւ. այդ բոլորը Վահանի հիւանդութեան նշաններն էին։ Եւ առաջին միտքը, որ ծա-գեց մօր ու քոյրերի գլխում—այն էր, թէ հիւանդութիւնը «կրկնւում է», ուստի և մայրն շտապեց որդու ձեռները բռնել։

— Գնա՛նք, Վահան ջան, գնա՛նք,—ասաւ՝ որդու ձե-ռից քաշելով։

Վահանը՝ իր երկար ու մեծ վերարկուի մէջ՝ տեղից չշարժւեց. նա շարունակում էր նայել պատկերին վախով ու ատելութեամբ. մէկ էլ յանկարծ հնքից նրա քթածա-կերն սկսեցին ուռչել, երկար վազքից յոգնած նժոյգի ռուն-գերի նման, և նա, ինչպէս միշտ, աջ ձեռքը բռունցք շի-նած, սկսեց սարսռալ ոտից մինչև գլուխ՝ այնպէս սաստիկ, որ նրա ձախ ձեռքը ցնցւում էր մօր սառը ձեռում։ Տի-կին Ֆանանեանն այս անգամ հայեացքով օգնութեան կանչեց աղջկերանց։

— Գնանք, Վահան, գնանք այն կողմը,—ասին քոյ-րերը եղբօր թևը մտնելով, և աշխատեցին քաշել նրան դէպի դուռը։

— Թողէք,—մռնչաց յանկարծ Վահանը հևասպառ, ամբողջ իրանով դէպի պատկերը ձգւելով,—թողէք. նա ուզում է ձեզ խփել. բայց ես...—Ու գոռաց ռուսերէն.

— Не смѣй!..

Վերջին խօսքերը Վահանն արտասանեց այնպէս բար-ձրը, այնպիսի մի ահարկու ձայնով, որ այցելուները ցըն-ցւած իրարով անցան. մի քանիսը նոյնիսկ առաջ եկան զարմացած։ Մայրն ու քոյրերը Վահանի թևերն աւելի ա-մուր բռնելով՝ աշխատեցին քաշել նրան դէպի դուռը։

— Խելագար է,—ասաւ այցելուներից մէկը հարեւանին։

— Ինչպէս երևում է...

Մօտեցաւ և հերթապահ նկարիչն այլայլուած, ճաղատ գլուխը կարմրած։

— Ի՞նչ էր, ի՞նչ պատահեց,—հարցրեց նա վախեցած։

— Ոչինչ, ոչինչ,—պատասխանեց տիկ. Ֆանանեանն իրեն չկորցնելով,—որդիս մի քիչ վատ զգաց իրեն։

Ֆոյերերը քիչ էր մնում արտասուէին ամօթից. եղբօր ձեռները բռնած՝ նրանք աշխատում էին չանել մի այնպիսի շարժում, որ կարող էր անքաղաքավարի նկատուել։ Այնուամենայնիւ, բարապանի օգնութեամբ, դուրս բերին նրանք Վահանին սրահից, միջանցքում ջուր խմեցրին և, կառք նստելով վերադարձան տուն—տխուր-տրտում, ինչպէս սգաւորներ։

— Ֆոռանամ ես, քոռանամ,—գլուխն օրօրելով ասաւ պառաւ աղախինը ինքն իրեն, մինչև արմունկները քըշտած, լացքաջրոտ ձեռներով դուռը նրանց առաջ բանալով։ (Եկողների տխուր դէմքից նա կռահեց, որ «էլի» բան է պատահել)։ Եւ երբ բոլորն անխօս, Վահանին մէջ տեղ արած, բարձրացան սանդուխքներով, նա իր ցամաքած աչքերը յառեց դրան արանքով երևացող երկնքին ու քրթմնջաց.—Տէր, քո դուռը բանաս...

* * *

Այդ գիշեր Ֆանանեանների տանը ոչ ոք չքնեց համարեա։

Աղջկերքը շուտ-շուտ յիշելով պատկերահանդէսի դէպքը, աշխատում էին յիշել նաև այնտեղ եղած մարդկանց. տեսնես ովքեր կային այնտեղ, ովքեր տեսան իրենց այդ անյարմար դրութեան մէջ։ Ու յիշելով այս կամ այն ծա-

նօթ մարդուն, կնոջ, նրանց դէմքը ամբողջապէս, մինչև ականջները, տաքանում էր ամօթից։ Մտածելով Վահանի մասին, նրանք իրարից թագուն, հառաչանքով բացականչում էին.—Ա՜խ, երբ պիտի մայիսը գայ... Երկար ժամանակ խոհանոցում հառաչում էր և պառաւ աղախինը։ Իսկ ամուսինները ջոկ-ջոկ մտածում էին՝ չլինի թէ որդու հիւանդութիւնն իսկապէս ժառանգական արմատ ունենայ, ինչ որ կարծում էին զանազան մարդիկ. երկուսն էլ, սակայն, քրքրելով իրենց տոհմը—չէին յիշում նման դէպք։ Հայրը —որքան էլ չէր ուզում հաշուել այդ մտքի հետ—գտնում էր, որ որդին ցնորելու նշանները է ցոյց տալիս պարզապէս, բայց իրեն մխիթարում էր նրանով, որ լաւ խնամքն ու ամարանոցը կարող են փրկել նրան։ Իսկ մայրը ենթադրում էր, որ Վահանն ուղղակի գրաբան է և—իբրև նահապետական ընտանիքի դուստր—կարծում էր, որ պէտք է այդ բանը փորձել իմանալու մի որևէ գերբացի մօտ։ Եւ այս միտքն այնքան հաւանական թւաց նրան, որ նա անկողնից ելնելով, վերարկուն խալաթի փոխարէն ուսերին քցելով, Վահանի սենեակից գնաց ամուսնու մօտ իր կասկածը յայտնելու... Փաստաբանը անկողնի մէջ՝ գլուխն ափին յենած, արմունկը բարձին, միտք էր անում աչքը լամպի իջեցրած լոյսին յառած։ Կիսամթի մէջ նա աւելի ծեր և աւելի մռայլ էր երևում։ Լսելով տիկ. Քանանեանի կասկածը՝ նա դառը խնդաց կնոջ կարճամտութեան վրայ և փոքր ինչ բարկացած նկատեց, թէ լաւ կը լինի Վահանին այլևս տնից դուրս չտանել։

— Ա՜խ, ուստ կոտրուէր, ուստ կոտրուէր, չգնայի,—հառաչեց կինը ծնկներին խփելով։

— Այո՛, չպէտք է տանել,—կրկնեց պ. Քանանեանը մտազբաղ.—ինչպէս երևում է, զանազան տպաւորութիւններ ազդում են...

Տիկին Քանանեանը թուլացած նստեց բազկաթոռին։

— Բա ինչ պիտի անենք հիմա,—հարցրեց նա յուսահատ, գրեթէ հանգած ձայնով։

Պատասխանը մարդու համար պարզ էր.

— Պիտի տանը խնամենք, տեսնենք, մինչև մայիս... Յետոյ, ես կարծում եմ ամեն բան լաւ կը լինի. դժուարը մինչև մայիս է...

Տիկ. Ֆանանեանը մտածմունքի մէջ ընկաւ։

Եւ մարդ ու կին այդպէս լուռ, կիսախաւար սենեակում, մտածում էին երկար։

Բոլորից հանգիստ էր այդ գիշեր ինքը՝ Վահանը։ Նրա սենեակը լուսաւորուած էր փոքրիկ գիշերալամպով, որի թոյլ լոյսը հազիւ էր հասնում անկիւնները։ Վահանի դէմքը հանդիսաւոր և հաստատ ուրախ տեսք ունէր. ձեռը գլխատակին պառկած՝ նա հաճոյքով մտածում էր որ գտել է վերջապէս այն տեղը, ուր թագնւում է իր թշնամին և որտեղից միշտ սուրը ձեռին գալիս է և ուզում է իրեն սպանել։ Իր այդ թշնամին, նրա կարծիքով, թագնւում էր ցուցահանդէսում։ Նա եկել է այդտեղ պահւել, որպէսզի իրեն սպանի. բայց այդ նրան չի աջողւի... Եւ Վահանը հաճոյքով մտածում էր, թէ քանի երրորդ անգամն է ահա իր թշնամին փորձում է իրեն սպանել, բայց չի կարողանում. սկզբում միայն վիրաւորեց, յետոյ եկաւ Մոսկւա, հիմա էլ եկել է Թիֆլիս՝ պատկերահանդէսում թագնւել... Ու թւում էր Վահանին, որ իր թշնամին դիտմամբ թագնւել է ցուցահանդէսում, որ աւելի շատ մարդ սպանի, ինչպէս անցած օրն ուզում էր մօրն ու քոյրերին սպանել, բայց չկարողացաւ, որովհետև ինքը չթողեց։ Եկել է նա ամենից առաջ, ի հարկէ, իրեն սպանելու, իսկ իրենից յետոյ արդէն բոլորին... Եւ Վահանն ուրախութեամբ մտածում էր, թէ որքան լաւ է, որ ժամանակին գտաւ նրա տեղը։ Պէտք է ուրեմն շուտով ոչնչացնել նրան, որովհետև եթէ նա կենդանի մնայ—բոլո-

ՀՍՍՌ-Ամն ՍՍՌ
Ա. Մեշչանինի

ին կը սպանի, բոլորին... Եւ իր թշնամուն ոչնչացնելու մէջ Վահանը տեսնում էր մեծ հերոսութիւն և մեծ բարիք բոլորի համար։ Զուր տեղը անցած օրը չթողին, որ ինքը խեղդէր նրան։ Նա կարծում էր, որ առհասարակ իրեն միշտ խանգարում են այդ բանն անելու։ Խանգարում են ամենքը և, գլխաւորապէս, իր մայրը... Եւ Վահանն այժմ իր մէջ այնքան ոյժ էր զգում, որ դարձեալ հաճոյքով մտածում էր, թէ իր թշնամին եթէ հիմա գայ, ինքը շատ հեշտութեամբ կը խեղդի նրան։

Մէկ էլ յանկարծ Վահանին թւաց, թէ ոտի ձայն լսեց, ու նայեց դէպի դուռը. նրա դէմքը երկարեց վախից... Իր թշնամին՝ պատկերահանդէսի ինքնագոհ երիտասարդը, սուրը կողքից կախ՝ կանգնել էր դրան մօտ և քմծիծաղով նայում էր իրեն, ինչպէս մի երեխայի։ Կուրծքը հպարտօրէն դուրս ձգած՝ նա աչքերը փայլեցնում էր ուրախութիւնից և ժպտում, մի քինախնդիր ու չար ժըպիտով։ Վահանն զգոյշ նստեց անկողնում, յարձակւելու յարմար դիրք բռնեց և արհամարհանքով ու ատելութեամբ նայեց նրան։ Բայց թշնամին իր դիրքը բոլորովին չէր փոխում. նա շարունակում էր հեգնօրէն ժպտալ։

— Դու ինչո՞ւ ես եկել,—հարցրեց Վահանը երկաբլուութիւնից յետոյ։

Քմծիծաղից թշնամու շուրթերն աւելի ետ գնացին, բացելով նրա սպիտակ ատամների շարքերը։

Ինչո՞ւ ես ծիծաղում այդպէս,—հարցրեց Վահանը բարկացած։

Թշնամին չպատասխանեց։

— Դու դարձեալ եկել ես ինձ սպանելո՞ւ... Այո՞... Այս անգամ թշնամին գլուխը շարժեց.

— Այո։

— Դու ուզում ես սպանել և իմ ծնողներին։

Թշնամին նորից գլուխը շարժեց դրականօրէն։

— Եւ իմ քոյրերին։

— Այո՛... բոլորին։

Վահանը մերկ ոտքերը կախեց մահճակալից։

— Բայց ես քեզ չեմ թողնի,—ասաւ Վահանը հրապարտ.—ես քեզ աւելի շուտ կը սպանեմ, քան դու բոլորին։

— Տեսնենք,—ասաւ թշնամին և ձեռը տարաւ դէպի սուրը, բայց Վահանը ցատկեց տեղից և աղաղակեց.

— Не смѣй!

Այդ րոպէին սենեակի դուռը շրխկոցով բացւեց և ներս մտաւ տիկին Քանանեանը՝ սարսափած դէմքով։ Ամուսնու մօտից գալու միջոցին նա լսել էր որդու աղաղակը և կռահել, որ նրա ցաւը կրկնւում է։

Մօրը տեսնելով՝ Վահանն աչքերը թարթեց և շուրջը նայեց. թշնամին չկար. նա չքացել էր։ Այդ ժամանակ Վահանի կրծքից լսւեց մի լացախառն հառաչանք։

— Ա՜խ, մամա, դու դարձեալ խանգարեցիր ինձ։ Դու միշտ խանգարում ես ինձ...

Ու սկսեց լաց լինել նա՝ ձեռքն աչքերին դնելով։

Այլևս չհարցնելով թէ—ինքն ինչով է խանգարում Վահանին, տիկին Քանանեանն աշխատեց հանգստացուցիչ խօսքերով պառկեցնել որդուն։

Վահանը պառկեց, բայց չքնեց. նա շարունակ մտածում էր, ինչպէս ոչնչացնել թշնամուն, ինչպէս իրագործել իր այդ հսկայական ծրագիրը, որ ոչ ոք չխանգարի իրեն...

* * *

Առաւօտեան ձիւն էր գալիս խոշոր-խոշոր փաթիլներով։

Վահանը ելաւ մտազբաղ դէմքով. թէյի ժամանակ նա ոչինչ չխմեց. նախաճաշին նոյնպէս բան չկերաւ։ Մայրը,

արտասուքներն ու հառաչանքները հազիւ զսպելով՝ խնդրեց մի անգամ որև է բան ուտել. Վահանը մերժեց.

— Ինձ մի խանգարէք, մի խանգարէք,—կրկնում էր նա, առանց գլուխը բարձրացնելու, ձեռները վարտիկի գրպաններում, սեղանատանն անց ու դարձ անելով.— Մի՛ խանգարէք. տեսնում էք զբաղուած եմ...

Ճաշին նմանապէս Վահանը ոչինչ չկերաւ։ Տնեցիներին թւում էր թէ նա նիհարում է և աւելի է տխուր, քան երբևէ։ Եւ նրանք կարծում էին, թէ Վահանը տրխուր է գուցէ նրա համար, որ ձիւն է գալիս։ Իսկապէս, Վահանին հետևողը կը նկատէր, որ նրա տխրութեան պատճառը թերևս ձիւնն է, որովհետև սեղանատնից իր սենեակը և այնտեղից սեղանատուն անցնելով՝ նա շարունակ նայում էր թափւող ձիւնին և գլուխը շարժում յուսահատօրէն. թւում էր թէ ցանկութիւն ունի դուրս գալու, բայց ձիւնը խանգարում է։ Իսկ ձիւնը գալիս էր այնպէս հանդարտ ու հանդիսաւոր, որ կարծես մի սրբազան արարողութիւն էր կատարւում օդում, և այնպէս վարար, որ ասես կտրւելու միտք չունէր բնաւ. բակի ծառերը, ցանկորմները, պատշգամբի ճաղերը և տանիքները վաղուց ծածկւել էին զգած քոլքի պէս փափլիկ ձիւնով, որը դեռ էլի շարունակում էր իջնել թել-թել։

— Գնանք, Վահան, ձնագնդակ խաղանք, — դիմեցին քոյրերը ճաշից յետոյ, եղբօր տխրութիւնը ցրելու նպատակով։

Վահանը ձեռքը թափ տւեց միայն։

— Ինչո՞ւ, Վահան... Գնանք բալկօնում...

— Ինձ մի խանգարէք, մի խանգարէք,—կրկնեց նա բարկացած և շարունակեց անցուդարձը լուռ, ժամփոփ ու համաչափ քայլերով։

Երեկոյեան դէմ ձիւնը դադարեց, բայց Վահանը գունատ դէմքն աւելի լարուած ու մտածկոտ տեսք ստացաւ։

Գիշերը նա դարձեալ չքնեց. կրկին մտածում էր իր թրշնամուն ոչնչացնելու մասին։ Իսկ հետևեալ առաւօտ, թէյից յետոյ, նա, տնեցիների համար միանգամայն անսպասելի կերպով, վերարկուն հագնելով՝ ուզեց տնից դուրս գալ։

— Ո՞ւր, Վահան ջան, ո՞ւր,—կտրեց նրա առաջը մայրը միջանցքում.—ո՞ւր ես գնում այս ցրտին։

— Թող, մամա, թող,—նեղացաւ Վահանը դէմքը կնճռելով.—մի՞թէ դու ուզում ես որ ես մեռնեմ...

Այդ խօսքերն ասեցին այնպիսի խղճալի ձայնով, որ մայրը չիմացաւ ինչ անել։

— Ինչեր ես ասում, Վահան, ինչեր ես ասում. Աստուած ոչ անի,—ասաւ նա, ասես մի անսպասելի մեղադրանքից արդարանալով։

— Դէ, թող ուրեմն գնամ։

— Ո՞ւր։

— Ցուցահանդէս։

— Չէ, Վահան ջան. չէ-չէ-չէ... ցուրտ է կըմրսես. մի՛ գնա. չեմ թողնի. միասին կերթանք...

Եւ տիկին Ֆանանեանը որդու ձեռներից բռնած, կրծքից հրելով, սեղանատան բաց դռնից բօթեց նրան ներս՝ թիկունքը դռներին դիպցնելով։

Վահանը, որ մօրը հակառակելու սովորութիւն չունէր առհասարակ, այս անգամ ևս հաւակերպեց նրա կամքին և՝ անխօս, վերարկուն հանեց նորից. և այն ժամանակ, երբ մայրն ուզում էր կախել այն, յանկարծ նրա ծոցագրպանից ցած ընկաւ մի շողշողուն իր։ Դանակ էր։

Զարմանքից տիկ. Ֆանանեանի շուրթերը սեղմուեցին։

— Էս հացի դանակը քեզ մօտ ինչ գործ ունէր, Վահան ջան,—հարցրեց նա՝ դանակը երկու ձեռով բռնած՝ միջանցքից սեղանատուն մտնելով։

Վահանը իսկոյն չպատասխանեց։

— Ինձ մնա... դանդաղեց նա և գունատուեց։

Պարոն Քանանեանը, որ այդ ըռպէին՝ պէնանէն քթի կէսին դրած՝ լրագիր էր կարդում, յանկարծ, ահագին շարժումով, ձեռը ծնկանը խփեց յուզած և ակնոցը վերցրեց։

— Տեսնեմ, տեսնեմ,—ասաւ նա շտապ-շտապ, կարծես մի բան իմանալով։

Կինը դանակը մօտեցրեց մարդուն։

— Ա՛հ, դա երէկուայ սրիկայի գործն է անպատճառ, —գլուխը շարժեց պ. Քանանեանը բարկացած։—վերցրել է և, փոխանակ իր ջիբը դնելու, կոխել է Վահանի գրպանը։ Чертъ бери. Ես այդպէս էլ կարծում էի, որ նա գող պէտք է լինի...

Պարոն Քանանեանը ակնարկում էր իր մի տարօրինակ այցելուին, որ ահա երեք շաբաթ էր ինչ իրար վրայ՝ ամեն հինգշաբթի՝ գալիս էր խորհուրդ հարցնելու իր ստանալիք ինչ-որ մի խոշոր ժառանգութեան մասին և վերջը «փոխարինաբար» հինգ ռուբլի խնդրելով՝ հեռանում։

— Բայց մի՞թէ նա սեղանատնից անցաւ,—հարցրեց տիկ. Քանանեանը երկբայութեան մէջ։

— Կարծեմ,—ասաւ պ. Քանանեանը և աւելացրեց փոքը ինչ բարկացած.—Խնդրում եմ—աղախնին ասա, որ այլևս ներս չթողնի այդ սև ակնոցներով պարոնին։

Տիկին Քանանեանը կանգնած մտածմունքի մէջ ընկաւ։

— Ուրեմն քո կալօշներն էլ նա տարած կը լինի էլի՛,—ասաւ նա կասկածանքով։

— Շատ կարելի է...

Փաստաբանն իր խօսքն սկսեց այնպիսի պոռթկումով, որ տիկ. Քանանեանը հնարաւորութիւն չունեցաւ որդու պատասխանն իմանալու (մանաւանդ որ նա սովորականի պէս հօրից քաշուելով անցաւ իր սենեակը) բայց յետոյ

այնուամենայնիւ նրա սրտում մնաց մի ծանր տարակուսանք, թէ ինչպէս կարող էր դանակն իսկապէս ընկնել Վահանի վերարկուի գրպանը. եթէ գողն էր դրել, այդ դէպքում նա պիտի հագնէր և Վահանի վերարկուն. թէ՞ Վահանն էր իր գրպանը դրել. բայց ինչո՞ւ համար. դանակը Վահանի ինչի՞ն է պէտք... Եւ խեղճ կինը ոչինչ չէր կարողանում հասկանալ։ Այդ օրը, սակայն, մի բան պարզեց նրա հ...մար, որ Վահանին չպէտք է թողնել անից մենակ ելնելու։ Ուստի և սկսեց հետևել որդուն. ո՞վ է իմանում, կարող է յանկարծ Վահանն իրեն դուրս քցել, և փողոցում ի՞նչ ասես չի կարող պատահել։ Տիկ. Քանանեանն առանձնապէս վախենում էր «կրկնելուց»։ Խայտառակութիւն կը լինի, եթէ փողոցում օտարները տեսնեն իրենց որդու ցաւագարութիւնը։ Հիմա եթէ տասը գիտի, այն ժամանակ արդէն բոլորը կիմանան... Ու նա աղջկերանց ևս պատուիրեց՝ երբէք Վահանին մենակ դուրս չը թողնել տնից՝ եթէ պատահի որ ինքը գործով ուրիշ տեղ լինի։ Նոյնը պատուիրեց նաև աղախնին։ Սա, լսելով տիրուհուն, հառաչեց.

— Քոռանամ ես, քոռանամ,—և գոգնոցով աչքերը սրբելով՝ աւելացրեց.—Մի բան ասեմ տիկին, չնեղանաս... Լեզուս չորանայ, քար դառնամ ես... Չլի՞ Վահանի ցաւը խաչից է, տիկին... Եւ նա ուզեց պատմել գիշերը տեսած երազը, բայց մինչև կը պատրաստուէր այդ անելու, տիկին Քանանեանը, ուսերը տարակուսանքով վեր քաշելով, դուրս եկաւ խոհանոցից։

Իսկ Վահանը դարձեալ ոչինչ չէր ուտում, չէր քնում և քանի գնում նիհարում էր ու դառնում լուակեաց, ինքնամփոփ։ Զուր էին անցնում տնեցիների ջանքերը, պ. Քանանեանի համալսարանական ընկեր բժշկի (որ այժմ ամեն օր գալիս էր իրրև թէ տան բարեկամ) մտերմական խորհուրդները,—Վահանը ոչինչ չէր ուզում լսել։

Տեսնելով՝ չեն թողնում իրեն տնից ելնելու, նա յուսահատ մտածում էր, որ եթէ ինքը չշտապի—չէ՞ որ նա՝ թշնամին՝ կը գայ և այսօր կամ վաղը, քնած տեղը կը սպանի իրեն. յետոյ կսպանի միւսներին, և վերջը—քաղաքում ոչ մի մարդ չի թողնի։ Ա՜խ, ինչո՛ւ, ինչո՛ւ չեն հասկանում այս բանը... Ու երկար լալիս էր նա անխօս կամ, շրթունքները կրծելով՝ անցնում սենեակից-սենեակ։

Այսպէս տևեց երկու օր, իսկ երրորդ օրը կատարուեց այն, ինչից տիկին Քանանեանը վախենում էր այնպէս։

* * *

Վահանն այդ օրը տնից դուրս եկաւ այնքան անսպասելի և այնպէս ծածուկ, որ ոչ-ոք ոչինչ չնկատեց։

Առաւօտեան թէյից յետոյ, երբ հայրը գնաց դատարան, քոյրերը հօր առանձնասենեակը՝ շուռ եկած գրքերը կարգի բերելու, իսկ մայրը խոհանոց՝ աղախնին ճաշի համար խորհուրդներ տալու,—Վահանն, ինչպէս փախչող մի կալանաւոր, արագ-արագ հագաւ վերարկուն և, գողի նըման՝ թեթև քայլերով, մի շնչում բակի մուտքով իրեն գցեց փողոց։

Ցուրտ էր. չորս օր առաջ եկած ձիւնի մի մասը տակաւին մնացել էր անհալ. սառած գետինը թնդում էր կառքերի անցուդարձից. սառինքը ձիերի մռութից կախել էր երթէ թելեր. կառապանները հագել էին ոչխարի մորթուց խոր ձեռնոցներ։ Չնայած ցրտին, փողոցներում այնուամենայնիւ շատ մարդ կար. բոլորն անցնում էին վերարկուների օձիքն ականջներին քաշած կամ շարֆերով փաթաթուած, իսկ քաղաքային այգում, ուր չոր ծառերն ասես կուչ էին եկել ցրտահար, մի խումբ երեխաներ՝ կապտած քթով ու ձեռներով, ձիւնագնդակ էին խաղում՝ սառած օդն իրենց ծիծաղով լցնելով։

Վահանն այս բոլորին անուշադիր, ցրտին անպգայ, առաջ էր գնում շտապ-շտապ՝ շուտ-շուտ ետ նայելով, ինչպէս հետապնդող մի փախստական։ Նրա խոշոր աչքերի թախծալից հայեացքում դարձեալ հուրհրատում էր այն հիւանդագին բոցը, որ միշտ նիշում էր նրա ցաւի «կըրկնութիւնը»։

Ո՞ւր էր գնում և ինչի՞—դա նրա գաղտնիքն էր, որ չէր ուզում յայտնել ոչ-ոքի։ Կարծես մի անյայտ զսպանակից մղուած՝ սլանում էր նա փողոցով և ժամանակ առ ժամանակ աջ ձեռքով շօշափում վերարկուի ձախ ծոցագրպանը, կարծես մի բան ստուգելու համար։

Մի քանի աննշան փողոց ու փողոցակ անցնելով՝ նա դուրս եկաւ վերջապէս գլխաւոր փողոցը և քայլերը աւելի արագացրեց։ Այժմ նա գնում էր գրեթէ վազելով, ամբողջ իրանով առաջ թեքւած, հրելով մարդկանց և հրուելով նրանցից, և մոլորուն, ասես մի բան փնտրող հայեացքը միշտ հեռուն՝ դէպի առաջ՝ սևեռած։ Անցորդները՝ նրա փութկոտ շարժումներից հրւած, կանգ էին առնում մի վայրկեան և զարմանքով նայում նրա, այդ տարօրինակ երիտասարդի ետևից, որ «ներողութիւն» անգամ չէր խնդրում։ Երբեմն էլ նա խուսափում էր մարդկանցից, որ չլինի թէ իրեն խանգարեն։

Ճանապարհի կիսին նկատելով ծանօթ մի դէմք՝ նա, կարծես վախեցած, շեղեց ճամբան, անցաւ փողոցի միւս ափը և շարունակեց նոյն հապճեպ ընթացքը, մերթընդմերթ ձեռն էլի դէպի ծոցը տանելով։

Փոքր ինչ էլ գնալով՝ նա կանգ առաւ պատկերահանդէսի շէնքի առաջ և վերջին մի հայեացք նետելով իր շուրջը, հափ-շտապ, ինչպէս յարմար թագստոց գտած հալածական ընկաւ ներս։

Մարմարէ աստիճանների վրայ նա նորից ձեռքը տարաւ դէպի ծոցը։ Նրա ոտքերն սկսեցին դողդողալ։ Հայց

և այնպէս նա սանդուխքները բարձրացաւ ու դէպի սրահը նետուեց այնպիսի արագութեամբ, որ տոմսավաճառ կինն ստիպուած էր ձայնել նրա ետևից.

— Տոմսակ, պարո՛ն, տոմսակ...

Ինչպէս գործով շտապող մէկը—Վահանը ետ անգամ չնայեց և, դուռն աղմուկով բանալով՝ մտաւ ներս։

Ցրտի, թէ վաղ լինելու պատճառով սրահում այդ օրը այցելուները քիչ կային. մի քանի օրիորդներ՝ աղէսի մորթիներով, երկու ջահել տիկին և երեք պարոն, որ ծառայելու պատրաստակամութեան ժպիտը երեսներին, կանանց բացատրում էին նկարների նրբութիւնը։ Այդտեղ էր և հերթապահ նկարիչներից մէկը, այս անգամ հասուն հասակով մի մարդ, որի գլխի մազերի կէսը արծաթագօծ էին արդէն։ Որովհետև Վահանը ներս մտաւ դռների աղմուկով ու արտակարգ շփերթ ձևով—բոլորն ակամայ շրջեցին նրա կողմը և զարմացած իրար նայեցին, կարծես միմեանց հարցնելով թէ՝ «ո՞վ է այս դիւահարը»,—այնպէս այլայլուած էր Վահանի դէմքն այդ րոպէին։ Իսկ Վահանը, մտնելով ներս, իր հրաբորբոք հայեացքը պահ մի պտտեց սրահում, ապա, կարծես որոնածը գտնելով՝ նետուեց դէպի դիմացի պատը, ուր շողշողում էր մի մեծ ոսկեգոյն շրջանակ, իսկ նրա մէջ երևում էր մի երիտասարդ՝ մերկ սուրը ձեռին։ Դա հէնց ինքը նա էր, Վահանի թշնամին։

Մի րոպէ ևս—և Վահանը, ծոցից հացի մի դանակ հանելով՝ յարձակուեց նրա վրայ.

— Ահա՛. ա՛յ քեզ, ա՛յ քեզ,—կրկնում էր նա ատամները սեղմած։

Վախից օրիորդներն ու տիկինները ճչացին և նետուեցին դէպի դուռը. տղամարդիկ ապշած կանգ առան, իսկ հերթապահ նկարիչը վախուրած ելաւ տեղից և, չի-

մանալով ինչ անել, երկու քայլի վրայ երեք անգամ ետ ու առաջ գնաց։

Այս ամենը կատարուեց մի քանի ակնթարթում։

Երեք-չորս անգամ դանակը խրելով «Վրէժի» կտաւի մէջ, Վահանը պատռեց իր թշնամու կուրծքը և արտասանեց ցնծալի ձայնով, որ ասես ելնում էր նրա սրտի խորքից։

— Ահ, վերջապէս,—ու այս խօսքերի հետ ամբողջ հասակով փռուեց յատակին։

Կանայք սարսափած դուրս թռան սրահից, իսկ նկարիչը վազեց սպասաւորին կանչելու...

... Երկու ժամ որոնելուց յետոյ, տիկ. Քանանեանն ու մեծ աղջիկը Վահանին գտան պատկերահանդէսում։ Ենթադրութեամբ—հարց ու փորձից նաև պարզուել էր, որ Վահանն եկել է ցուցահանդէսի կողմը՝ մտել էին իմանալու։

Վահանը մեռած էր։ Նրա գունատ՝ անարիւն դէմքը, զարմանալի հանգիստ, պայծառ և հպարտ տեսք ունէր միաժամանակ։

Երբ Վահանին փոխադրեցին տուն, վշտահար հայրը չգիտէր ինչ անել։ Դիմելով բժշկին, որ եկել էր մեռածին քննելու, նա կրկնում էր շուտ-շուտ.

— Ա՜խ, բժիշկ, քաղաքը սպանեց իմ որդուն... Նա չէր մեռնի, նա կը փրկուէր, եթէ մայիսը շուտով գար...

ՍՏ. ՉՕՐԵԱՆ

*
* *

Կորուցել եմ ուղիները տենչերիս
Ոչ երգ ունեմ, ոչ երազանք, ոչ թախիծ,
Մի անթափանց քող է իջել աչերիս
Ասես օտար, անծանօթ եմ ինքս ինձ։

Կորուցել եմ ուղիները տենչերիս
Պարուրել է հոգիս մի նինջ անպատում
Հեգնանք, ժպիտ, լուռ սառել են շուրթերիս
Հիմա ես էլ, ոչ սիրում եմ, ոչ ատում։

Կորուցել եմ ուղիները տենչերիս
Էլ չեմ կանչում, չեմ աղօթում, չեմ լալիս,
Մի հեքէաթ է թուում օրերն անցեալիս,
Ասես ես չեմ, ես չեմ եղել երգելիս։

Կարոտել եմ, կարոտել եմ տենչերիս
Հին օրերիս կարոտին եմ կարոտել
Կարոտել եմ տառապանքիս, խաղերիս
Սիրուց խաբուած, խաբուած ու թաց աչերիս։

---

*
* *

Կուզեմ յաւէտ երկրպագես հմայքիս
Գերիս լինես, ինձ ծնրադիր աղօթես
Հլու խօսքիս, հլու մտքիս ու կամքիս
Ասուածուհիդ լինեմ դիւթես ու դիւթես։

Զրհնանան հմայքներս կանացի
Բոյր նազանքիս նոր բոյրերով միշտ արբեմ
Միշտ հմայուած գգւանքներովդ առնացի
Գինով լինի ասուածուհիդ սիրակէզ։

Արևի վառ ճաճանչներից էլ ժպտուն,
Բնութեան բիւր երանգներից էլ գունեղ,
Ծովերի ջինջ ծփանքներից էլ ցայտուն—
Նուրբ ու դիւթիչ լինի սէրը մեր բիւրեղ։

ԿԱՐՕՏ

Երբ դալկահար հեռաստանը կ'աղօտի,
Ես կը դիմեմ գիրկը լեռ ու արօտի
Հովերի հետ սիրտս մեղմիկ կ'աղօթի
Կըմրմնջայ թովիչ խօսքեր կարօտի։

Ու կը թրւայ թէ ինձ գրկել ես քնքոյշ
Հոգիս չունի էլ հեռաւոր տենչի ցաւ,
Ու կը թրւայ կարօտս հաճոյք էր անուշ
Տառապանքս մի երազ էր, որ անցաւ։

ՀԵԹԱՆՈՍԱԿԱՆ

Պատանիներ սիրում եմ ձեզ
Հուրը այրող ձեր աչերի
Համբոյրները ձեր խենթ ու հեզ,
Սիրուց անհագ, սիրուն գերի
Ձեր խելայեղ երթը սէրի,
Հիմը՝ ուղղած միշտ վեղ ու մեզ։

Ինչպէս ծովը փրփրադէզ
Դուք գերին էք խենթ հողմերի,
Ու մենք նաւակ հնազանդ ձեզ
Ձեր խենթ կամքին հարճ ու գերի
Օրօրւում ենք սուզւում անտես
Գիրկը խելառ կոհակների։

Ձեզ բոլորիդ սիրում եմ ես
Գգւանքներդ բազմապիսի,
Ով էլ լինէք ծնունդ պէս-պէս
Երկիրների, սառ հիւսիսի,
Թէ հարաւի տաք, սիրակէզ,
Սիրում եմ ձեզ, սիրում եմ ձեզ։

Արմենուհի Տիգրանեան



ՓՈՔՐԻԿ ԱՐՁԱԿ ԵՐԳԵՐ

Վերջապէս... արևը, արևը...
Պատուհաններս բացի.
Առաւօտը քաղցրօրէն սենեակս լեցուեցաւ.
Անձրևին տեղ լոյսի շիթեր կը կաթկթին տերևնե-
րուն վրայ.
Հեռաստանները սա մշուշ՝ որքան նման են ծովուն.
Որքան անրջալի է օրը, շողերով, ցոզերով լի.
Բզէզ, պզտիկ բզէզ, նեռս եկուր.
Քեզի հետ՝ բեր դուրսի լոյսէն, հովերէն, երազանք-
ներէն՝
Շիթ մը արցունք, շիթ մը ժպիտ.
Բզէզ քու պզտիկ երգդ երգէ ինձի։

---

* * *

Միակերպ, ընդհատ...
Անծանօթ ու անձրևոտ գիւղաքաղաքին վրայ,
Կը տարածուի զօղանջիւնը զանգին, ճերմակ եկեղեցիի,
Զօղանջիւնը զանգին...
Թախծոտ, յուսահատ, գուժկան, ինչպէս կը սեղմի
հոգիս.
Մայրիկ, հեռաւոր մեր տնակին մէջ
Մեղմօրէն կը փակուին աչքերդ...
Ու վերջին անգամ իմ անունս կուտաս,
Բազուկներդ կ'անշարժանան դէպի ինձի,
Մայրիկ...

---

* * *

Ի՞նչ կըլլար՝
Օտար այս փողոցներուն մէջ,
Ուրկէ տխուր ու դանդաղ կառքս կը սահի—
Այս օտար փողոցներուն մէջ
Յանկարծ յայտնուէիր դո՛ւ մայրիկ...
Ու ես, չի ճչայի բերկրանքէս,
Չի ցատքէի դէպի քեզի.
Այլ մեղմօրէն ժպտայի՝
Եւ օտար այս փողոցներէն,
Տրտում, կառքիս հետ, անցնէի...

---

* * *

Կապոյտին տակէն, արևով ու արևածաղիկներով ծորուն ճամբայէն, դուն կը քալէիր զարթ, զարթ գարունին պէս հերարձակ...

Կը վազէի ես եռևէդ, ստերիդ գերին, շարժումներդ սարսռուն, դէպի ժայռերը վերի, ժայռէն ցայտող՝ դէպի աղբիւրը վերի...

Հասա, բռնեցի, այնքան թախանձանքիդ հակառակ վերցուցի քեզ թևերուս, թևերուս վրայ գարունը ու արևուն տակէն տարի մինչև աղբիւրը...

Այն ատեն, իրար միացուցած ձեռքերդ, ջո՛ւր ուիր ինձի և թոյլ ուիր որ՝ հրահրուն շուրթերս իմ՝ ջուրին մէջէն հպին մինչև՛ ափերդ...

---

* * *

Այսօր աւելի՛, աւելի՛ կը սիրեմ քեզի...
Աշնան տերևները կը թափին.
Սարսուռներ երկինքէն կը ցանուին...
Աւելի՛ կը փարեմ կուրծքիդ—
Պաշտպանէ՛ զիս անձրևներէն ու մրրիկէն,
Խոստացի՛ր արտիս՝ գարունը վաղուան...
Աշնան տերևները կը թափին,
Իմ արևս, իմ երկինքս, ժպտա ինձի,
Այսօր աւելի՛ կը սիրեմ քեզի...

---

* * *

Ես քեզի գուլպաներովդ սիրեցի.

Ականջիդ իսկ չպիտի ըսեմ այս գիտեմ, որ ամօթ է այսպիսի բան խօսիլը։

Բայց երբ տեսայ սրունքներդ՝ հնադարեան հրաշալի սափորներու այնքան նման, թափանցիկ մեռաքսէ այդ գուլպաներուն տակ թաղուած...

Ես որքան ուզեցի շրթունքներս մօտեցնել և այդ սափորներուն խենթեցնող փրփուրներէն գոնէ մէկ անգամ, մէկ ումպ, խմեմ...

Զէ՛, այս մասին ես իսկ ալ չպիտի մտածեմ.

Ըսեր են՝ գիտեմ, որ ասիկա ամօթ է...

Ռաֆայէլ Զարդարեան

ԱԶԱՏՈՒԹԵԱՆ ԵՐԳԸ

Ինչպէս արծիւ, այդ երգը տարածեց իր լայն թեւերը։ Ամեն մէկի կրծքի տակ հնչեց նա։ Ցնցուեց այդ թմրած ժողովուրդը։ Դիւթական գաւազանի զօրութեամբ այդ երգը արթնացրեց նրանց դարաւոր քնից։

Հեռու բարձր սարերի վրայ ու խոր ձորերում, հեռու բռնակալի աչքերից, երբ լսում էին նրանք թափառական երգչի ազատութեան այդ երգը՝ զսպուած կատաղութեան և ուրախութեան արցունքներ էին քամում ու վրէժով լցւում։

Ոչ ոք չգիտէր, թէ որտեղից եկաւ այդ երգը. ոչ ոք չէր ճանաչում այդ երգի խիզախ երգչին, որի երգը գանգատ ու աղերսանք չէր, որի հնչիւնների մէջ չէր լսւում վշտի, յուսահատութեան ճիչը։ Այլ վրէժով էր սնուած ու թոյնով լցւած։

Ամեն մէկի հոգու մէջ այդ երգն էր բուն դրել և նրա արձագանքը թնդում էր ամեն մէկի կրծքի տակ։ Օր ու գիշեր նրա հնչիւններն էին ալեկոծում նրանց հոգիները։

Մայրերը այդ երգով էին օրօրում իրենց զաւակների քունը։ Երիտասարդ սիրահարը այդ երգն էր մրմնջում իր սիրած աղջկան։ Ծերերը, որոնք այլևս անզօր էին դրսի աշխատանքի, թիակով գոմը մաքրելիս, իրենց խռպոտ ձայնով, անատամ բերաններով, թաւ բեղերի տակից, այդ երգն էին մրմնջում։ Պառաւ կանայք, ճախարակի ներդաշնակութեամբ, կամ թել մանելիս, այդ էին երգում։

Այդ երգն էին երգում դաշտում մաճկալն ու հնձուորը։ Այդ էին երգում նախրապանն ու բանուորը։ Ազատ լեռնե-րի բարձունքից սկսած մինչև մութ գոմերում այդ երգն էր հնչում. երգը կար, իսկ բանաստեղծին չէին էլ փընտ-ռում. նրանք սիրեցին այդ անյայտ բանաստեղծին, որի երգը կար, իսկ ինքը չկար։ Համեստ ու խոնարհ քայլում էր նա իր ժողովրդի մէջ, գոհ, որ իր երգը հասաւ նպա-տակին և արձագանք գտաւ ամենքի սրտում։

Ժպիտը դէմքին նա քայլում էր՝ իր գաղտնիքը խո-ը թաղած կրծքի տակ, գոհ ու երջանիկ, որ իր սի-րած աղջիկը բախտաւոր է իր գրկում։ Որ միայն նա գիտէ, միայն նրան է յայտնի այդ գաղտնիքը և այդ մէկը նրա գրկումն է, իսկ գաղտնիքը երկուսի սրտում՝ թևերը կտրած թռչունի նման։

Սակայն քնած չէր բռնակալը։

Սկզբում նրանք ուշ չդարձրին այդ երգի վրայ։ Բայց քանի գնում, աւելի ու աւելի էին զգում երգի ոյժը։ Նրանք տեսնում էին, որ օր օրի վրայ յանդուգն է դառ-նում ժողովուրդը։

Այն ժողովուրդը, որին այնքան ստրկացած էին կար-ծում և որից այլևս չէին վախենում։

Մահուան պատիժ սպառնացին այդ երգը երգողին, իսկ բանաստեղծի գլուխը երեք հարիւր ոսկի գնահատեցին։

Օր օրի վրայ աւելի ու աւելի էր բորբոքւում սէրը աղջկայ կրծքում. նա հպարտ էր այդ սիրով։ Բայց ինչ-պէս աշնան տերև, դալուկ ու գունատ, նա դողում էր իր սիրածի գրկում։

Վախենում էր ինքն իրենից, որ անկարող լինի այդ

մեծ գաղտնիքը պահել կրծքի տակ, որը ինքն իրեն ուզում է դուրս թռչի. վախենում էր, որ քնած տեղը չբանայ գաղտնիքը։

Ինչպէս որդը կրծում է ծառի բունը, այնպէս էլ այդ գաղտնիքը ինչպէս մի ցեց կրծում էր աղջկայ սիրտը։ Զկար մէկը, որին հաւատար այդ մեծ գաղտնիքը։ Նա ճիգ էր գործ դնում, որ դուրս չգայ մարդկանց մէջ ու աղաղակի «ի զուր էք նրան ուրիշ տեղ փնտռում, ահա նա, ձեր բանաստեղծը, նայեցէք, նա ձեր մէջ է, ձերն է և ինձ է սիրում»։

Բայց նրա գլուխը գնահատուած է։

Եւ վախը կաշկանդում էր նրա լեզուն։

Ու հանգաւ նրա ժպիտը. նրա երջանկութիւնը փոխուեց անվերջ տանջանքների։ Գիշերները նա վախենում էր աչքերը փակել, ցերեկը դադար չունէր. վախից աչքին պատրանքներ էին երևում և սարսափից ճչում էր ու դողում։

Նա այլևս անկարող էր մի վայրկեան մենակ մնալ. լսողութեանը չարագուշակ ձայներ էին հնչում. աչքերի առաջ պարզ պատկերանում էր նա, աչքերը դուրս վիժած իրենց տեղերից, կապտած, լեզուն կախ, վիզը երկարած։ Ինքն է մատնել նրան, և նա կախուած է... սարսափած ճչում էր ու ուշաթափ թաւալուում գետնին։

Ոչ հմայող կանանց դեղ ու հմայքներ, ոչ սրբի դրուններ, ոչ զոհ, ոչ աղօթք, ոչինչ չէր օգնում. օր օրի վրայ մաշուում էր, հալուում, գունատ՝ ինչպէս աշնան հողմերից դողացող տերև։

Նա ծիծաղում էր անմիտ քրքիջով, լալիս, կամ անխօս, ինչպէս բրոնզէ արձան, հայեացքը մի կէտի մնում քարացած։

Մայր ու ազգական, սիրած տղայի փաղաքշանքն ու աչերը, ոչինչ, ոչ մի բան չկարողացան փարատել, մեղմել նրա վախի տանջանքները։

Նրա ետևից ուրուականի պէս սողում էր վախի ուրուականը՝ հեգնանքի անվերջ ժպիտը դէմքին։ Նրա վախից չռած աչքերին այլևս քուն չեկաւ, և ահա մի օր խելակորոյս դուրս պրծաւ փողոց, իրեն կրծող գաղտնիքը մէկին ասելու։

Նա մօտենում էր անցնող դարձողին, երդւեցնում նրան ամենասուրբ բանով, որ համբ չմնայ գերեզմանի պէս, երբ լսեն նրա անունը, որի գլուխը երեք հարիւր ոսկի է գնահատուած, և քրքջալով առաջ էր վազում, ամենքին ասում։

Նրան բռնեցին, բայց ուշ էր արդէն. գաղտնիքը ազատեց իր կապանքը և թռաւ, հասաւ բռնակալին։

Մռնչաց գազանն ու հրամայեց՝ ուր էլ որ լինի գըտնեն ու բերեն, որ իր աչքերի առաջ լեզուն դուրս պոկեն, ձեռները կտրեն, աչքերը հանեն և անգղներին կերակուր ձգեն։

Լուռ լացին բանաստեղծի վաղաժամ մահը։

Երգը լռեց։ Բոլորը վախենում էին այդ երգից։

Միմիայն նա էր, նա էր, որ չէր վախենում։

Մազերն ու ցնցոտիները հողմերին տուած, ինչպէս մի կենդանի բողոք, որ ծնւել է այդ չարատանջ ժողովուրդի դարաւոր տառապանքների մի հառաչանքից — խելագար թևեր առած թռչում էր տանիքից տանիք, գիւղից գիւղ, սար, ձոր. ամբողջ երկիրը ոտի տակ էր տալիս։ Հողմերին յանձնւած, հողմի արագութեամբ, նա մերթ այստեղ էր, մերթ այնտեղ։ Նրա քրքիջը հնչում էր գիշերւայ խաւարի մէջ, օրը ցերեկով, ամեն տեղ, ամեն ժամ և ա-

մեն մէկի կրծքի տակ վառում էր վրէժի հրդեհը։ Երկրի բոլոր ծայրերում հնչում էր խելագար աղջկայ երգը։

Մերթ քրքջում էր վայրի անմիտ ծիծաղով, մերթ լալիս դառնագին, մատներով հողը քանդում և գլխին ցանում ու երգում մեռած երգչի արգելուած երգը։

Ամենքը ճանաչում էին նրան և լալիս էին, լսելով նրա ամիտ քրքիջը ու բոլորի սրտերը մղկտում էր, տեսնելով իրենց սիրած բանաստեղծի սիրած աղջկան այդ դրութեան մէջ. անիծում էին բռնակալին, և վրէժը ինչպէս թունաւոր օձ վեր էր բարձրացնում իր գլուխը ու բարակ թունալից լեզուները դուրս հանած գալարւում էին, վշշում և սպասում յարմար առիթի, որ շանթեն բռնակալի դաժան սիրտը։

Պայթեց փոթորիկը։

Անգէն ժողովուրդը թագնւել էր թաւուտ անտառներում, անմատչելի լեռներում, քարանձաւներում։

Նապաստակները գլուխ առել, փախել էին այդ աւերմունքի երկրից, ուր ամեն բան սրի ու հրի ճարակ էր դարձել, ամեն մի բուռ հող արիւնով շաղախւել։ Թռչուններ չկային. բոլորը թռան այդ անիծւած երկրից, որի գետերը արիւնով էին ներկւած, որի օդը արիւն էր հոտում, որտեղ անթաղ դիակներ էին նեխւում և հրդեհի բոցերը լուսաւորում զազանացած մարդկանց դէմքերը։

Միմիայն գիշատիչ թռչուններն էին ոստոստում գարշահոտ դիակների շուրջը և բորենին իր արիւնաթաթախ դունչը անվախ ցոյց էր տալիս անմարդաբնակ, ամայի գիւղերում. շները, որոնք կարողացել էին կտրել կապանքները ու փախչել, ոտների մէջ քարշ տալով շղթաները, գիշերները ոռնում էին իրենց տէրերի ածխացած դիակ-

ների վրայ և քաղցից ու վախից կատաղած՝ թաթերով փորում դեռ տաք մոխիրը ու քամուն տալիս։

Օր ու գիշեր զէնքի ու կատաղած մարդ-գազանի ոռնոցն էր լսւում։ Ամբողջ երկիրը տնքում էր։ Հրճւում էր դժոխային քրքիջով մարդ-գազանը։

Ամբողջ երկիրը մի նեխած փոս էր, որտեղից գարշահոտութիւն էր խնկարկւում երկնքի երեսին։

Լեռան բարձունքին, ուր երբեմն թափւած էին բանաստեղծի անթաղ ոսկորները, գիշերւայ խաւարի միջից թնդում էր բարձրաձայն ապտակը ժողովրդի, ազատութեան յանդուգն երգը և խելագար աղջկայ արիւն պաղեցնող քրքիջը։

Իսկ ցածում, ինչպէս վայրագ ամեհի գազան, մռնչում էր դահիճների ոհմակը և գայրոյթից թաթերն էր կրծում։

Անտաչելի լեռան գագաթին արծւի նման բոյն են դրել այդ ժողովրդի անվեհեր զաւակները։ Մահը այլևս սարսափելի չէ նրանց համար։

Մի անգամ նա թափ է տւել իր թևերը և կամ այդ բարձունքից կը գահվիժւի դէպի անդունդը, չուզենալով այլևս ստրուկ ապրել, կամ ազատութեան երգը ազատ կը հնչի ազատ դաշտերում։

ՄԻՔ. ՄԱՆՈՒԷԼԵԱՆ

ՍԱՅԵԱԹ-ՆՈՎԱՅԻ ՎՐԱՑԵՐԷՆ ԵՐԳԵՐԻՑ

Թարգմանչի կողմից

Այս երգերը ես թարգմանել եմ վրաց բանաստեղծ Գրիշաշվիլու աշխատասիրութեամբ 1918 թ. լոյս տեսած Սայեաթ Նովայի վրացերէն երգերի ժողովածուից, ուր աշխատասիրողը կարողացել է աշուղի երգերից հաւաքել միայն 28 կտոր։

Այն պատկերաւորումները, գեղեցիկ և երբեմն յանդուգն համեմատութիւնները, ածականների այն իւրայատուկ և անսպառելի շտեմարանը, տարօրինակ, բայց դուրեկան ոճը, քաղցրահնչիւն և վարպետօրէն հիւսուած յանգերը, որոնք իրենց ճոխութեամբ ապշեցնում են Սայեաթ-Նովայի հայերէն «խաղերի» մէջ, վրացերէնում հանդէս են գալիս աւելի նուազ չափով։

Սակայն դրանով չի կորչում մեր սիրելի աշուղի վրացերէն «ասած» երգերի արժէքը. նրանց մէջ էլ, ամեն մի տողում, ամեն բառի մէջ հանդէս է գալիս տաղանդաւոր երգչի ոյժն ու կորովը. այնտեղ էլ ամեն խօսքի մէջ Սայեաթ-Նովան զգացնել է տալիս րեն։

Նկատի ունենալով այդ ժողովածուի արժէքը հայ գրականութեան համար, ես ձեռնարկեցի նրա երգերի թարգմանութիւնը, որով դիւրութիւն տուած կը լինեմ հայ գրասէրներին՝ ծանօթանալու բանաստեղծի օտար լեզուով գրած երգերին։

Սկզբում որոշել էի ամենայն հարազատութեամբ և բառացի վերածել այդ երգերը հայերէնի, բայց գործը ցոյց տուեց, որ բառացի թարգմանութեան դէպքում աչքաթող են արուում յանգերն ու վանկերը, որոնց տուժելը մեծ վիշտ կը պատճառէր Սայեաթ-Նովային և մեծ հարուած կը լինէր նրա աշուղական ոգու համար, մանաւանդ որ նպատակ էի դրել թարգմանել երգչի իւրայատուկ ոճով ու լեզուով։

Ուստի թարգմանութեան ժամանակ անհրաժեշտ համարեցի

որոշ բառեր (գլխաւորապէս ածականները) աւելացնել կամ պակասեցնել, համաձայնեցնելով տողի իմաստին, քան թէ յանգերին ճշտասել, մանաւանդ որ ինքը Սայեաթ-Նովան էլ յաճախ իմաստը զոհում է տողերի վերջաւորութիւններին։

Հնարաւորութեան սահմաններում ես աշխատել եմ աշուղական ձևերը պահել խաղերի մէջ (կրկնակի յանգ), բայց որոշ դէպքերում ցանկութիւնս տեղի է տուել անկարելիութեան և ակամայից մի փոքր շեղուել եմ։

Սեփական հայեցողութեամբ մտցրած բառերը ես վերցրել եմ էլի իր, աշուղի բառապաշարից, ինչպէս և առհասարակ թարգմանութեան համար համարեա բոլոր բառերը, դարձուածքները, ոճերը քաղել եմ աշուղի հայերէն գրքից։

Երբեմն վրացերէնում պատահել են բառեր կամ ոճեր, որոնց նմանը չեմ գտել հայերէն Սայեաթ-Նովայի մէջ. այդպիսի դէպքերում օգնութեան է հասել ինձ Թիֆլիսի բարբառը, կամ Հախվերդեանի «Սայեաթ-Նովային» կցած Թիֆլիսի բարբառի քերականութիւնը։

ԵՐԳ Ա.

Ի՞նչ կուլի եար մէ գամ մայինց մէր տուն գաս,
Վունցօր դամար[1]) մէր կտրեմէն գիվեր գաս,
Ծիծեռնակի պէս դռնեմէն դուս գնաս.
Զիմ ուզում վուր անմեղ տիղը ման կուգաս,
Բարկ[2]) էրեսըդ ամեն եադի շանց կուտաս։

Ամեն ծէգին ծագող արիւ ըլիմ իս,
Զիր հայեաթում տնկած մի ծառ ըլիմ իս.
Կացնով մի տայ, պէտք գուքամ, թող ըլիմ իս
Եար, քու դրան հարիվանը ըլիմ իս,
Բլքամ[3]) մէ ջէր[4]) ձիր տան նման մէր տուն գաս։

---

[1]) Լուսնեակ, [2]) Լուս, փայլուն, [3]) Գուցէ, [4]) Մի անգամ։

Մարթ ձեռնեմէդ շունչը բերնին չի մնայ,
Զիմ ուզում, վուր վրէս քեզնից պարտք մնայ.
Ինձ դաղիլը ըսկի էլ քիզ չի մնայ,
Եար, դիդարըդ[5]) անց կու կենայ չի մնայ,
Ատղի նման թէկուզ[6]) երգինք բարձրանաս։

Սայեաթ-Նովա, զար[7]) ու զարբաթի[8]) վրէն,
Խալաթի պէս գցէ ուսերի վրէն,
Վայ թէ մէքաշ փուտը դընի[9]) ջադիմէն[10])
Ճուրդ կու դառնամ չիմ հեռանայ դունէմէն,
Հողի նման ինձ տրորիս անց կենաս։

ԵՐԳ Բ.

Էշխեմէդ քու ղուլն[1]) իմ դարի, էլ եադ նոքարն ինչ իս անում.
Իմ թահար[2]) քիզ ծվ կու սիրէ, բէբափա[3]) խարն[4]) ինչ իս անում։

Հնդու թաքավորի տախտն իս՝ հին դիբայի նհալավոր[5]
Էրնէգ քի մոդ գըթընուողին,—նազ ծուցըդ լիքը մըշկավոր[6]).
Օսկէ տախտակնիրն սազում է մարմարիլոյի կոշկավոր[7]).
Պուճուր բիրթ իս, սիրեկան եար, գուղի դուռըն ինչ իս անում։

Բանցը սար իս, ձունով ծածկած վըրէդ մանիշակըն լիքն է.
Շիմշադի[8]) ծառ, նախշած ունքըդ անտառի պէս թանձրացիլ է.

---

[5]) Գեղեցկութիւն, [6]) Նոյնիսկ, եթէ, [7]) Դիպակ, [8]) Կերպաս, [9]) Զըհաւանել [10]) Տոհմ, ցեղ։

[1]) Սարուկ, [2]) Նման, պէս, [3]) Անհաւատարիմ, [4]) Ձիճու, որ ծծում է վարթի սիրտը, [5]) Դոշակ, [6]) Հնդկաստանի բոյս, որի պտուղների հիւթը անուշահոտ է, [7]) Դղեակ, [8]) Ծառի տեսակը։

Թիբաթվի[9]) բաղ ու բախչայ իս, բուլբուլը վրէդ երգում է.
Կոկոբ[10]) վարթ իս հեռից նուր բացված խարի պէս դոստն
ինչ իս անում։

Ա՛րի, ազիզ, էս աշխարքում մէկըմէկուց ձեռ չքաշինք.
Ծուցիդ անուշահոտ ռիհանն թաքուն իս ու դու
բաժանինք.
Էրնէկ կուլի վուր իս ու դու մէ օթախում մենակ ըլինք.
Լսէ, Սայեաթ-Նովի խուսքը, բացարած[11]) ջառն[12]) ինչ իս
անում։

ԵՐԳ Գ.

Գանա էնէնց սոված էլի վուր ուտելու համա էկա—
Քիզ իդ սոյբաթ[1]) էլի ուզում, մոդդ էդու համա էկա.
Ուզում իմ քի մոդ լուսացնիմ՝ ես գիշերու համա էկա.
Մոռացայ, չիմ կանում ասի... ինչոր բանի համա էկա։

Դուն թաքավուրական թագն իս՝ նաչար[2]) գլուխս
վունչիչումը.
Դիախ, զուքվիլ-զարթարվիլ իս դիբայումը, ատլասումը.
Դուն տաշած բրոլէ[3]) տախտակ իս, զար սանդալի[4])
փանջարումը[5]).
Էրէսըդ օսկէ հալիլա, քի մոդ ջանու[6]) համա էկա։

Էնդու համա թանդ հախ ունիս՝ դիպակ իս, ալ զարբաք
ու զար.
Խորասանի շըքար փոլադ, Հնդըստանի հին դալամքար.

---

9) Ցունիս (վրացերէն), 10) Կոկոն. 11) Կազմ ու պատրաստ, 12) Ջորք։

1) Սիրային խօսակցութիւն. 2) Դժբախտ, 3) Բիւրեղեայ, 5) Ծառի մի տեսակը Հնդկաստանում, որի փայտից պատրաստում է ազնիւ տեսակի կարասիք, 5) Պատուհան, 6) Հայելու լաւ տեսակի ապակի։

Հեռու տիղանց սովդագար իմ՝ դու Մարանդի զուքած բազար.
Զար-զարբաբի հախը չունիմ, քի մոդ խաժի[7]) համա էկա։

Իմ աչքի լուս, պարտք դի վրէս—շահի[8]) տիղըն լիզուս կուտամ.
Ազիզ գլուխս բարաթի տիղ, մէջլիսներու[9]) սափէն[10]) կուտամ.
Համաշա քու դուռը գուքամ, գըլուխս քիզ մատաղ կուտամ.
Ան սպանի, ան ումբրըս բախշի՝ քի մոդ էդու համա էկա։

Համան[11]) աշխարքըն մոդ ըլի՝ գովքիդ անիլն չի ըլի.
Ի՞նչ Հընդստան, ի՞նչ Փռանգստան քու դումանը[12]) վուրդի կուլի.
Էս խիղճ, բէչար[13]) Սայեաթ-Նովէն ամենի խոզճալուն կուլի.
Վիր կացայ Հալաբն անցկացայ, Ուրումէլու համա էկա։

ԵՐԳ Դ.

Ի՞նչ զարբաբ իմ, իս ինչ զար իմ, ինչ ատլաս իմ, գիդիս գանա.
Վարթ-մանիշակն ինձմէն հասրաթ[1]), ինչ քամի իմ, գիդիս գանա.
Սազը համաշա ձեռիս է, իս նօքար իմ՝ գիդիս գանա.
Ծնուղքըդ մալում ին արէ[2]), ինքըդ կի չը գիդիս գանա.
Բաս վարավուդ[3]) չիս արէ դուն, բաս վունչիչ չը գիդիս գանա։

Հիմի արի թարիփ անիմ[4]) աշխարքումը վունց ման էկայ.

---

[7]) Սպիտակ չներկուած, չասեղնագործուած գործուածք, [8]) Տոկոս, [9]) Խնճոյք, [10]) Ուրախութիւն, խրախճանք, [11]) Ամբողջ, [12]) Նմանը, համեմատը, [13]) Դժբախտ։
[1]) Կարօտ, [2]) Մալում անել—նկատել (սկր.), [3]) Նկատել (վրացեր.), [4]) Պատմել։

Լէյլու նման եարիս կորցրի՝ Մէջլումի պէս իս ման էկայ.
Բլբուլ իմ՝ վարթին պըտռեցի, անտառումն դիվեր էկայ
Վարթի նշանը չըգթայ դիփ անմիղ տիղն ման էկայ.
Շանց տըւի արիվ էրէսըս, իս էրած իմ, գիդիս գանա։

Էս իմ սըրտի դառը լեղին իմաց տւի Իրանէթին.
Արիվիլքին, արիվմուտին, թաքավուրին, ազգին փիրին [5]).
Էստու աւել ինչ զօռ ունիմ, կուսպանիմ ինձ հուրիա
կուղքին.
Էսքան էլ իլթիմազ [6]) կուլի, ավտա, դէդի մինուճարին,
Հալեցիր հալ ու մաշ արիր—իս շաքար իմ, գիդիս գանա։

Աշունքվա վուխտն հասիլ է, էլ իս ինչի յիդ կու մնամ
Էտէղ քու վարթն ասում է՝ կու մեռնիմ, ան սաղ կու մնամ.
Ինձ համա վուր լեղի չըլիս—շատ էրգէն ումբըր [7])
կունենամ.
Անգաճ արա՛, մատաղ իմ քիզ, էս գիշեր քի ժոդ կու մնամ.
Շուտ-շուտ կոսիս. «վի՛ կաց գնա՛», իս ղծնաղ իմ, գիդիս
գանա։

Սայեաթ-Նովէս գանգատավուր, ժէ սուր նիտ չիմ կանում
ճարի.
Ուզում իմ վուր սիրտս խուցիմ ու ժի թուր չիմ կանում
ճարի.
Ծուցիդ գոզալ Ջուխտ նըռների թաքուստըն չիմ կանում
ճարի.
Ո՞ւֆ, ցաւում է գլուխըս, սիրտըս ու մէ դիղ չիմ կանում
ճարի.
Բէրում իմ զարէ ծածկոցը—հանաքչի իմ, գիդիս գանա։

---

[5]) Ծեր, գլխաւոր, [6]) Աղաչանք, աղերսանք, [7]) Կեանք։

ԵՐԳ Ե.

Եմ՝ը, սրտեմէս չիմ խնայի հօքիս քիզ համա.
Սաղ աշխըրքի մալն[1]) ու փուղը, ազիզ, քիզ համա.
Հախով արած ճուրտն իմ, դուլն իմ ժէջլիս՝ քիզ համա.
Դաղեցիր եմ՝ը, էրած, անհալ, անտիս քիզ համա.
Ամառ, ձըմիռ տված ունիմ հօքիս քիզ համա։

Քու ջամալը[2]) լաւն է, գօզալ, քաշած[3]) սըրփէմէն.
Քարգա[4]) կարելումն անցկացար[5]) ուստաքարէմէն[6]).
Ջան, իշվում իս[7]) դուն համաշա սաղ աշխարքէմէն.
Քունըս փախչում է գիշիրը իմ թաց աչքէմէն
Վառ էշխէմէպ ջունուն[8]) էլաւ հօքիս. քիզ համա։

Մթնում պայծառ լուս իս տալի—փարոսի նման.
Սազում է զարէ շուրիրդ՝ զարբաթի նման.
Բօլօրվիլ[9]) իս լաւ իրիգվայ լուսնակի նման.
Սիրունաց ժէջ նամուսավուր չկայ քիզ նման.
Գօված խաղեր կօծիմ, կօսիմ, հուրիս, քիզ համա։

Սիրեկան եար, Մաջնունիդ հիդ ինչի խուօվ կացար.
Ծվ դիդից քիզ, վուր խելքէմէն էտէնց շըշմեցար.
Վա՛յ, իմ օսկէ անգին սրհաթ, ինչի փըչացար.
Սայեաթ-Նովի համա վունցօր վարթը բացվեցար.
Բլբուլ սարից դիվեր գուքայ՝ մայիս, քիզ համա։

---

[1]) Կարողութիւնը. [2]) Կերպարանք, [3]) Նկարած, [4]) Ձեռագործ, [5]) Գերազանցեցիր, [6]) Վարպետ, մեծ. [7]) Ցիշուում ես, [8]) Խելքամաղ, [9]) Լցուել ես. կուրուել ես։

ԵՐԳ Զ.

Էս հանգի սուտ, ըսկի չէի իմացել,
Եկայ տեսայ—դուռը բաց 'ի գիդացել։

Սուրմի [1]) համա ուզում իս օսկէ միլըն [2])
Քաթիբայիդ—Հայիջանի [3]) լալ [4]) ղիլըն [5]).
Անուշ հուտդ հէնց ա՝ միխակն ու հիլըն.
Ո՞վ էր տեհի էս վուխտըն քու քընիլըն.
Էրազումըդ, եար, ուր էիր գնացել։

Իս ալ ճիճու, իմ բաբաթը [6]) անգին ա.
Սերկևիլ իմ, շարթըն [7]) ծուցըդ ինձ բինա.
Խուփի նման ծածկուի, ջանըս տաքանա.
Մանիշակ իմ, տաքութէնիդ չիմ դիմնա.
Քի վարթ, ինձ կի կօնա [8]) էիր գիդացել։

Էրէխու պէս էդ ինչ ժին ու ժանգ [9]) ունիս.
Գէմու նման ծօվի մէջըն լանգ [10]) ունիս
Ինձ քնեցրու՝ թրիաք [11]) ունիս, բանգ [12]) ունիս.
Սայեաթ-Նովէմէն իփրօ [13]) շատ յանգ ունիս.
Դու զար բաղդադ [14])—ինձ ղուլ էիր գիդացել։

---

[1]) Անուշահոտ ներկ յօնքերի համար. [2]) Խողովակ, [3]) Թանկագին մեռաղների հայրենիքը (Պարսկաս.), [4]) Թանկագին ակն, [5]) Կոճակ, [6]) Տեսակը. [7]) Անհալ մեղը, [8]) Ծաղկեփունջ, [9]) Քմահաճոյք, [10]) Սրելու մի բան (իսկ թէ այստեղ ինչ մտքով է գործածւում պարզ չէ). [11]) Քնացնելու միջոց (խաշխաշ), [12]) Խլաբաֆօրմա, [13]) Աւելի, [14]) Մեռաքսէ թաշկինակ։

ԵՐԳ Է.

Բազի մարթ կայ Ջլիս անպիտք ու անզօր՝
Ղօչաղ մարթու ուժն ու զօռը կուփըտանի [1]).
Հարցնիս՝ Ջըբուում ժանգոտ դանակ էլ չունի.
Խօրասանի փօլադ թուրըն կուփըտանի։

Շատ մարթ էլ կայ՝ զուրկ է, չունէ մի բինա [2])
Կումըթնեցնի, սաղ օրը տուն չի գնայ.
Կօսէ՝ խուրմէն ու կաղինը մի գին ա.
Բաղը կեհա՝ հասած բալին կուփըտանի։

Մարթ կայ ծօվը կումըտանի նաւի պէս.
Գուրդը կուղքին կու էրէվնայ սիվի պէս.
Մարթ կայ անհալ դուսն է ննդած խիղճ, անտես.
Թէ տուն մտաւ՝ Ռոստոմ Զալին կուփըտանի։

Զոբանն ինչ կօնէ ալմաս, Ջավայիր.
Թաք [3]) համաշա նա ունենայ նուր պանիր.
Գլխի տակ քար, վուտին թազա տըրեխնիր.
Բէքթաբէգի քիրման շալըն կուփըտանի։

Խուզը ծառին վունց կանա դի՛ վեր գնա.
Նաքազ [4]) մարթը աշխըրքեմէն դուս գնա.
Սայեաթ-Նովէն վուր մէջիտում տուն գնա.
Զօղ [5]) է սիրում, դալմաղալը կուփըտանի։

---

[1]) Ըհաւանել, [2]) Տեղ, տուն, [3]) Միայն թէ. [4]) Անպէտք տմարդի [5]) Քէֆ։

ԵՐԳ Ը.

Զիրը վիկալ, վադ մարթութին չիմ ուզում.
Ամխրքումը մասխարութին չիմ ուզում,
Վադ խուսկի ասիլը բութին[1]), չիմ ուզում,
Բաւիա[2]) իմ քիզ. խայանութին[3]) չիմ ուզում,
Իս մէ խիղճ մարթ, թավադութին չիմ ուզում։

Արի արինըս մի վիթի դուն թասով,
Եաը, արած իմ լուս սուրաթիդ թանգ հախով
Մօղըդ գուքամ Իրանէթի ես ծէսով,
Պահի քի մոդ ինձ ատլասով ու խասով
Սիվ դէիրէն, քօբէն[4]), դութին չիմ ուզում։

Ազիզ, խուսկս սրտիդ աւտալուն ըլի.
Ղուտաշ[5]) դէյրիդ փէշն իմ բըրնելուն ըլի.
Գլուխըս ոտիդ տակին շաղ տալուն ըլի.
Բաղըդ՝ բախչիս կուղքին շինելուն ըլի.
Մէչտիդ դօբա[6]), բաժանութին չիմ ուզում։

Անց է կացել վուխտըդ, ախ, Սայեաթ-Նովա,
Էլ ինչ կօնիս «ախ ու վախ» Սայեաթ-Նովա,
Համան կօսին «չորցած բաղ», Սայեաթ-Նովա,
Ո՞ւր իս գնում, եկ միր թաղը Սայեաթ-Նովա
Աղն ու հացըդ, ախպէրութին չիմ ուզում։

Թարգմ. Գր. Գրիգորեան



---

[1]) Միր ահաը, [2]) Հաւատարիմ, [3]) Անհաւատարմութիւն, դաւաճանութիւն, [4]) Շրջազգեստի փէշի ժապաւէնը, [5]) Թանկագին գործուածք. [6]) Ճանկապատ

ԱՐԵՒԵԼՔ

1.

Կը քայլես օրօր-շօրօր, թեթեւոտ եղնիկ ես դու.
Մայիսի վարդի նման, հովի պէս մեղմիկ ես դու.
Զորս գիշեր մէկ տեղ էինք, Գիւլիստանն ինչեր տեսաւ...
Այս առտուն յոգնած մի քիչ, քչիկ մի դեղնիկ ես դու։

2.

Թէ մարդկանց դիւան նստեմ՝ ինձ դայլան ու բարձ կուտան.
Ընկերներս ամենք մէկէն քո մասին ինձ հարց կուտան.
Աշուղներ գովքըդ կերգեն, Ջաննաթի փերին ես դու,
Կը կարծեն եարըդ ես եմ՝ ինձ պատիւ ու վարձ կուտան։

3.

Քեզմէ զատ երկրի վրայ գեղանի փերի չկայ,
Մարմարէ մարմնիդ վրայ ոչ մի բան թերի չկայ,
Ողջ մարդկանց ճամբուդ վրայ կոխ կուտաս, անփոյթ կերթաս,
Ոչ մի մարդ ինձի նման նազանքիդ գերի չկայ։

4.

Քո կուրծքը ճերմակ կաթ է, անուշ սեր սառած վրան,
Մի ջուխտակ վախկոտ հաւքեր կը դողան թառած վրան.
Մօտեցայ սառած սերին, որ մի քիչ համտես ընեմ,
Անսիրտ ես, խեղճուկ աղջիկ, պինդ քօղ ես առած վրան։

Ազատ-Վշտունի

„ԽՐՈՆԻ ԿԵՕՐԸ

I.

«Մի գրող, որին ոչ ոք չի ճանաչում և...»։

Ահա այսպիսի տապանագիր ունի նրա գերեզմանաքարը. էլ ուրիշ ոչ մի խօսք, ոչ մի բառ և ոչ մի թիւ չէք կարող գտնել նրա անշուք շիրիմնաքարի վրայ։ Ուրիշ, սովորական մահկանացուների պէս չէ նրա գերեզմանաքարը, որի վրայ կարդաք մեռածի ծննդեան և մահուան թւականը, նրա անունն ու ազգանունը, նրա պաշտօնն ու գործերը և կամ թէ՝ ինչ հիւանդութիւնով ու պատահարով է մեռել։ Չէ, իզուր էք այդպիսի յիմարութիւններ որոնում նրա գերեզմանաքարի վրայ։ Որ կողմն էլ դարձնէք նրա տապանաքարը, ինչպէս էլ որ շրջէք, միայն ու միայն կը կարդաք հետևեալ խօսքերը. «Մի գրող, որին ոչ ոք չի ճանաչում և...»։

Կարիք չկայ նրա անունն ու ազգանունը գրի առնել, որովհետև հաւատացած եմ, որ ձեզանից և ոչ մէկը լսած չի լինի նրա անունը, բայց եթէ շատ էք փափագում լսել, ես կասեմ. դրանով ոչինչ չեմ կորցնի։

Նրան կոչում են Խաչիկ Խաչիկեան։ Նա միջահասակ, կլոր դէմքով, լայն ճակատով, բարի և միամիտ արտայայտութեամբ մի ծերուկ էր։ Նրա գլխի մազերը ամբողջապէս ճերմակել էին, իսկ ճաղատութիւնը պատկառանք էր ազդում մարդուս։ Նա շատ ժլատ էր, որովհետև ամուրի էր։ Նա արդէն թեքւել էր դէպի արևմուտք, իսկ

նրա կէսօրը անաղմուկ, միալար և անարդիւնք էր անցել։ Առանձնութեան մէջ նա յաճախ յիշում էր իր անպտուղ օրերը, բայց արդէն ուշ էր, շատ ուշ...

Նա մեռաւ ուղիղ յիսուն և մէկ տարեկան հասակում և ոչինչ չթողեց իր ետևից, ոչ յիշատակ, ոչ ժառանգ և ոչ էլ հարստութիւն։

Նրա կեանքի պատմութիւնը շատ անպաճոյճ է. նա ինքն էլ էր այդ խոստովանում և ոչ ոքից չէր թաքցնում։ Նա միաժամանակ մտադիր էր իր կեանքի պատմութիւնը գրի առնելու, սակայն ձեզ հաւատացնում եմ, որ նա մեռաւ առանց մի տող գրելու։

Երբ Խաչիկ Խաչիկեանը վերջացրեց միջնակարգ դըպրոցը՝ արդէն քսան և մէկ տարեկան էր. այդքան ուշ աւարտելու միակ պատճառը չքաւորութիւնն էր։

Ամեն ամրան, երբ գաւառական քաղցած վարժապետներն ու վարժուհիները հեղեղում էին քաղաքի յայտնի հրապարակներն ու փողոցները և շարունակ գանգատւում իրենց անշնորհակալ պաշտօնից, Խաչիկ Խաչիկեանի դէմքը մռայլւում և յուսահատութիւնը ծիծաղում էր նրա վախկոտութեան վրայ. հենց այդ պատճառով էլ նա որոշել էր հեռու մնալ գաւառից ու վարժապետութիւնից։

Ճիշտ է. քաղաքում ապրելը գերադասելի է գաւառից, բայց որ համապատասխան գործ չես կարող ճարել, ի՞նչ պիտի անես. քաղաքում ապրելու համար կամ գործակատար պէտք է լինես կամ հաշւապահ և կամ թէ վաճառական, իսկ Խաչիկ Խաչիկեանը ոչ էս էր, ոչ էն։ Որովհետև Խաչիկեանը վճռել էր անպայման քաղաքում ապրել, դրա համար էլ առանց ժամանակ կորցնելու սկսեց յաճախել հաշւապահական կուրսեր և մի փառաւոր օր դարձաւ հաշւապահ։

Սակայն ինչպէս մեզանից շատ շատերը, այնպէս էլ նա բախտաւոր ատղի տակ ծնւողներից չէր. նա շատ, դէս

ընկաւ, դէն ընկաւ, բազմաթիւ վաճառականների ու գործարանատէրերի դռները մաշեց, բայց ոչինչ դուրս չեկաւ, և Խաչիկեանը մնաց անգործ։ Այդքան թափառումներից յետոյ միայն մի տեղ նրան պաշտօն տուին, սակայն երբ իմացան, որ նա իտալական եղանակով հաշուապահութիւն չգիտէ, իսկոյն դուրս արին։

Այդքան անյաջողութիւնները նրան չէին կարող վրդովեցնել, քանի որ նա վճռել էր անպայման քաղաքում ապրել։

Մի առաւօտ, նա ծոյլ-ծոյլ վեր ելաւ անկողնից, չբկամութեամբ լւացւեց, տանտիրուհու ինքնաեռից թէյի համար տաք ջուր վերցրեց, միւս օրւանից մնացած հաց ու պանիրը բերաւ սեղանի վրայ, վերցրեց առաւօտեան նոր ստացւած լրագիրը՝ սկսեց կարդալ ու նախաճաշել միաժամանակ։

Չնայած, որ նա քաղաքական այս ու այն հոսանքին չէր պատկանում, բայց այն լրագիրը, որին բաժանորդագրւել էր՝ համարւում էր ձախակողմեան կուսակցութեան կիսապաշտօնական օրգան. եթէ Խաչիկեանը փող և պաշտօն ունենար՝ աջակողմեան օրգանին էլ կը բաժանորդագրւէր, որովհետև սիրում էր բանակռիւները կարդալ։ Լրագիրը նրա համար այն էր, ինչ որ գինին հարբեցողի՝ իսկ ծխախոտը ծխողի համար. առանց լրագրի ընթերցանութեան նրա նախաճաշը անհամ էր անցնում։ Երկուշաբթի և տօների յաջորդ օրերը, երբ թերթերը լոյս չէին տեսնում, ստիպւած էր հին, փոշոտւած, լրագրի համարներ կարդալ և այդ նրա համար շատ դժւար էր։ Այդպիսի օրերին նա անւանում էր «անանկութեան և անպտուղ օրեր»։

Լրագրի բաժիններից Խաչիկեանին շատ էին դուր գալիս Լրատուն, Ոստիկանականը, Դատաստանականը և յայտարարութիւնները։ Այս չորս «կարևոր» բաժիններից

զատ, նա միւս բաժինների վրայ շատ թեթև աչքով էր նայում, իսկ առաջնորդողն ու «Գաւառական կեանքը» երբէք չէր կարդում. «Գաւառական կեանք» խորագիրը կարդալիս՝ նրան թւում էր, թէ իրեն զօրով տանում են վարժապետութեան և սոված են թողնում։

Այդ առաւօտը, երբ Հրատուն, Ոստիկանական և Դաղաստանական բաժինները կարդալուց յետոյ անցաւ յայտարարութիւններին, թերթի հենց առաջին երեսի վրայ գեղեցիկ, աչքի ընկնող շրջանակի մէջ նա կարդաց այսպիսի մի յայտարարութիւն.

«Թերթիս գրասենեակի համար հարկաւոր է մի փորձուած կառավարիչ, որ պէտք է ծանօթ լինի իտալական եղանակով հաշւապահութեանը»։

Կարդալով յայտարարութիւնը՝ թերթը նրա ձեռքից ընկաւ, որովհետև «իտալական եղանակով» բառերը խոշոր տառերով էին շարուած։ Մի քանի րոպէ տևող ապշութիւնից յետոյ, նա ինքն իրեն հաւաքեց և սկսեց խելագարի պէս ձեռքով-ոտքով շարժումներ անել և ինքն իրեն խօսել. նա գիւտ անողի պէս յանկարծ մեխւեց յատակին՝ աչքերը ուղիղ մի կէտի յառած։ Այդ դրութեան մէջ երկար չմնաց. նա հագաւ վերարկուն, դրեց անգլիական՝ կոտրն ընկած վաճառականի գլխարկը և վերցնելով սեղանի փոքրիկ հայելին՝ սկսեց ուշի-ուշով դիտել իր դէմքը։ Շատ քնելուց նրա աչքերը ուռել էին և դէմքը բութ արտայայտութիւն ունէր. շրթունքների վրայ մնացած հացի և պանրի փշրանքները սրբեց, աջ ձեռքով ուղղեց մաշուած և կեղտոտ փողկապը և, դէմքին մի քանի ծամածռութիւններ անելով, հայելին վայր դրեց ու դուռը կամաց բանալով գողի նման դուրս սողաց։

Խաչիկեանը այնքան էր՝ տարուել «ընդունել-չընդունելու» հարցով, որ չէր զգում, թէ ոտքերը ինչպէս է փոխում և ո՞ր փողոցն է հասել։ Այդպիսի անրջային դրու-

եանթ մէջ՝ նա գլուխը ամուր խփեց հեռագրասիւնին և սթափուեց։ Նա իսկոյն նայեց ետ ու առաջ՝ տեսնելու համար, թէ իրեն ոչ ոք չնկատեց և երբ տեսաւ, որ քաղաքապահ ոստիկանը ծիծաղում է, ինքն էլ ծիծաղեց։

— Երբեմն ինձ էլ է այդպիսի բաներ պատահել,— ասաց ոստիկանը,—բայց ես երբէք գլուխս սիւներին չեմ խփել, այլ ուղիղ մարդկանց կրծքին. անցեալ օրը քիթ ու բերանս շիփ-շիտակ խփեցի մի կնոջ ծծերի մէջ տեղը. ես ներողութիւն խնդրեցի, բայց նա դէմքը խոժոռեց ու անցաւ։

— Բախտաւոր մարդ էք,—պատասխանեց Խաչիկ Խաչիկեանը և շփելով ճակատը շարունակեց ճամբան։ Հասնելով խմբագրատան առաջ՝ նա կանգ առաւ, մի անգամ ևս ձևեց-չափեց իր ասելիքը, սերտեց քաղաքավարութեան ձևերը և երբ ամեն բանով իրեն պատրաստ զգաց՝ աստիճաններով բարձրացաւ։

Խմբագրատան սանդուխի կեղտոտ աստիճաններն անգամ նրան բարի, ազնիւ և մարդասէր էին թւում. նրան մի բան վատ թւաց, որ խմբագրատանը դռնապահ չկար, որից կարելի լինէր նախօրօք տեղեկութիւններ հաւաքել այն մարդու բնաւորութեան մասին, որին ինքը պիտի ներկայանար և այն մասին, թէ առհասարակ ինչպէս է խմբագրատան կարգ-կանոն ու սովորութիւնները։

Զուզելով երկար սպասել, նա գողավարի դուռը բացաւ, ներս մտաւ ու կանգնեց նախասենեակում դրած հագուստի կախարանի մօտ, մի րոպէի չափ սպասեց... Բայց այն կասկածը, որ կարող են գրպանահատ կարծել՝ նրան հրեց դէպի դիմացի դուռը ու նա ակամայ ներս մտաւ։ Այնտեղ, ուր նա մտաւ, փոքրիկ, հազիւ երկու սեղան պարտակող սենեակ էր։ Սեղանի առաջ նստած էր փայլուն ճակատով, ալեխառն մազերով, մօտ քառասունրհինգ տա-

րեկան մի պարոն, որ և՛ ծխում էր, և՛ սրբագրում։ Նա այնքան էր տարված աշխատանքով, որ երբէք գլուխը չբարձրացրեց ներս մտնողին տեսնելու համար։

— Էս ա պրծայ,—ասաց նա, ներս մտնողին գրաշար կարծելով և սրբագրութիւնը շարունակելով։

«Մեր գիւղում աղջիկ շատ են փախչում. համարեա Աստուծոյ օր աղջիկ են փախչում, նամանաւանդ երիտասարդները աղջիկները իրենց կամքովն են փախչում»։

Այս տողերը կարդալիս սրբագրիչը մի քանի անգամ գլուխը շարժեց, բերանը չփչփացրեց և ինքն իրեն ասաց.

— Այսպիսի թղթակցութիւն կը գրեն. այսպէս հայերէն կը լինի՞. սա ինչ խայտառակութիւն է. սրա համար է, որ թերթը միշտ ուշանում է։ Այս ասելով, սրբագրիչը գրչի մի քանի հարուածով անդամահատեց թղթակցութիւնը և այսպէս գրեց.

«Գաւառական կեանք»

«Մեր գիւղը Կովկասի ամենայետընկած գիւղերից է. ունի 67 տուն. բացի ինձանից, բոլորն էլ անգրագէտ են. երբ ես գիւղից բացակայում եմ՝ խեղճ գիւղացիները իրենց նամակները հարևան գիւղումն են կարդալ տալիս։ Այսպիսի լուսաւոր դարում մեր գիւղը դեռ դպրոց չունի»։

— Այս էլ գնաց,—ասաց սրբագրիչը, մի քանի անգամ կարդալով իր գրած թղթակցութիւնը։

Մի կողմ դնելով «Գաւառական կեանք»-ի սրբագրութիւնը, նա վերցրեց առաջնորդողը։

Խաչիկեանը արագիլի նման անձայն, անծպտուն դեռ կանգնել էր. նա շատ գոհ էր զգում, որ սրբագրիչը իրեն դուրս չի անում։

Սրբագրիչը սկսեց կարդալ առաջնորդողը.

«Ուրագանի նման կանցնեն մեր կեանքի դուալիզմն ու

դիսաօնանսը և մեր կեանքի սադրանքի պանորամանները կընկնեն իրենց պերամիդի բարձրութիւնից, իսկ կեանքի էւոլիւցիան անյեղլիօրէն առաջ կընթանայ»։

Այս տողերը կարդալիս սրբագրիչը մերթ խմբագրի ձեռագրին էր նայում, մերթ սրագրում. եւրոպական բոլոր բառերը մի քանի անգամ էր համեմատում, որ չլինի թէ որև է սխալ սպրդի, որովհետև նա լաւ գիտէր, որ դա ոչ գաւառական թղթակցութիւն է և ոչ էլ խրոնիկա։

— Ըհը, պրծայ,—ասաց նա, գրիչը վայր դնելով և կարծեցեալ գրաշարին նայելով։—Ի՞նչ էք կամենում պարոն,—ասաց նա զարմանքից աչքերը չռելով,—ներեցէք որ ձեզ սպասեցնել տի, կարծելով թէ մեր գրաշարն էք։

— Ո՛չինչ, ո՛չինչ,—պատասխանեց Խաչիկեանը,—խնդրում եմ դուք էլ ներողամիտ լինէք, որ ձեզ անհանգստացնում եմ. ես ուզում էի ձեզ հետ երկար խօսել։

— Բայց ինչի՞ մասին,—հարցրեց սրբագրիչը։

— Դուք այսօր յայտարարել էիք, որ ձեզ կառա...

— Կառավարչի պաշտօնի մասին հա՞,—ընդմիջեց սրբագրիչը։

— Այո՛, այո՛. ես եկել եմ այդ մասին խօսելու,—պատասխանեց Խաչիկ Խաչիկեանը։

— Այդ մասին դիմեցէք գրասենակ և հրատարակչի հետ խօսեցէք, որովհետև դա նրա գործն է,—ասաց սրբագրիչը՝ գլուխը քորելով և յօրանջելով։

— Ո՞րն է գրասենեակը։

— Ա՛ջ թեի վրայ։

Խաչիկեանը խոր գլուխ տուեց, նորից մի քանի անգամ ներողութիւն խնդրեց և մատի ծայրերի վրայ քայլելով, դուրս եկաւ ու դուռը ծածկեց։ Նա չմտաւ գրասենեակ, այլ շնչարգել հազիւ իրեն փողոց գցեց և կանգնեց խմբագրատան դիմացի ծառի մօտ։ Բաւական եր-

կաը սպասելուց յետոյ, որոշեց տուն վերադառնալ, սակայն այդ որոշումը չիրագործեց, որովհետև սրբագրչի սիրալիր վերաբերմունքը նրան ընդունելու յոյս էր ներշնչում։

Մինչ Խաչիկեանը այսպիսի տատանման մէջ էր, եկաւ խմբագրատան ծառան և հատարձակօրէն ներս մտաւ։ «Օտանպայման խմբագրատան ծառայողներից կը լինի»—անցաւ Խաչիկեանի մտքով և բարձր բղաւեց.

— Է՛, պարոն, ներողութիւն, մի՛ բոպէ։

— Ի՞նչ է,—ասաց ծառան կանգնելով սանդուխի կէսին։

— Դուք խմբագրատա՞ն էք ծառայում։

— Էստեղ եմ ծառայում, բա՛ս։

— Ի՞նչ գործ էք անում,—հարցրեց Խաչիկեանը մեղմ և սիրալիր ժպիտով։

— Ի՞նչ էք ուզում որ, բաժանո՞ղդ էք ուզում գրել։

— Ո՛չ։

— Բա ի՞նչ։

— Թերթում կարդացի, որ ձեզ կառավարիչ է հարկաւոր։

— Յետոյ ի՞նչ։

— Ես կառավարիչ եղել եմ,—ասեց Խաչիկեանը։

Այդ լսելով, ծառան նայեց Խաչիկեանի կօշիկներին, որոնք ներկի երես չտեսնելով իսպառ ճերմակել էին, դիտեց նրա մաշուած գրպաններով և օձիքով վերարկուն, մի հայեացք ձգեց նրա գլխարկին և իր մտքում նրան համեմատութեան դնելով իրենց ակնոցաւոր և վերջին տարազով հագնուած կառավարչի հետ՝ ասաց.

— Դու էդ գործը կարո՞ղ ես անել որ։

— Կարող եմ անել,—պատասխանեց Խաչիկեանը աղերսական տոնով, միաժամանակ հաւատացած լինելով, որ իր ընդունել-չընդունելու հարցը դրանից էլ է կախուած։

— Ֆրանսերէն գիտէ՞ս որ,—հարցրեց ծառան։

— Ո՛չ, մի՞թէ հարկաւոր է ֆրանսերէն գիտնալ։

— Բաս ասում ես կարող եմ անել. մեր կառավարիչը համ ֆրանսերէն գիտէր, համ ռուսերէն, համ էլ գերմաներէն։ Ափսո՛ս, նա շատ լաւ մարդ էր։

— Իսկ ինչո՞ւ դուրս արին։

— Դուրս արին. ո՞վ դուրս արաւ որ, նա ամսական 75 ռուբլի ռոճիկ էր ստանում, յետոյ ասաց, որ շինեն 100, չաւելացրին, նա էլ չմնաց։ Է՛յ, ափսո՛ս, ափսո՛ս,—կրկնեց ծառան,—նա շատ լաւ մարդ էր. խմբագրատանը ինչ որ անում էինք, ձէն չէր հանում. մի անգամ ինձ չոռ չի ասել, բա՛ս, էդպէս կառավարիչ կը լինեն։

Խաչիկեանը ուզում էր ասել, որ ինքը լաւ կառավարիչ կը լինի և ոչ մի ձայն չի հանի, ինչ որ կատարուի խմբագրատանը, բայց ամաչելով այդ մտքից՝ հարցրեց.

— Այդ գործի մասին ո՞ւմ կարող ես դիմել։

— Մեր աղային. էլ ո՞ւմ կարող ես տեսնել որ. գործը նրանից է կախուած. նա որ ուզենայ՝ ինձ էլ կը վռնդի, խմբագրին էլ, բայց նա քեզ չի ընդունի, չէ՛, էդ կօշիկներով չես կարող ներս մտնել։

— Աղան այժմ խմբագրատա՞ն է,—հարցրեց Խաչիկեանը։

— Նա էսպէս շուտ կը գա՞յ որ. նա կը գայ, է՛, ժամը 11-ին, 12-ին։

— Իսկ մինչև ե՞րբ կը մնայ խմբագրատանը։

— Էդ էլ բան եղա՞ւ. ինչքան ուզեց, էնքան կը մնայ. նրա կամքով չի՞։

— Մօտաւորապէս եմ ասում։

— Ը՞նչ մնայ մինչև ժամը երկուսը, երեքը, էդպէս։

— Ներեցէք որ ձեզ նեղութիւն եմ պատճառում,—ասաց Խաչիկեանը,—ինչ տեսակ մարդ է ձեր աղան։

— Է՛, ես խօ չեմ կարող ասել, մարդ է էլի՞, կը

գաս կը տեսնես. ես հիմա գործ ունեմ,—ասաց ծառան և բարձրացաւ աստիճաններով։

Հենց որ ծառան գնաց, Խաչիկեանը նայեց իր վերարկուին, շալւարին և ապա դուրս եկաւ խմբագրատան բակից ու դիմեց կօշիկները սրբողին։

Ուղիղ ժամը 12-ին նա խմբագրատան նոյն կեղտոտ աստիճաններով բարձրանում էր վեր։ Այս անգամ նա սրահում չսպասեց, այլ բաց արաւ աջ թևի վրայ գտնւած սենեակի դուռը և ներս մտաւ։

Այստեղ դէմ առ դէմ նստել էին երկու պարոն, որոնք, կռացած գրասեղանների վրայ, խորասուզւած գրում էին։ Խաչիկեանի բարևին նրանք չպատասխանեցին և այդ բանը շատ վատ ազդեց նրան։ Դրանցից տարիքոտը, որ նստել էր մեծ գրասեղանի առաջ՝ քարտուղարն էր, իսկ երիտասարդը՝ փոխ-խմբագիր կամ աւագ աշխատակից. նրանց լուրջ և խոժոռ դէմքերը սարսափ էին ազդում Խաչիկեանին, և նա այն տպաւորութիւնն ստացաւ, որ իրենից առաջ այդ երկու պարոնները կուռել էին և իրար մի լաւ ծեծել։ Խաչիկեանը ընդունելու յոյսը կտրեց և ուզում էր դուրս գնալ, բայց ամաչում էր. նա երկար սպասեց և մտածում էր այն մասին, թէ ինչպէս սկսի՝ «ներեցէք պարոններ», թէ՞ «յարգելի հրատարակիչ և խմբագիր» ասի։

Մինչ Խաչիկեանը մտածում էր այդ մասին, երիտասարդը գլուխը բարձրացրեց և դիմելով քարտուղարին ասաց.

— Կարծեմ կովկասեան ազգաբնակչութեան մասին իմ կազմած ստատիստիկան յուլիս ամսին է տպւած, չէ՞։

— Չեմ յիշում,—պատասխանեց քարտուղարը,—առանց գլուխը բարձրացնելու,—բայց մի բան գիտեմ, որ տաճկահայերը ստատիստիկա չեն սիրում։

Դարձեալ տիրեց լռութիւն։ Խաչիկեանը իր ներկայութիւնը զգացնել տալու համար սկսեց դիտմամբ հազալ

և կոկորդը մաքրել։ Քարտուղարը մի րոպէ ընդհատեց իր աշխատանքը, գրպանից հանեց ծխախոտը, ցուցամատով և բթամատով յարդարեց պապիրոսը, վառեց լուցկին ու սկսեց ծխել և ունգածակերից ծուխը դուրս թողնել։ Խաչիկեանը այդ բոլորը ուշադրութեամբ դիտում էր, երբ քարտուղարի հայեացքը հանդիպեց նրա հայեացքին։

— Ո՞ւմն էք սպասում, պարոն,—հարցրեց քարտուղարը։

— Ներեցէք, պարոն հրատարակիչ,—դողալով ասաց Խաչիկեանը,—ես կարդալով ձեր թեր...

— Հրատարակչի՞ն էք ուզում տեսնել. խնդրեմ, դիմեցէք գրասենեակը, ձեզ ցոյց կըտան,—ընդմիջեց քարտուղարը և առանց լսել ցանկանալու գլուխը խոնարհեց գրասեղանի վրայ ու դարձեալ սկսեց աշխատել։

Խաչիկեանը այդտեղից դուրս գալով, միջանցքում հանդիպեց ծառային, որ մատուցարանով թէյ էր տանում գրասենեակ։

— Աղան եկե՞լ է,—հարցրեց Խաչիկեանը։

— Եկել է, բա՛ս, ի՞նչ է, ուզում ես տեսնե՞լ։

— Ի հարկէ, ի հարկէ, խնդրեմ իմացնէք։

— Էս րոպէին։

Խաչիկեանի սիրտը սկսեց բաբախել. նրան թւում էր, որ անպիտան ծառան իրեն բամբասում է հրատարակչի առաջ, խորհուրդ է տալիս, որ իրեն չընդունեն։ «Եթէ ինձ չընդունեցին՝ դրա միակ պատճառը իմ կեղտոտ արտաքինն է»,—մտածում էր նա և մտքում հայհոյում ծառային, որ այդքան ուշանում է։ Վերջապէս ծառան երևաց և ձեռքով դրական նշան արաւ. Խաչիկեանը հետևեց նրան, բայց ծառան նրան կանգնեցնելով ասաց.

— Վերարկուդ հանի։

Խաչիկեանը հնազանդուեց և ապա հետևեց ծառային։

II.

Այն սենեակը, որտեղ աշխատում էր Թերթի հրատարակիչը, երեք դուռ ունէր, երկու պատուհան և ամբողջ խմբագրատան մէջ միակ սենեակն էր, որի յատակը զարդարուած էր մի մեծ գորգով։ Սենեակի մի դուռը բացուում էր սրահում, միւսը՝ գրասենեակում, իսկ երրորդը՝ քարտուղարի և աւագ աշխատակցի սենեակում, որտեղից կարելի էր անցնել խմբագրի սենեակը, որի դուռը միշտ փակ էր և ընդունելութիւններն արգելուած։ Որովհետև իրենք մտնում և հրատարակչին խանգարում էին, դրա համար էլ հրատարակիչը փակել էր սրահում և քարտուղարի սենեակում բացուած դռները։ Այսպիսով, հրատարակչին տեսնել ցանկացողները ստիպուած էին գրասենեակով անցնել, իսկ գրասենեակը մի մեծ դահլիճ էր, որ ոչ փոստի էր նման, ոչ տպարանի, ոչ դեղատան և ոչ էլ մաքսատան, այլ պարզապէս մի մեծ սենեակ, ուր ոմանք խօսում էին, ուրիշները ծիծաղում, շատերը վիճում, իսկ փոքրամասնութիւնը նստած աշխատում էր։

Ծառայի առաջնորդութեամբ Խաչիկեանը մտաւ հրատարակչի սենեակը. հրատարակիչը նստած գրում էր և Խաչիկեանի բարևին չպատասխանեց։

Թէև հրատարակիչը վաթսունից-վաթսուն հինգ ամեռ էր տեսել, բայց դեռ առողջ էր և կենդանի ինչպէս քսան տարեկան երիտասարդ. նա գեղեցիկ էր և պարթև. նրա արծաթաթել մազերն ու թաւ յօնքերը վեհութիւն էին արտայայտում. նա բարձրահասակ էր ու թիք, ճակատը լայն էր ու բաց, իսկ նրա բնաւորութեան մէջ խրոխտութիւն և համարձակութիւն կար. և այդ առաջ էր եկել այն բանից, որ նա հարուստ էր, ունևոր. թէ ինչպէս էր նա ընկել աղքատ գրողների և ժուրնալիստների շրջանը, այդ պատմութիւնը Խաչիկեանին սկի չէր էլ հետաքրքրում։

— Ի՞նչ էք ուզում,—հարցրեց հրատարակիչը։

Խաչիկեանը պահ մի լռեց և մի քանի անգամ թուքը կուլ տալով ասաց.

— Ձեր թերթում կարդացի, որ գրասենեակի կառավարիչ է հարկաւոր. ես կարող եմ այդ պաշտօնը կատարել։

— Ո՞ր տեղ էք ծառայել։

Խաչիկեանը մի անծանօթ վաճառականի անուն տուեց և ապա շարունակեց.

— Ես այդ պաշտօնը կը կատարեմ քիչ վարձատրութեամբ և հաւատարմութեամբ։

«Քիչ վարձատրութեամբ» խօսքերը հրատարակչին շատ դուր եկան։

— Հաշուապահութիւն գիտէ՞ք։

— Այո՛։

— Իտալակա՞ն եղանակով։

— Դժբաղդաբար ո՛չ։

— Ի՞նչ դպրոց էք աւարտել։

— Միջնակարգ։

— Իսկ ինչո՞ւ վարժապետութիւն չէք անում։

— Երեխաներ դաստիրակելու մէջ ինձ թոյլ եմ զգում։

— Հաշուապահ կամ կառավարիչ լինելը վարժապետութիւնից էլ դժուար է,—ասաց հրատարակիչը՝ բարձրաձայն ծիծաղելով։

Տիրեց լռութիւն։

— Էլ ուրիշ ի՞նչ պաշտօն կարող էք կատարել։

— Ամեն բան յանձն կառնեմ, միայն թէ պաշտօն լինի։

— Բանկի դիրեկտորութիւն յանձն կառնէ՞ք,—ասաց հրատարակիչը, այս անգամ ծիծաղելով և ոտքի կանգնելով։

— Վատ պաշտօն չէ,—նոյնպէս ծիծաղելով պատասխանեց Խաչիկեանը, որ մի քիչ համարձակութիւն էր ստացել։

— Շատ լաւ, սպասեցէք, ես ձեզ մի պաշտօն գտնեմ։ Այս ասելով հրատարակիչը դիմեց դէպի խմբագրի սենեակը։

Խաչիկեանը յաղթանակ տանող զօրականի նման ձեռքերը ծալեց կրծքին և սկսեց մտածել. նա իրեն և՛ վատ էր զգում, և լաւ։

— Գիտէք ինչ, կառավարիչը արդէն վարձած է, իսկ դուք ուշացել էք,—ասաց հրատարակիչը,—ես խմբագրի հետ խօսեցի ձեր մասին. մեր խրոնիկեօրը զինուորագրութեան պատճառով գնում է, այնպէս որ, եթէ յարմար էք գտնում և եթէ կարող էք, այդ պաշտօնը կատարել՝ յանձն առէք։ Վարձատրութիւնը ի հարկէ...

— Ո՛չ, ո՛չ, այդ մասին մի խօսէք,—ընդմիջեց Խաչիկեանը,—ինչ որ էլ տաք՝ ես գոհ եմ, որովհետև սիրում եմ ծառայել ազգիս և մարդկութեան։

Հրատարակիչը Խաչիկեանին հաւանեց միայն նրա համար, որ Խաչիկեանը ֆինանսական ժուժկալութիւն ունէր, այսինքն քչով գոհացող էր։

— Հա՛, դէ որ էդպէս է,—շարունակեց հրատարակիչը,—վաղը այս ժամին կը ներկայանաք խմբագրին. նա ձեզ հետ կը խօսի և ձեզ կը փորձի։ Այժմ ազատ էք։

Խաչիկեանը մի քանի անգամ շնորհակալ եղաւ և իսկ գլուխ տալով դուրս եկաւ։

Ուրախութիւնից նրա ոտքերը գետին չէին առնում. նա թէև քայլում էր փողոցում, բայց նրա գլուխը դեռ հրատարակչի սենեակումն էր։ Փողոցի առարկաները, որ առաջ նրա վրայ վատ էին ազդում, այժմ լաւացել և սիրելի տպաւորութիւն էին թողնում. ճերմակ գոգնոցով և երկայն

մահակով դռնապահները, որ նրա մէջ կոպտութեան զգացմունք էին առաջ բերում, այժմ մեղմ, քաղաքավարի և կրթուած էին թւում, մի խօսքով, ամեն ինչ նրան նոր, քաղցր և հաճելի էր երևում։

— Վաղը խմբագիրը լինձ պիտի փորձի, բայց ի՞նչպէս և ի՞նչ կերպով պիտի փորձի,— մտածում էր նա ու ոչ մի գրական եզրակացութեան գալ չէր կարող։ Այսպէս մտածելով, Խաչիկեանը առանց ճաշելու վերադարձաւ իր սենեակը և առանց հանելու ձգեց իր փայտէ մահճակալի վրայ, աչքերը փակեց ու սկսեց վերյիշել այն բոլորը, ինչ որ կատարուել էր այդ օրը։ Խաչիկեանը քնեց ու ընկաւ երազային լայն և ընդարձակ աշխարհը։ Նա զարթնեց երեկոյեան ժամը 7-ին, ճիշտ այն պահին, որ պահին նա սովոր էր զարթնել։ Թէ ի՞նչ երազներ տեսաւ Խաչիկ Խաչիկեանը, այդ մասին նա ոչ ոքի ոչինչ չի ասել, այսքանը պարզ է միայն, որ երբ զարթնեց, ի սկզբանէ վեր թռաւ տեղից, հաւաքեց իր ստացած լրագրերի բոլոր հին ու նոր համարները և սկսեց ուշի-ուշով կարդալ «Լրատուն»։

Խաչիկեանը անդամահատում էր լուրերը, նորից էր միացնում, նորից քանդում, ուշադիր զննում էր, թէ ի՞նչպէս և ի՞նչ ձևով է գրուել այս կամ այն մի ջադէպը, նախադասութիւնները կա՞րճ են, թէ երկար, լուրերի մէջ միտումաւորութիւն կա՞յ, թէ՞ ոչ, այս և նման մանրամասնութիւններով վերջացրեց բոլոր համարների «Լրատու» և «Ոստիկանական» բաժինների ընթերցանութիւնը։ Այդ անելուց յետոյ, նա սկսեց ինքն իրեն լուրեր հնարել, գրել, ջնջել, նորից կազմել և այդպէս անվերջ։

Հետևեալ օրը, ճիշտ որոշեալ ժամանակին, Խաչիկ Խաչիկեանը խմբագրատան կեղտոտ սանդուխով կրկին բարձրանում էր. երբեմն նրա մէջ չար նախազգացումներ էին ծնւում, երբեմն էլ տատանուող հաւատքը յոյսի ջահով

լուսաւորում էր նրա միամիտ և մռայլ սիրտը. նա համոզուած էր, որ յաջողութիւնը կախուած էր խմբագրի մի խօսքից, նրա դրական մի շարժումից, իսկ խմբագիրը բարի և ներող կը լինէր դէպի Խաչիկեանը, այդ նրա համար հանելուկ էր։ Ամենավատ մտապատկերը, որ որսորդի պէս հալածում էր նրա նապաստակի սիրտը, դա քարտուղարի և փոխ-խմբագրի մռայլ, խոժոռ և անհիւրընկալ դէմքերն էին։

— Եթէ դրանք այդպէս են,—մտածում էր նա,—ապա խմբագիրը ի՞նչպէս պէտք է լինի։ Այստեղ Խաչիկեանը կանգնում էր, որովհետև քանի հեռուն էր գնում, այնքան սարսափը պատում էր նրան։

Խմբագիրներին նա պատկերացնում էր այսպէս. քըչախօս, խստապահանջ, ծանրաբարոյ, ճաղատագլուխ, մօրուքով և կնճռոտ ճակատով։ Այն խմբագիրը, որին պիտի ներկայանար Խաչիկ Խաչիկեանը, այդ բարեմասնութիւններով օժտուած մէկն էր. միայն մի բանում նրա դրութիւնը ճիշտ չէր, որ վերջինս ակնոցաւոր էր և ենթաճակատը զուրկ էր կնճիռներից։

Խաչիկեանը զգուշութեամբ դուռը ծեծեց և ականջ դրեց խմբագրի «համեցէք»-ին։

— Մտէք,—լսեց խմբագրի ձայնը։

Խաչիկեանը ներս մտաւ և երկիւղածութեամբ կանգնեց խմբագրի առջև։

— Մի րոպէ սպասեցէք, խնդրեմ,—ասաց խմբագիրը և սկսեց կարդալ իր նոր դրած առաջնորդողի վերջին պարբերութիւնը, որ դուրս չէր եկել այն, ինչ որ մտածել էր։

«Եւ վերջապէս մեր հակառակորդները թող լաւ իմանան, որ Ազգային իդէալը և կեանքի էւոլիւցիան կօնտրաստներ են։ Հենց օրինակ վերցնենք մեզ. ի՞նչ ենք մենք և ո՞ւր ենք գնում... Սակայն թողնենք այդ, քանի

որ այժմ չի կարելի այդ խնդիրները պարզաբանել։ Միայն մի բան կասենք մեր հակառակորդներին, որ նրանք գրչակներ են, հրապարակախօսական գաճաճներ, որոնք եթէ «ընկնեն ցեխը, ցեխը կը կեղտոտեն»։

Վերջացնելով առաջնորդողի ընթերցումը, խմբագիրը ուզում էր ստորագրել, բայց մտաբերելով, որ դա յօդուած չէ՝ գրիչը ձգեց սեղանի վրայ և երկու ձեռքով աչքերը տրորեց։

— Հա՛, ես մոռացայ,—ասաց խմբագիրը, նայելով Խաչիկեանին,—ինչ էիք ուզում ասել։

— Երէկ հրատարակիչը իմ մասին ձեզ խօսել է,— պատասխանեց Խաչիկեանը հազիւ լսելի ձայնով։

— Այդ պարոնը դուք էք, հա՞։

— Այո՛, ես եմ։

— Է՛, ռուսերէն գիտէ՞ք։

— Այո՛, գիտեմ։

— Հայերէնում ինչպէս էք։

— Լաւ եմ։

— Եւրոպական ուրիշ լեզուներ գիտէ՞ք։

— Ո՛չ։

— Խրոնիկեօրը մի քիչ աչքաբաց պէտք է լինի, բայց դուք, ինչպէս տեսնում եմ, շատ էք ամաչկոտ ու խամ։

— Ո՛չինչ, կը վարժուեմ. դա սովորութիւնից է կախուած։

— Երբևիցէ այդ պաշտօնը կատարո՞ւել էք։

— Ո՛չ, առաջին անգամն է։

— Ա՛յ, տեսնո՞ւմ էք. մարդ մի քիչ ծանօթ պէտք է լինի գործին, որ ազգը չտուժի դրանից։

— Ի սէր ազգութեան ես կաշխատեմ պաշտօնս լաւ կատարել. իսմ ազգին թշնամի չեմ որ։

— Դէ լա՛ւ, օրինակ մի լուր կազմէք տեսնենք,— ասաց խմբագիրը, երթևեկելով։

— Ի՞նչ նիւթի մասին, — ասաց Խաչիկեանը քննութիւն տուող տաս տարեկան մանուկի պէս դողալով։

— Եթէ ես նիւթ տամ, էլ ձեզ ի՞նչ կը մնայ։

— Գրե՞մ, թէ՞ բերանացի ասեմ։

— Ի հարկէ պէտք է գրել, — ասաց խմբագիրը.— խնդրում եմ գրեցէք պարզ, խոշոր և ընթեռնելի, որ գրաշարները հեշտութեամբ շարեն։

Խաչիկեանը դողալով նստեց խմբագրի սեղանի առաջ, վերցրեց գրիչն ու սկսեց գրել.

«Ինչպէս յայտնի է, մեր տաղանդաւոր խմբագիրը դատի տակ էր «Մենք և նրանք» վերտառութեամբ առաջնորդողի համար. երէկ, հոկտեմբերի 6-ին, առաւօտեան ժամը 9-ից սկսած, զինուորական շրջանային դատարանում քննւում էր նրա գործը։ Նրան պաշտպանում էին երդւեալ հաւատարմատարներ Գերասիմ Թադէոսեանը և Մատթէոս Պարտիզպանեանը, իսկ մեղադրում էր դատախազ Իվան Եակովլևիչ Բօնդերէնկօն։ Դատը տևեց մինչև ցերեկւայ ժամը 4-ը և դատարանը տւեց հետևեալ վճիռը. «Փակել թերթը և խմբագրին ենթարկել 3000 ռուբլի տուգանքի, իսկ չվճարելու դէպքում՝ երեք ամիս բերդարգելութեան»։

— Գեցցէ՛ք, — ասաց խմբագիրը, — շատ լաւ է, շատ գոհ եմ, բայց պէտք է իմանալ, որ դա վերաբերում է «Դատաստանական» բաժնին, այդ չի կարելի «Խրոնիկայում» զետեղել. կը ծիծաղեն մեզ վրայ։

Դա առաջին յաղթանակն էր, որ Խաչիկեանը տարաւ. այդ բանից յետոյ նա համարձակութիւն ստացաւ և սրբելով քրտինքը սկսեց դարձեալ գրել.

«Երէկ, ցերեկւայ ժամը մօտ երեքին, մեր աւագ աշխատակից Գէորգ Մոլոզեանը, խմբագրատնից դուրս գալով, ընկաւ № 45 աւտոմոբիլի տակ և ուղեղի ցնցում ստանալով մեռաւ։ Նրա դիակը տարուած է քաղաքային

անատոմիական բաժանմունքը։ Թաղման հանդէսի մասին կը յայտարարուի առանձին։ Մեր շնորհալի աշխատակիցը թողնում է մի կին, երկու երեխայ և մի պառաւ մայր»։

— Չէ՛ չէ, այդ չեղաւ,—ասաց խմբագիրը՝ ձեռքը բարձրացնելով,—վերջին երկու տողերը միանգամայն աւելորդ են և վատ հայերէն. դուք գրում էք թէ՝ «թողնում է մի կին, երկու երեխայ և մի պառաւ մայր»։ Այդ դուրս է գալիս, որ մէկը կարող է թողնել մի քանի կին և մի քանի մայր։ Բայց լա՛ւ, ընդունենք, որ այդ էլ ճիշտ է, այդ լուրն էլ յաջող է, սակայն չէ՞ որ դա նոյնպէս չի վերաբերում խրոնիկային. դա «Ոստիկանական» բաժնի վերաբերեալ նիւթ է. մենք հօ չե՞նք կարող թերթը դարձնել շիլափլաւ. ամեն մի նիւթ իր բաժինն ունի, իր տեղն ունի. տեսնում էք, մարդ պէտք է ծանօթ լինի գործին,—վերջացրեց խմբագիրը։

Նկատողութիւնը խիստ էր. Խաչիկեանը լողում էր քրտինքի մէջ և նրան թւում էր, որ ամեն ինչ վերջացած է, քննութիւնից կարւած։

— Ապա՛ փորձեցէք իսկական խրոնիկայի լուր գրել,—ասաց խմբագիրը մեղմացած։

Խաչիկեանը անգիր արած լուրերից մէկը մտաբերեց ու գրեց.

«Չնայած որ կառքերի սակագինը աւելացւած է, բայց անզգամ կառապանները սահմանուած սակագնով չեն գործում, այլ պահանջում են այնքան, որքան նրանց քէֆն է ուզում. սակագին չիմացողներին ուղղակի կողոպտում են։ Անցեալ գիշեր, քաղաքագլուխը դումայի նիստից տուն վերադառնալով, կառապանը նրան չճանաչելով, սահմանուած սակագնից աւել է վերցրել. կառապանի վրայ արձանագրութիւն է կազմւած՝ նրան պատասխանատուութեան ենթարկելու համար»։

— Այո, այո, հենց այդ է, որ կայ. դա իսկական լուր

է, որը միայն կարելի է գտնել խրոնիկայում,—ասաց խմբագիրը,—բայց մի փոքրիկ նկատողություն. առհասարակ ընդունված է, որ խրոնիկան թերթի ոչ տենդենցիոզ բաժինն է, որտեղից ոչ մէկին չի կարելի հայհոյել, թէկուզ քարերը տրաքեն. խրոնիկա ասածդ օրւայ չոր ու ցամաք պատմությունն է, որ պէտք է ուղղակի արձանագրել. դուք գրում էք. «անզգամ կառապաններ». դա երբէք թոյլատրելի չէ, որովհետև խրոնիկան ոչ «Մամուլ» է և ոչ էլ հրապարակախոսական յօդված, այլ խրոնիկան՝ խրոնիկա է։ Ուրեմն այդ մէկ, երկրորդը այն է, որ պէտք է աշխատէք որքան կարելի է կարճ, կտրուկ և հետաքրքրական գրել և «Լրատուի» բաժնում ոչ մէկին չհայհոյել, հասկացաք. վաղւանից սկսեցէք աշխատել. ես յոյս ունեմ, որ հրատարակչին իմ առաջ ամօթով չէք անի։ Հա, մոռացայ ասելու, որ ես վաղը երեք օրով մեկնում եմ Բագու՝ այնտեղի գրական-հասարակական գործիչների հետ մի քանի հրատապ խնդիրների մասին խորհրդակցելու համար։

III.

Այն օրից, երբ Խաչիկեանը ընդունեց, խմբագիրը նրա համար դարձաւ ամեն ինչ. նա երկիւղածությամբ և պատկառանքով էր վերաբերւում դէպի խմբագիրը և, նրա իւրաքանչիւր խօսքը ընդունում էր որպէս պատգամ։ Խաչիկեանի խմբագիրը բարձրագոյն կրթություն ունէր և բացի այդ, նա ոտնձգություններ էր անում զանազան գիտությունների սահմանները։

Նա եւրոպական լեզուներ գիտէր այնպէս, ինչպէս իր մայրենի լեզուն և դրանով Խաչիկեանը պարծենում էր լրատուների առաջ, երբ խօսք էր լինում խմբագիրների մասին։

Խաչիկեանի խմբագիրը երկու «խոշոր» պակասութիւն ունէր. մէկ այն էր, որ նա անծանօթի վրայ գոռոզ, հպարտ և ինքնահաւան տպաւորութիւն էր թողնում՝ այն ինչ ինքը բարի, պարզ և մեղմ մարդ էր՝ իսկ միւսն այն, որ նա իր առաջնորդողները յաճախ վերջացնում էր եւրոպական բառերով և հենց այդ պատճառով էլ Խաչիկեանը չէր կարդում։

Խաչիկեանը խրոնիկեօրի պաշտօնը ստանձնելով, կարծում էր, որ դա մարդկութեան և հասարակութեան համար է անում. բայց երբ ամեն բան սովորեց, երբ խմբագրատան ամեն մի գաղտնիք նրա համար այլևս գաղտնիք չէր, նա զգաց, որ ինքը միմիայն ծառայում է ռոճիկ ստանալու համար և ուրիշ ոչինչ։ Այդ պաշտօնը կամաց-կամաց սկսեց Խաչիկեանին գրաւել. նա օրւայ կէսը թափառում էր, և, որպէս ժամուլի ներկայացուցիչ՝ հիւնարկութիւնների, հաստատութիւնների ու հասարակական բոլոր ընկերութիւնների դռները բաց էին նրա առջև։

Տեղն եկած ժամանակ Խաչիկեանը իր պաշտօնով պարծենում էր, սակայն ինչպէս ամեն մի գործ, այնպէս էլ Խաչիկեանի պաշտօնն ունէր իր վատ կողմը։ Օրինակ, նա չէր սիրում, երբ իրեն կոչում էին «խրոնիկեօր» կամ «խրոնիկեօր Խաչիկ Խաչիկեան», և այդ բանը պատճառաբանում էր նրանով, որ ինքը առհասարակ «խ» տառը չի սիրում և յետոյ «խ»-ով են սկսւում խարդախ, խլամ, խոզ, խաւարամիտ, խայտառակ, խրտիլակ և խաչագող բառերը։ Նա սիրում էր, որ իրեն կանչէին «ռեպարտեօր», որ աւելի մեղմ, փափուկ և գեղեցիկ է հնչում և կամ «ժամուլի ներկայացուցիչ», որ նրան աւելի էր դուր գալիս։ Սակայն նրան մխիթարում էր մի հանգամանք, որ «խմբագիր» բառն էլ «խ»-ով է սկսւում։

— Խմբագիր և խրոնիկեօր, ահա երկու հակառակ բեւեռները,— ասում էր նա վիճելիս,— ահա երկու հակայ սիւ-

ներ, որոնց վրայ հիմնված է լրագրությունը. եթէ խմբագիրը շէնքի առաստաղն է, խրոնիկեօրը շէնքի յատակն է, իսկ մի շէնք առանց առաստաղի և յատակի չի կարող լինել։

Խաչիկեանի մէջ՝ ճիշտ է, փառասիրությունն այնքան էլ մեծագլուխ չէր, բայց, դէ՛, նա էլ մարդ էր. էլի փառասիրությունից մի բան կունենար։ Նրան տանելի էր, երբ թերթի լուրջ աշխատակիցները և խմբագիրը իրենց յօդուածների տակ ստորագրում էին, բայց նա չէր կարող հանդուրժել, երբ մի գաւառական թղթակից իր լուրերից մէկի չափ փոքրիկ թղթակցութեան տակ՝ իսկոյն կոխում էր իր ստորագրությունը, իսկ ինքը, որ արժանաւոր մըրցակից էր խմբագրին և ամեն օր սիւնակներ էր լեցնում, մի անգամ նմուշի համար իր ստորագրությունը տպված չէր տեսած։ Այս մանր բաները շատ տխուր եզրակացության էին բերում Խաչիկեանին, բայց ստիպված էր տանել այդ բոլորը, որովհետև այդպէս է պահանջում խրոնիկան։ Ասենք, նա այդ մտքին այնքան էլ անհաշտ չէր, որովհետև նոյն դրության մէջ էին և՛ սրբագրիչը, և՛ քարտուղարը։

Բեպարտեօր Խաչիկ Խաչիկեանը ամուրի էր և երբէք մտադրություն չունէր ամուսնանալու, որովհետև շատ կասկածոտ էր։ Նա ամուսնական կեանքին նայում էր այնպէս, ինչպէս կատուն շան, իսկ մուկը՝ կատուի վրայ։

Ապրելով խմբագրատան փոքրիկ սենեակներից մէկում, նա իրեն ազատ էր զգում կանացի զանազան բամբասանքներից և երիտասարդական այն շրջաններից, որոնք այնքան զրաւիչ են երևում հեռուից և այնքան զզուելի՝ մօտիկից։

Միշտ մենակ էր նա, միշտ մենակ ու ինքնամփոփ։

Նրա կեանքի միօրինակությունը խախտուում էր

միայն այն ժամանակ, երբ տարին մի անգամ խմբագիրները փոխվում էին, սակայն այդ տեղատեղությունն ու մակընթացությունը կարճատև էր լինում, նա շուտով էր ընտելանում բոլորին և նրա կեանքը նորից մտնում էր իր սովորական հունը։

Չնայած որ Խաչիկեանը իր պաշտօնի մասին խոշոր կարծիք չունէր, բայց հասարակութիւնը նրան մէկ աչքով չէր նայում. վերջապէս նա մամուլի ներկայացուցիչ էր, ամեն տեղ պատով էր ընդունւում. պաշտօնական հիմնարկութիւններն ու ընկերութիւնները նրան ընդունում էին սիրով և հաղորդում հարկաւոր լուրերը։ Առանձնապէս նրան հաճոյք էր պատճառում այն, երբ նա քաղաքային դումայի նիստերին ներկայ էր լինում և բազմում կանաչ, մեծ սեղանի շուրջը, որտեղ անխուսափելիօրէն նստած էին լինում զանազան լեզուներով հրատարակւող լրագիրների և կուսակցական օրգանների խրոնիկեօրները։

Ինչպէս նրա կոլեգաների, նոյնպէս և իր մօտ, անպակաս էր լինում թուղթն ու մատիտը։

Թէև իր պաշտօնը պահանջում էր անկողմնակալ կերպով գրի առնել իրաւասուների և քաղաքային վարչութեան անդամների ճառերը, բայց նա յաճախ աչառ էր լինում. – երկար տեղ էր տալիս այն իրաւասուների ճառերին, որոնք յատկապէս կանգ էին առնում կարագի, գետնախնձորի և պանրի սակագները իջեցնելու վրայ, որովհետև այդ երեք տեսակի կենսամթերքները նրա ամենօրեայ ուտելիքներն էին։

Պատահում էին օրեր, երբ լուրերի ճգնաժամ էր լինում. այս պարագան երևան է բերում ամեն մի խրոնինիկեօրի փորձառութիւնն ու հմտութիւնը, իսկ Խաչիկեանը վերջին յատկութիւններով օժտուած լինելով, կրիզիսը յաջողութեամբ էր անց կացնում։ Օրինակ, նա ոստիկանատնից լուրեր չստանալով՝ գրում էր.

«Ինչպէս յայտնի է, որանից շաբաթներ առաջ, գողութիւնները ու այդ հողի վրայ եղած սպանութիւնները խրոնիկական բնոյթ էին կրում, սակայն վերջերս կարծես թէ դադարել են՝ շնորհիւ այն բանի, որ ոստիկանութիւնը խիստ միջոցներ է ձեռք առել։ Այդ մխիթարական երևոյթը նկատւում է նաև կրկնուող ինքնասպանութիւնների մասին»։

Փողոցով անցնելիս, եթէ երկու վաճառական խօսելիս տեսնէր, գրում էր.

«Վերջերս վաճառականները մտահոգւած են այն բանի համար, որ Ռուսաստանից սպասւում է մեծ քանակութեամբ մանուֆակտուրա և Հիւսիսային Կովկասից հրակայական քանակութեամբ կենսամթերք. շնորհիւ այդ բանի՝ վերոյիշեալ ապրանքների և կենսամթերքների գները զգալի կերպով իջել են»։

Իր բեպարտեօրական երեսունևհինգ երկար ու ձիգ տարուայ գործունէութեան ընթացքում երկու մարդու չկարողացաւ տանել. առաջինը քարտուղարն էր, որ անխընայ կրճատում իր նրա տւած լուրերը, իսկ երկրորդը՝ գրաշարապետը, որը թերթը ուշ լոյս ընծայելու յանցանքը գցում էր խրոնիկեօրի վրայ, մի յանցանք, որից նա միշտ խուսափել էր և որից երբէք չէր կարողացել ազատւել։ Իր լրագրական ձանձրալի, տարտամ ու անհրապոյր աշխատանքի մէջ՝ նա ունէր ոգևորութեան և լիրիկական ժամեր. այդ պատահում էր այն ժամանակ, երբ մի գրող, մի հասարակական գործիչ և լրագրող էր մեռնում. նա հաճոյքով և ոգևորութեամբ էր նկարագրում մեռնողի յուղարկաւորութիւնն ու թաղումը, և նրա յօդւածները շարունակ վերջանում էին հետևեալ տողերով. «Մինչև ե՞րբ հայ հասարակութիւնը անտարբերութեամբ պիտի թողնի, որ իր ժրաջան մշակները մեռնեն չքաւորութեան մէջ». կամ թէ՝

«Գնա՛, մեռի՛ր, արի՛ սիրեմ»։

IV.

Մի օր, ամպամած մի տխուր օր, երբ լրացել էր նրա կեանքի ուղիղ յիսուն և վեց ձմեռը, երբ նրա գլխի մազերը սպիտակել էին այնպէս, ինչպէս ձիւնապատ լեռները, երբ նրա երակներում արիւնի տեղ ջուր էր հոսում, Խաչիկեանը պառկեց ու էլ վեր չկացաւ...

Երբ նա զգաց, որ ինքը պատրաստւում է թողնել այս անհիւրընկալ աշխարհը, իր վերջին ուժերը հաւաքեց, վերցրեց իր կեանքի անբաժան ընկեր թուղթն ու մատիտը և վերջին անգամ իր հայեացքը գցելով անպաճոյճ սենեակի ծանօթ առարկաներին, գրեց՝

«Մի գրոզ, որին ոչ ոք չի ճանաչում և...»։

Խաչիկ Խաչիկեանը գուցէ դեռ շատ բան ունէր ասելու, բայց վայրկենական մահը վերջակէտ դրեց և՛ նրա կեանքին, և՛ նրա ասելիքին, ու ծերունին մեռաւ մատիտը մատների մէջ, թուղթը ձեռքի տակ և ճերմակ գլուխը սեղանի վրայ։

Հետևեալ օրը, լուրերի բաժնում, խմբագրութեան կողմից, յայտարարւած էր ի գիտութիւն ընթերցողների, որ իրենցից անկախ պատճառով լուրերը չստացւեցին և խնդրում են, որ ներողամիտ լինեն այդ փոքրիկ անպատեհութեան համար։

ՌԷՆ

Գոյների գիրք

1.

Ես ունեմ մի կարօտ անյագուրդ
Ես գիտեմ մի աղջիկ քաղցրաշուրթ,
Ինքը՝ ալ, հոգին՝ ալ, հագինն՝ ալ,
Ալ այտին – լալի մէջ — մի սև՛ խալ։

Ամեն օր առաւօտ-իրիկուն,
Դէմքն՝ անլաց, կուրծքը՝ բաց, կօշիկն՝ ալ,
Դուրս է գնում, ետ գալիս իրենց տուն —
Վզին՝ լալ, ուսին՝ շալ, շալը՝ ալ։

Քայլերից քարերը կարմրել,
Օդն ու ջուր, հոգն էլ է դարձել ալ,
Աչերից աչերս կուրացել՝
Տեսնում եմ—միայն ալ, շալ ու խալ։

Ալ արևն է քաղում քաղցրատօթ,
Ամպն է դէմն իջել լուռ աղօթքի.
Լալ աղջիկն ինձանից հեռ ու մօտ,
Ու հոգիս կարօտ է ֆալ խօսքի։

2.

Մուգ-կապոյտ շրջազգեստ դու ունիս,
Մուգ-կապոյտ մի թիկնոց, մի գլխարկ.

Մուգ-կապույտ պատրանքի թռչունիս
Գերել է քաղցրամութ քո աշխարք։

Մուգ-կապույտ ամպեր են բարձրացել,
Մուգ-կապույտ շամբերն են երերում.
Մուգ-կապույտ պատկերդ թանձրացել՝
Լռում է կարոտիս ջրերում։

Յույս ու լույս, բույր ու բոց, բաուն անգամ =
Քո գույնի են դարձել՝ մուգ-կապույտ.
Ես որ կամ՝ չգիտեմ — ե՞ս եմ՝ կամ,
Թէ՞ ես էլ քո ստվերն եմ՝ մուգ-կապույտ։

3.

Հորիզոնն իմ աչքին բաց դեղին է դարձել,
Իր շողերն է հիւսում արևի հայեացքին.
Դեղնութիւնն իմ հոգուն համբույրով հարուածել՝
Ինձ գերին է դարձրել իր դեղին հիացքին։

Բրինձի դեղին արտն է հասուն ծփծփում,
Դեղնաթույր օդի մէջ նարինջները, կինամոն.
Ծառերի ոստերին իր լույսերն է կապում
Թռչնաքայլ հէյշայի դեղնաւուն կիմոնոն։

Դեղնի բույրն է լցրել իմ անցեալն ու ներկան,
Ու գալիքն աչերիս բեռնացել դեղնանինջ՝
Ես գտել եմ այսօր իմ դեղին աղջկան,
Որ արևն է կրում զգեստներում իր նաբինջ։

4.

Երեք ծաղիկ ես տեսայ—
Երեք աղջիկ անփեսայ—,
Կարմիր, կապույտ, դեղնագույն՝
Երեք ծաղիկ—երեք գոյն։

Մէկն ալ կարմիր մի մեխակ,
Ցոլուն աչերն աստղացիր,
Կուրծքն անառիկ մի դղեակ՝
Գաղտնիքներով հեշտալիր։

Երկրորդն՝ ասես արևառ
Դեղնատերև քրիզանթեմ,
Որ կարօտից գինեհար՝
Ծունկ էր իջել ինքն իր դէմ։

Երրորդն... երրորդն էլ՝ կապույտ,
Նման ծաղկին խաշխաշի,
Օդին տուել գոյն ու գութ՝
Քօղն էր գցել մշուշի։

Եւ երեք գոյն—երեք կոյս
Հոգուս դռանն ուս-ուսի՝
Կարմիր, կապույտ, դեղնալույս...
Ջահն են վառում իմ յոյսի։

5.

Զմրուխտի գառ ծածկոցն ուսերիդ՝
Լոկ պատրանք է ուզում դարձնի քեզ.
Քունն իջել, փաթաթուել փէշերիդ,
Ձեռքերդ ննջում են թոչնի պէս։

Թաւ մազերդ ասես թուխ լուսամփոփ,
Ոտի պէս՝ ոտքերդ են դալարիկ.
Հայեացքներն աչերիդ քաղցրածոպ՝
Ամպերի փայլն ունին խոլորիկ։

Քո կանաչն է զարկել երկնքին.
Գոհ ճաճանչն ընկել դաշտ, ձոր ու լեռ.
Կանաչի թև՛ հագել իմ հոգին՝
Թռչում է՝ կանաչով ծանրաբեռն։

Ու դադար չկայ իմ ճախրանքին
Բոյրերում, բոցերում այս անանց,
Եւ իջնում, ծալուում է իմ կրծքին՝
Յաւերժի լայն թևը բաց-կանանչ։

---

*
* *

Արևակիր աչերդ խաժ, նշաձև՝
Փայլերն ունին ինքնաօրօր Հինդոսի.
Ձեռքերդ՝ երկար, նուրբ մատներով լուսաթև՝
Հպման կարօտ ծաղկունք են սուրբ լոտոսի։

Մաղերդ՝ ասես հալած ոսկու մի ջրվէժ՝
Կեանքիս վրայ լոյսն են դեղին ծաւալում.
Որբութեան շողն իջել գլխիդ գահավէժ,
Ու ոտքիդ տակ շանթուած սիրտս է թաւալում։

ԳՆԱՑՔՈՒՄ

Օձաձիգ գնացքը ձիգ թռչում է շտապ,
Մղիչներն ակնարկու զարկում են ծանր.
Վագոններն ընկել են ձիարշաւ, չափ.
— Օձաձիգ, գնացքը ձիգ թռչում է շտապ։

Կուպէում մնացել ենք դու և ես, տես...
Ես էլ ինձ չեմ յիշում, այլ միայն քեզ.
Դուռը՝ փակ, լուսամուտն աղօտ ու հեզ,
Կուպէում մենակ դու և մէկ էլ... ես։

Ու գնացքն առել թև, թռչում է շտապ,
Իմ և քո հարսանքի զարկում են ծանր.
Ձահէլներն ընկել են ձիարշաւ, չափ.
— Օձաձիգ գնացքը ձիգ՝ թռչում է շտապ։

Արշաւիր Խոնդկարեան

ՅՈՒՇԵՐ

(«Գեղարուեստի» տեսրից)

Ա.

Հայրենիքում հեռածաւալ արդեօք կա՞ն,
Մնո՞ւմ են դեռ ընկերներն իմ մանկական.
Արդեօք հիմա չի՞ խոպանել այն սիրուն՝
Իմ և նրանց շինած բօստանն ու առուն։

Ա՛հ, այն գեղեակն, ուր բոբիկ ու կամացուկ
Զուրը մտած բռնում էինք մանրիկ ձուկ,
Կանաչ ափում մերոնք նստած լացքի՝
Ճչում էին ինձ, թէ «մեղք են, ցած ձգի՛»...

Կամ ցորենի ոսկի բեռներն, որ բերում,
Ծփծփալով փռում էին կալերում,
Սայլի հետքով, տնակների արանքում,
Գետին թափած հասկերն էինք հաւաքում։

Հայրենիքում հեռածաւալ արդեօք կա՞ն,
Մնո՞ւմ են դեռ ընկերներն իմ մանկական...

Բ.

Մաքի, կրքի քար քաղաքում կիզուում եմ ես,
Ուր լոկ նիւթն է տէրը կեանքի, ջիղն է անմեռ.
Այս երկիրը շատ է անձուկ, օտար է մեզ,—
Մայրիկ, ինչո՞ւ, ինչո՞ւ թողիր վաթանը մեր։

Նեղ երթիկով այն սևապատ տունը ցածրիկ,
Սիւնների տակ կճուճներով կաթ ու մածուն,
Ուր՝ մոռացած չար ու չարկամ, յաւուր չարիք,
Միշտ գոհ ու լի՝ օրհնում էինք մեր Աստծուն։

Քուրսու չորս կողմ փռված թաղիք ու անկողին,
Մէջը սուզված ինձ սիրելի մանուկ դէմքեր,
Երկար, երկար նայում էինք լուսնի շողին,
Մեզ փարում էր հէքիաթական մի նուրբ պատկեր...

Դէպի հեռու, հեռու օջախն իմ հարազատ,
Տանում է ինձ հիմա մտքիս վագրը թեթև.—
Մայրիկ, ինչու, ինչու թողիր այն կեանքն ազատ
Ու թաղեցիր եօթը ճամբի, սարի ետև...

Գ.

Հեռու նեռված բաղդով կոյր,
Կարօտ եմ քեզ, հօրաքրոջ,—
Ո՞ղջ ես հիմա՝ չըգիտեմ,
Կասկածս ինչով փարատեմ։

Արդեօք կանցնե՞ն մահահոտ
Օրերն այս մութ ու ահռոտ,
Որ դամ նորից ես քեզ հիւր,
Իմ հեզ, իմ լաւ հօրաքրոջ...

Նորից վագեն կառքիս մօտ
Երեխաներ կիսամօթ,—
Բոլորդ ելած իմ առաջ,
Ես ջերմ սրտով ձեզ փարած։

Բերկրանքը ձեր առաջին,
Շրթունքս հպած քո աջին,
Ճակտիս կնքված տաք համբոյր,
Ջան, իմ լալկան հօրաքրոջ...

Բայց գնում ենք մենք հիմա,
Ե՛ս էլ, դու էլ, դէպի մահ՝
Բաժան, կարօտ, հօրաքրոջ,
Հեռու նեռված բաղդով կոյր։

Պահարէ

ԱՆԱՆՈՒՆ ԱՂՋԻԿ

Ա.

Չեմ յիշում, ե՞րբ և ո՞րտեղ ենք հանդիպել իրար, բայց ես քեզ եմ ճանաչում, դու՝ ինձ։

Ոչ անունդ գիտեմ, ո՛չ ով լինելդ։

Բայց գիտեմ ճերմակ ժապաւէնով պատած՝ գորշ գլխարկով մի աղջիկ, որի անվերջ ու հանդարտ ժպիտը կեանք է պարգևում ինձ. գիտեմ մի աղջիկ, որի ժպտից վոսիկներ են ստեղծւում այտերին, դէմքին արև ու լոյս են տալիս աստղ աչքերը։

Անանուն աղջիկ, երբ դու ինձ հանդիպեցիր՝ արևի ճառագայթները ջերմացան, սրտիս լարերին գարունն իբ երգն յօրինեց։

Անծանօթ աղջիկ, երբ տեսնում եմ քեզ, թւում է հովտաշուշանի բուրմունքը կարում է ինձ գետնից։

Չգիտեմ հասկանում ես, հոգիդ զգում է մէջս եղած փոթորիկը, ցրտահար տերևի նման դողում է նրա համար. բայց երբ սիրտս յոգնում ու նիրհ է գալիս վրաս, գիտես արդեօք ինչ է պատահում ինձ,—դու մտնում ես աչքերիս մէջ և խանգարում քունս։

Թէ ո՞վ ես դու, չգիտեմ, բայց գիտեմ այն, որ իմ մենութեան ժամերին միշտ ինձ հետ ես լինում։

Ծիծաղ աղջիկ, ես այժմ շատ եմ փափագում մենութիւնը նրա համար, որ գամ քեզ մօտ ու խորհեմ քո մասին, քո ժպտի մասին, իմ անանուն ծաղկի մասին։

Ամեն պահին, արևածագից մինչև մայրամուտ, ուզում եմ կարուել ամեն բանից, որ տեսնեմ քեզ, որ սրտիս երգով քուն բերեմ աչերիդ, որ քնած էլ տեսնեմ քո անսպառ ժպիտը։

Այդպէս եմ ուզում նրա համար, որ կարողանամ քեզ վերածել երգի, սիրտդ ներդաշնակել սրտիս, որ աստուածային լարերի վրայ հիւսի աշխարհն արբեցնող իմ և քո երգը։

Բարի աղջիկ, թէև դու ինձ չես ճանաչում, բայց գիտես, որ ես ու դու սնում ենք մի հողի պտղով, ծաբաւը յագեցնում մի գետի ջրից, կեանք ենք ստանում մի արևից. էլ ինչու՞ ես դու ինձնից փախչում...

Դու գիտես, որ ամենքը նայում են քեզ ինչպէս շատերին ու անցնում, բայց ինչու՞ չգիտես, որ երբ ես եմ քեզ հանդիպում, մնում եմ կանգնած ու չեմ հեռանում, մինչև որ մի չարաճճի ծիծաղ նետում ու գնում ես ինձնից...

Անծանօթ եղիր, հոգ չէ, միայն թէ գիտենամ, որ շուրթերդ ուզում են ինձ հաղորդել ձմրանը Մայիս բերող խօսքը,—որ այսօրուայ սառնամանիքների մէջ գարունը եռայ կրծքիս տակ...

Բ.

Այսօր երբ նորից ծերացաւ մեր քաղաքն ու ճերմակեց ամեն բան՝ սաստկացաւ ցուրտը։

Ես էլ թեժացրի վառարանիս կրակն ու սենեակիս տաքութիւնից թմրեցի և մտածեցի՛, մտածեցի՛ քո մասին։

Երբ տեսնել ուզեցի քո տունը, սրբեցի ապակինե-

ըի գոլորշին ու տեսայ քեզ՝ գլխաբաց. դու ընկերուհուդ հետ թևանցուկ ճեմում էիր քո պատշգամբի տակ, գետը ծածկող սառույցի վրայ։

Մէկ էլ ձեր զրոյցը փոխուեց չարաճճի գնդախաղի։

Այնպէս չէի ուզում, որ քո մատները դիպչեն ձիւնին. չէ՞ որ կը թրջուեն, կը մրսեն։

Չէ՞ որ ձմեռ է։

Թւում է՝ դու այդ չես զգում ու անհոգօրէն վերցնում ես աչերդ խոտացնող ձիւնն ու զարկում ընկերուհուդ։

Հապա քո ծիծաղը...

Քո ծիծաղը ցնցում էր էութիւնս, թունդ հանում սիրտս։

Իսկ երբ դու անվախ վազվզում ես սառույցի վրայ՝ ես վախենում եմ. վախենում եմ, որ յանկարծ սառույցը ճաքի...

Հաւատա՛, ձիւն աղջիկ, երբ դու ճնագունդ ես շինում, իմ ձեռքերն են մրսում։

Շո՛ւտ, շո՛ւտ գնա քո դղեակը, որ տաք սենեակում ես ցուրտ չզգամ...

Դ.

Ինձ ինչ, որ ճերմակել է ամեն բան, միայն թէ թող յաւիտեան սև մնան քո փունջ վարսերը։

Դու էլ գիտես՝ ես էլ, որ այսօրուայ սառույցը կը հալչի, գետն էլի իր ճամբով կերթայ, պղտոր ջուրը զուլալ կը դառնայ, բայց գիտե՞ս, եթէ դու սառչես, սիրտդ պաղի՝ էլ չի ջերմանայ՝ թէկուզ աշխարհով մէկ մոմ վառի քո առջև...

Դ.

Դու գիտես, որ իմ սենեակը քո տան դիմացն է. մեզ բաժանում է մեր քաղաքի միջով հոսող վարար գետը։

Գիտես և այն, որ մի քիչ վերև կամուրջ կայ. եթէ ուզենաս գալ ինձ մօտ, Աստուած վկայ, գետը չի խանգարի...

Ե.

Երբ լուր առայ, որ դու մեկնելու ես քո հայրենիքը՝ տխրեցի։

Իսկ այսօր իմացայ, որ էլ չես գնալու, որովհետև քո հայրենիքի մարդիկ գազազել ու արճիճ են մխում իրար կուրծք։ Քո հայրենիքում արիւն ու աւեր կայ հիմա։

Եւ այսօր ուրախութիւնից օրհնում եմ քո հայրենիքի այն մարդկանց, որոնց հրացանների ճարճատիւնը չը թողեց, որ դու գնաս մեր քաղաքից։

Զ.

Մենք գտնուում էինք մի շէնքում, ուր կար նւագ, երգ, պար, ծաղիկ, քէֆ. վայելքի համար կար ամեն բան, բայց չկար իմ և քո սրտի հաղորդակցութիւնը։

Ես կամեցայ իմ ծաղկանոցից բերած ծաղկով զարդարել քո կուրծքը։

Այդպէս էլ եղաւ։

Դու չիմացար, ի հարկէ, որ կուրծքդ զարդարող ծաղիկներն իմն էին։

Դու չգիտէիր, որ ժպտիդ իշխող աչերիդ փայլը ծակում էր սիրտս։

Զարմանում եմ, թէ ինչո՞ւ չէիր տեսնում ինձ, որ միշտ շուրջդ էի պտոյտ ալիս։

Մի՞թէ չէիր զգում, որ երբ դու ծիծաղում էիր, սիրտս էլ իր ծիծաղն էր փռում երեսիս...

* * *

Այնտեղ կար պոստախաղ։ Ես քեզ դրեցի.

«Ա՜խ, քո ժպիտը...»։

Երբ նամակս բացիր ու կարդալով անցար մօտովս՝ օդը թարմացաւ։

Իսկ երբ թնդաց քո պարեղանակը՝ դու մի քանի պտոյտ արիր ու կանգնած մի տեղում օրօրուեցիր։ Երբ կիսախուփ աչերդ ուղղեցիր նազանքով շարժուող մատներիդ, ինձ տարար եթերը։

Բայց երբ դու պարդ դիտող հանդիսականների շարքը կիսեցիր ու գնացիր, հազարմամեայ լապտերների լոյսն աղօտացաւ ինձ համար, երգն ու նւագն էլ խինդ չտուին իմ սրտին։

* * *

Երբ հանդէսը ցրուեց՝ վերադարձին տեսայ, որ էլի կուրծքդ զարդարում էր շուկայից չգնած իմ ծաղիկը։

Բարի՛ աղջիկ, թէև այսօր ձմեռ է, բայց երբ դու գաս իմ ծաղկանոցը՝ քո ոտները ձիւնի փոխարէն ծաղիկներ կը տրորեն, յաւէտ կը հալչի պարտիզիս ձիւնը, մայիսն իր գորգը կը փռի այնտեղ։

Ե՛կ, որ այդպէս լինի։

Ն.

Ցրտից կարմրել էին այտերդ, երբ դուռը բացիր ու գործով մտար իմ աշխատանոցը։

Խենթ քայլերով մօտեցար գրասեղանիս և դրիր գըրկիդ ծաղիկների խուրձը։

Ինչպէս միշտ, այնպէս էլ այժմ՝ ծիծաղն էր խաղում քո դէմքին։

Երբ համարձակուեցի քեզնից ծաղիկ խնդրել ինձ համար, դու մերժեցիր։

— Ծաղիկներս տէր ունեն,— ասիր։

Քեզ էլ ոչինչ չասի։ Չէ՞ որ ծաղիկներդ տէր ունէին։

Հաւատա՛, չա՛ր աղջիկ, եթէ իմանայի, որ դու մի օր կը գաս իմ աշխատանոցը, իմ պարտէզի բոլոր ծաղիկները կը բերէի և կը փռէի քո ճամբին...

Բայց՝

«Ծաղիկներս տէր ունեն»։

Չեմ ժառանգում. իսկ դու չժառանգաս.

— Իմ ծաղիկները տէր չունեն...

*
* *

Երբ գնացիր՝ սեղանիս վրայ մնաց մի ծաղիկ։

Չգիտեմ մոռացա՞ր, թէ՞ այդպէս կամեցար, բայց գիտեմ, որ քո թողած ծաղիկն այսօր էլ զարդարում է իմ գիրքը, բոյրով օծում նրա թերթերը։

Այս չորացած ծաղիկը քեզ շատ անգամ է բերել իմ աչքերի առջև։

Դու ոչինչ չգիտես, բայց ես գիտեմ, որ իմ ծաղկանոցը փթթել ու գարունն է բուրում այնտեղ։

Ժլա՛տ աղջիկ, երբ դու գաս քո կարօտով հիւսած իմ պարտէզը՝ բարի աչերդ կը տեսնեն նրան, սիրտդ կը զգայ, որ իմ պարտէզը դրախտ է դարձել...

Գո՛ւթ արա՛, այ աղջիկ, մեր դռնով անցնելիս ոտդ դիր՝ իմ պարտէզը...

Ը.

Ես էլ էի տրամայի սպասում դու էլ։

Զեռքիդ մանուշակները շուրջդ բոյր էին փռում ու սիրտս Մայիսով ծածկում։

Եթէ դու այդքան սիրում ես ծաղիկ, ապա ինչո՞ւ մի օր իմ ծաղկանոցը չես գալիս։

Եկաւ ինձ տուն տանող վագոնը, բայց չնստեցի։

Ի՞նչպէս կարող էի քեզ մենակ թողնել ու գնալ։

Բայց երբ քեզ տուն տանող վագոնն եկաւ... դու ցատկեցիր ու նստեցիր։

Իսկ երբ վագոնը քեզ տարաւ, արևի ճառագայթները պաղեցին, սիրտս տխրեց ու ինքս ինձ հարցրի.

— Ինչո՞ւ նրա վարմունքի մէջ չարութիւն կայ...

Թ.

Երբ իմացայ, որ իմ և քո սրտի մէջ բարեկամութիւն կայ, աշխարհը ծիծաղով լցւեց։

Այդօրւանից պարտէզս փթթեց ու բոյրն առնողի կեանքը դրախտի փոխեց։ Այդօրւանից պարտէզիս շաբրւանը մարգարտէ ցող էր ցանում ծառի ու ծաղկի վրայ։

Քո ցանկութեամբ իմ պարտէզի աւազանում կարապ էլ լողաց։ Դեղձանիկները սուլոցով ու դայլայլով իմ պարտէզը անմահութեամբ օծեցին, բայց դու դարձեալ չեկար։

— Հաւատա՛, լաւ աղջիկ, հէքեաթը քեզնով է գեղեցիկ։

* * *

Եղաւ, որ մի օր դու ճերմակի փոխարէն սև հագար, դէմքդ թախծոտ դարձաւ, ժպիտդ մարեց ու վիշտդ քեզ մեր քաղաքից հեռացրեց։

Իսկ այդօրւանից տխրութիւնն ինձ ընկեր դարձաւ նրա համար, որ երկինք աչերիդ արցունք երևաց ու ծիծաղը դադարեց պարել քո դէմքին։

Այդօրւանից մեր քաղաքում տխրեց ամեն բան. անգամ արևը ծագում ու մայր էր մտնում անծիծաղ, իսկ գիշերները սև էին՝ ագի...

— Հաւատա՛, այ աղջիկ, մեր քաղաքը քեզնով էր գեղեցիկ...

Թէ որքան ժամանակ է դու չկաս՝ չգիտեմ, բայց այսօր երբ մտայ պարտէզս՝ տխրեցի։

Գունաթափ տերևները ծածկել էին հողը, չորացել էին վարդի ծառերը, կանաչը խանձւել էր, աւազանի ջուրը նեխւել—կարապի թողած փետուրները երեսին, ծառերի ճիւղերը սպանւած թռչունի պէս թևաթափ էին եղել, դեղձանիկները չկային...

— Հաւատա՛, այ աղջիկ, թէ՛ պարտէզ, թէ՛ ծաղիկ քեզնով են գեղեցիկ։

* * *

Այժմ պարտէզս ամայի, դուռս փակ թափառում եմ քաղաքից-քաղաք, լինում ամենուր ու չեմ գտնում ինձ անհունը տանող հայեացքդ երբէք...

— Հաւատա՛, լա՛ւ աղջիկ, թափառումներս քեզնով են գեղեցիկ։

Ես գիտեմ, որ աշխարհում ապրում է մի աղջիկ, որ իմ երջանկութիւնը պահում է իր մէջ, իր աչքերի, սրտի ու ժպտի մէջ։

Իսկ դու չգիտես, որ միևնոյն երկնքի տակ քեզ որոնում է մի տղայ, որ սէրը սրտով շալակած, մինչև օրս էլ թափառում է քեզ գտնելու, քեզնով արևը տեսնելու համար։

— Հաւատա՛, այ աղջիկ, աշխարհ ու Աստուած քեզնով են գեղեցիկ։

Մ. ԷՓՐԻԿԵ



* * *

Աշխարհից հեռու, անծանոթ վայրում,
Անձաւի միջին մաքուր մոմի պէս
Մի ձիւնէ ծաղիկ պլպլում է հեզ
Գիշերւայ կիսին և անուշ խորհում։

Քնքուշ երազող ծաղիկը մաքուր
Քո հոգին է, քոյր...

Իբրև պապակած մի փոշոտ ճամբորդ,
Մեղսոտ աշխարհի ափերով անցնում,
Մեղքի բեռի տակ բեկւած ու ցաւոտ,
Ոտերիս ափին շուշան եմ հագնում,
Որ սուրբ անձաւիդ շէմքում չոքեմ ես
Ու աղօթեմ քեզ։

---

* * *

Դղեակիդ գմբէթն ամպերին հասած,
Բիւրեղ սրահում երազում ես դեռ.
Էլբրուսը քո դէմ ճակատը պարզած,
Քո շուրջը պարտէզ, բոյր, կարկաչ,
թիթեռ...

Երկինք ուղարկող աղօթքի նման
Մի նւագ ծորաց հարևան տնից,
Հաւքերը շարժաղ քո կտրի վրան
Փրքչում են մեղմ, որ զարթնես քնից։

Ու ձեռիս մի փունջ արցունքոտ մեխակ,
Որ քաղել եմ ես ժայռերի ծերպից,
Ուր ամպն է հասնում ու քամին մենակ,
Ուր մահն է կախուած ամպի թևերից...

Մի մերժիր անուշ դու այդպէս
բարձրից,
Մի մերժիր սիրուս այս մոմերն
անքիծ...

Եղիա Տէր-Հայրապետեան

ՄԱՅՐԵՆԻ ԵՐԳԵՐ

ՀՐԱՒԷՐ

Լուսոյ դուռներն կը բացուին երդիքէն վեր, դաշտին վրայ.
Արևու շող, շուտ կաթիլը,
Մեռնիմ շողիդ նախընծայ...

Օրրանին մէջ արթընցան լաճուս աչեր պլճրլտուն.
Շէնքած թոնիրդ՝ հարս, վառիր,
Մեռնիմ թորւանդ բոցերուն...

Աքլորները կանչել են թառին վրայ գոմերուն,
Հօտաղ տղաս, շուտ զարթիր,
Մեռնիմ Հանիդ ուժերուն...

Աղջիկները թերվուն՝ Ջուրի գացին մութլուսուն.
Եղնիկ-աղջիկս, շուտ վազիր,
Մեռնիմ բոպիկ ոտներուն...

Ախուին մէջ զրընգաց... Մարալին զանգն է զընգան.
Սարուր գաւակս, արձրկիր,
Մեռնիմ զանգին ձայներուն...

Ոսկի, ոսկի ցաներ է ոսկի Արև չորս բոլոր.
Հող, առ ուժերըս կերկին,
Մեռնիմ Ուժիդ դարաւոր...

Վէսպէր

* * *

Պայծառ գիշեր էր, մի սիրուն գիշեր,
Պատմում էի քեզ ոսկի հէքիաթներ...
Լճակը՝ խաղաղ, լճակը՝ կապոյտ,
Աստղերի ցոլքով ժպտում էր անփոյթ. .

Պարտէզը՝ յամր էր, թփերը՝ գունատ,
Յօրանջում էին ծաղկունքը քնատ...
Սիրտս սրտիդ դէմ չունէր մի յանցանք.
Անցեալը՝ յուշ էր ու ներկան՝ պատրանք...

Զքնաղ գիշեր էր, մի անուշ գիշեր,
Պատմում էի քեզ ոսկի հէքիաթներ...

ՀԱՆԴԻՊՈՒՄ

Հանդիպում ես ինձ ու ժպտում անփոյթ,
Օ՜, որքան պայծառ ես ու որքան անգութ.
Դու չես հասկանում, որ իմ հուր սրտում,
Սիրոյդ սերմանած շուշանն է փթթում...

Կախարդ հայեացքով որսում ես հոգիս,
Յանցում շողազարդ արեւը կեանքիս.
Մանկան պէս ասես ոչինչ չես զգում,
Յանցանքդ անմեղ հաճոյք է թւում...

Մի խենթ ակնթարթ տարուած երազում,
Համբոյրիս գինով արբել ես ուզում.
Քնքուշ ու յստակ յոյզերս պայծառ՝
Դու զոհ ես բերում հաճոյքիդ համար...

Ու չես հասկանում, որ իմ հուր սրտում,
Սիրոյդ սերմանած շուշանն է փթթում.
Հանդիպում ես ինձ ու ժպտում անփոյթ,
Օ՜, որքան պա՛զ ես ու որքան անգութ...

ԱՆՑԵԱԼԻ ՅՈՒՇԵՐԻՑ

Այն վա՛զ էր, աւա՛ղ, որ արևը ջինջ
Ջերմ ու քնքշօրէն գուրգուրում էր ինձ.
Այն վա՛զ էր, որ ես ծաղիկների հետ
Վայելում էի կեանքը սիրաւէտ...

Ժպիտն հաճո՛յք էր, քաղցրայոյզ պատրանք,
Թեթև ակնարկն ինձ 'բերում էր թովչանք.
Աշխարհն ինձ համար դիւթանք էր ու երգ,
Սիրտս չէ՛ր թախծում, չէ՛ր լալիս բեկբեկ...

Հոգիս աստղերի գիրկն էր սաւառնում,
Անբիծ աղօթքով շողերին գգւում.
Դալար ու թաւիշ ափերին փրփուր,
Ղօղանջո՛ւմ էին երազներս հուր...

...Այն վա՛զ էր, աւա՛ղ, ամեն ինչ անցաւ,
Կեանքիս գարունը՝ անխօս դալկացաւ.
Ոսկի օրերիս յոյսերը կարմիր,
Ցաւի բեռի տակ, եղան ցան ու ցիր...

Վարսենիկ Աղասեան

96

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆ ԱՐՏԱԿԱՐԳ ԺՈՂՈՎԻ

(Քարտուղար Քարհանեանի թղթերից)

Այս տարուայ դեկտեմբեր ամսի 4-ին կայացաւ Ընկերութեան անդամների արտակարգ ընդհանուր ժողովը։ Ընկերութեան վարչութեան նախագահ պ. Նաւումեանը ժողովը բանալով ընդգծեց հայ ժողովրդի ներկայ տագնապալից և օրհասական դրութիւնը և առաջարկեց մի նախագահ ընտրել ընդհանուր ժողովը կառավարելու համար։ «Մեր ներկայ օրհասական դրութիւնը,— ասաց պ. Նաւումեանը,— հրատապ լուծումն է պահանջում»։

Ժողովի նախագահ ընտրուեց փաստաբան Ներսէս Մարգարեանը 27 ձայնով ընդդէմ 21-ի, ձեռնպահութեամբ 9 հոգու։ Իսկ քարտուղար ընտրուեց երիտասարդ բանաստեղծ Արմենակ Քարհանեանը միաձայն։

Պարոն նախագահը, ընտրուելուց յետոյ, շնորհակալութիւն յայտնելով՝ հետևեալ ճառն ասաց.

«Որպէս շնորհակալ եմ ինձ արուած այս բարձր պատուի համար։ Այսպիսի մի ժամանակ, երբ մեր երկիրը գտնուում է Դամոկլեան սրի տակ՝ ես առաւել ևս կարիք եմ զգում և իմ ամենաեռանդուն պարտքս եմ համարում կրկին ու կրկին շնորհակալութիւնս յայտնել յարգոյ ժողովականներիդ։ Ինձ նախագահ ընտրելով՝ դուք նոյնն է թէ մի բացարձակ վստահութիւն ընծայեցիք ինձ այնպիսի մի պատմական վայրկեանին, պարոններ, երբ վճռուում է մեր բազմատանջ ժողովրդի լինել-չլինելու գերագոյն խնդիրը... դուք, այո, վստահութիւն էք յայտնում

ինձ. ուստի և՝ վերատին ընդունէք, խնդրեմ, իմ անկեղծ շնորհակալութիւնը...

Սրանով բացւած եմ համարում մեր ընկերութեան այս արտակարգ ժողովը։ Ջերմագինս ողջունում եմ ձեր ներկայութիւնը։ Պարոններ! այսպիսի մի ժամանակ, երբ հայ բազմաչարչար ժողովրդի ապագան յղի է անակնկալներով, այսպիսի մի ժամանակ,—այո՛ պարոններ—ձեզանից պիտի պահանջել խիստ լրջմիտ, կարելի է ասել՝ խիստ աչալուրջ և անձնուէր վերաբերմունք դէպի մեր հասարակական պարտականութիւնները... Ուստի և՝ անցնենք գործի։ Մենք ամենքս մեր հարազատ ժողովրդի հարազատ զաւակներն ենք և խորապէս զգում ենք նրա դառն ցաւերը։

Չեմ ուզում երկարացնել, քանի որ հարցը պարզ է բոլորիս համար։ Մաղթում եմ ձեզ եռանդ և յաջողութիւն, որպէսզի մեր այս արտակարգ ժողովը կարողանայ արդարացնել այն յոյսերը, որ մեզ վրայ է դրել մեր բազմատանջ ժողովուրդը։ Արտակարգ հանգամանքներում հրաւիրւած այս արտակարգ ընդհանուր ժողովը՝ արտակարգ գործ պիտի կատարի... Սա իմ խորին համոզմունքն է, որը— ես հաւատացած եմ—անպայման նաև ձեր ամենքիդ համոզմունքն է։

Ժողովը համարում եմ բացւած»։

Այս հակիրճ ճառից յետոյ, պարոն նախագահը բացատրեց ժողովականներին այն կոնկրետ նպատակները, որոնց շուտափոյթ իրագործման համար հրաւիրւել էր արտակարգ ժողովը։ Այնուհետև սկսեցին վիճաբանութիւնները, որոնք հետզհետէ ծաւալւեցին։

Առաջինը ձայն խնդրեց ուսուցիչ Գասպար Բաղաւեանը՝ բողոքելով, որ ընկերութեան վարչութիւնը կանխապէս օրակարգ չէր կազմել։ «Ես ապատում էի,—ասաց

նա, — որ մեր յարգոյ վարչութիւնը, որ հրաւիրել է ահա այս ժողովը...— Ես սպասում էի, որ մեր առաջ, ահա այստեղ, դրած կը լինեն բոլոր այն խնդիրները, որոնց լուծման համար մենք կանչուել ենք ահա այստեղ։ Յարգոյ վարչութիւնը զանց է առել, որ բոլոր կուլտուրական երկրներում է ընդունած՝ որպէս հիմք կանոնաւոր և արդիւնաւէտ ժողովավարութեան։ Ուրիշ խօսքով ասած՝ չկայ օրակարգ, որպէսզի մենք ի վիճակի լինենք սկսելու ահա այստեղ մի կանոնաւոր և արդիւնաւէտ աշխատանք»։

Նախագահ.— Բայց հօ ես արդէն բացատրեցի այն կոնկրետ խնդիրները...

Բաղամեան (շարունակելով).—Ներեցէք. ձեր բերանացի բացատրութիւնները, բացի այն՝ որ պակասաւոր էին, նաև ուշացած են։ Բոլոր պարլամենտական երկրներում ընդունուած է, որ ժողով հրաւիրողները...

Նախագահ (զանգահարելով).—Պարզ է, պ. Բաղամեան, ձեր նկատողութիւնը։ Ուստի և...

Բաղամեան.— Թոյլ տուէք։ Թոյլ տուէք միտքս աւարտեմ։ Ես լիակատար իրաւունք ունեմ օգտուելու խօսքի ազատութեան իրաւունքից։ Ես ահա այստեղ շօշափում եմ ժողովավարական մի կարևոր հարց, որ կարդինալ նշանակութիւն ունի։ Ուրիշ խօսքով ասած՝ օրակարգի անհրաժեշտութիւնը, օ-րա-կարգ։ Ժողովականների ուշադրութիւնն եմ հրաւիրում այս կարևոր հանգամանքի վրայ։ Օրակարգ չի կազմուել նախապէս։ Դա նշանակում է այս, որ մեր ընկերութեան յարգոյ վարչութիւնը իր կոչման բարձրութեան վրայ չի կանգնած։ Դա ապացոյց է նրա կատարելապէս անձեռնհաս լինելուն։ Եւ ես կարծում եմ, որ նախ քան ներկայ ժամենտին անցնելը կարևոր է քննել յարգոյ վարչութեան գործունէութիւնը, որը չի դիմանայ ոչ մի կրիտիկայի։

Սարգիս Զամարեան (տեղից).— Որպէս ժողովական-

ներից մէկը, ես գտնում եմ պարոնի անտեղի յարձակումները վարչութեան հասցէին...

Բաղամեան (բարձր).—Վարչութիւնը կատարելապէս անձեռնհաս է։ Ահա ձեզ ապացոյց...

Նախսուգահ (զանգահարելով).—Ջերմագինս խնդրում եմ, պարոններ, չխօսել վարչութեան ձեռնհասութեան կամ անձեռնհասութեան մասին։ Այսպիսի մի ժամանակ, երբ մեր ժողովրդի գոյութիւնն է վտանգւած, այսպիսի մի ժամանակ, երբ մեր արիւնաբբու թշնամին...

Բաղամեան.— Օրակարգը, պարոն նախագահ, օրակարգը։ (Նստում է)։

Նախագահ.— Լիովին համաձայն եմ ձեզ հետ, պարոն Բաղամեան. պարզ է, ձեր նկատողութիւնը... (զանգահարելով) Պ. Զաքարեան, նստեցէք խնդրեմ. և խնդրում եմ նախ ձայն խնդրել ինձանից և ըստ այնմ խօսել։ Ապա թէ ոչ անկարգութիւն կը մտցնէք ժողովի մէջ (զանգահարում է)։ Ուստի և՝ ո՞վ է ուզում ձայն խնդրել և խօսել օրակարգի մասին։

Բաղամեան (վեր կենալով).—Ես զարմանում եմ, պ. նախագահ. ինչպէ՞ս կարելի է խօսել օրակարգի մասին, քանի որ դեռ ևս օրակարգ չկայ մեր առաջ՝ շնորհիւ վարչութեան անձեռնհասութեան։ Կարևոր է նախ կազմել օրակարգը։ Այդ նպատակով՝ ես անհրաժեշտ եմ գտնում, որ մի փոքր ընդմիջում արւի։

Բաղամեանի առաջարկը առիթ եղաւ թեր ու դէմ կարծիքների։ Փառորդ ժամից աւելի տևող վիճաբանութիւններից յետոյ, ձայների ճնշող մեծամասնութեամբ որոշւում է ընդմիջում անել՝ օրակարգը շուտափոյթ կազմելու և ժողովին ներկայացնելու նպատակով։ Այդ որոշումն անցնելուց յետոյ, նախագահը հարց տուեց, թէ «քանի՞ րոպէ ընդմիջում անենք»։ Այս հարցի շուրջն ևս տեղի ունեցան բուռն վիճաբանութիւններ։ Բաղամեանը առա-

ջարկում է քսան րոպէ ընդմիջում։ Բայց ժողովականնե-րից շատերը չեն համաձայնում, այլ առաջարկում են՝ մի քանիսը՝ տասը րոպէ, մի քանիսն էլ՝ տասնուհինգ։ Եղան նաև այնպիսիները, որոնք անհրաժեշտ էին համարում երկարացնել ընդմիջումը առնւազն կէս ժամով։

Ժողովականներից մէկն էլ, լրագրող Նարեկեանը, հարցին տալիս է այլ լուսաբանութիւն։ «Նման խնդիրներին, —ասաց նա,— գործնական-պրաքտիքական նպատակայարմարութեան տեսակէտից է՝ որ հարկաւոր է մօտենալ։ Այսինքն, ոչ թէ օրակարգը մշակելու պրոցեսը պէտք է յարմարեցնել րոպէներին, ժամերին և այլն այդպէս, այլ բոլորովին հակառակը պէտք է անել, այսինքն՝ րոպէներն ու ժամերը, նոյն իսկ, եթէ կամենաք, օրերը՝ պէտք է յարմարեցնել օրակարգը լիակատարօրէն մշակելու սկզբունք-պրինցիպին։ Անշուշտ, ես չեմ ուզում ասած լինել՝ իբրև թէ օրակարգը մշակելու համար՝ մենք օրեր կամ թէ նոյն իսկ ժամեր վատնենք։ Ոչ, ես այդ տեսակ ենթադրութիւն անելու բնաւ միտք չունեմ։

Նախագահ.—Դուք ի՞նչ էք առաջարկում։

Նարեկեան.—Առաջարկութիւնս... այո, ես ուզում եմ ասած լինել, որ գործնական-պրաքտիքական նպատակայարմարութեան տեսակէտից՝ բոլորովին աւելորդ է այս կամ այն ժամանակամիջոցը որոշել օրակարգի մշակութեան աշխատանքների համար...

Բաղամեան (տեղից).—Քսան, քսան րոպէ։ Քէէարկեցէք, պ. Նախագահ, առաջարկս քէէարկեցէք, ժամանակ մի կորցնէք։

Նախագահը բոլոր առաջարկները ամփոփելով՝ նրանցից միայն երեքն է քէէարկութեան դնում, իւրաքանչիւրն առանձին։—«Երեք առաջարկ։ Առաջինը... խնդրում եմ, պարոններ, ուշադրութիւն։ Առաջին առաջարկը.—ընդմիջում անել տասը րոպէով...»

Բադամեան.—Նախ իմ, նախ իմ առաջարկը, այսինքն քսան, քսան ռոպէ։

Նախագահ՝ (զանգահարելով).—Մի խանգարէք խընդրեմ։ Երկրորդ առաջարկը...

Բադամեան.—Ժամանակ մի կորցնէք, պ. նախագահ։ (Ոտքի ելնելով) Ամենից առաջ քսան ռոպէն քւէարկութեան դրէք. և եթէ ձայների մեծամասնութեամբ ընդունի իմ առաջարկը, ապա ուրեմն բոլոր միւս առաջարկները կըկորցնեն իրանց ռէգոն-դէտրը։ Սա ժողովավարական տարրական ճշմարտութիւն է։ (Նստում է)։

Նախագահը (ուզում է շարունակել)։

Պետրոսեան.—Շարունակէք, շարունակէք, պ. նախագահ, գուր ժամավաճառ ենք լինում։

Նախագահ (զանգահարելով).—Մի խանգարէք խընդրեմ, պարոններ... խնդրեմ։ Ես ինքս շատ լաւ եմ իմանում, թէ ինչպէս է հարկաւոր այս կամ այն հարցը ձևակերպել... Ով որ համաձայն է ընդունիլ ունել ոչ աւել քան քսան ռոպէով՝ խնդրում եմ ձեռք բարձրացնել։

Ուսուցիչ Բադամեանը և ժողովականներից հինգ հոգի ձեռք են բարձրացնում։

Ժողովական Զումարեանը, որ տասը ռոպէի կողմնակից էր, նկատում է. «Սխալ էք անում, պ. նախագահ, լաւ սկսել էիք, էլ ինչու փոխեցիք հարցադրութեան ընթացքն ու հերթը։ Ես որպէս կողմնակից տասը ռոպէի՝ ցանկալի է, որ դուք ձեր արդէն սկսած ձևով առաջ տանէք գործը։ Իսկ այդպէս, ինչպէս դուք փոխում էք ընթացքն ու հերթը, չի կարելի, որովհետև դուք՝ որպէս նախագահ՝ ձեզ վրայ պատասխանատուութիւն է ընկնում։

Բադամեան —Ժողովավարական ամենատարրական և

. . . . . .

. . . . . .

. . . . . .

(Արձանագրության 5-րդ, 6-րդ, 7-րդ և 8-րդ երեսները պակասում են Քարհանեանի թղթերի մէջ։ Երևի դուրս ընկել՝ կորել են։ Ուստի մենք բաց ենք թողնում Բաղամեանի խօսքերի և յաջորդ միւս վիճաբանութիւնների շարունակութիւնը՝ մինչև 9-րդ երեսը, որը սկսւում է այսպէս.— ...«ներկայացնելով օրակարգը»։

Ընդմիջումից յետոյ ժողովը վերսկսեց ժամի 11-ից տասը րոպէ անց։

Պարոն նախագահը բարձրաձայն կարդում է օրակարգը, որը կազմւել էր հետևեալ կերպով.

1. Ընկերութեան վարչութեան զեկուցում։

2. Ներկայ մոմենտը և ընկերութեան անելիքը։

3. Ընկերութեան կանոնադրութեան 7-րդ, 10-րդ և 16-րդ կէտերի փոփոխութեան խնդիր։

4. Ընկերութեան նախագահի և ընկերութեան վարչութեան նախագահի փոխ-յարաբերութեան և փոխադարձ իրաւունքների կօմպետենցիայի խնդիր (առաջարկութիւն ընկերութեան անդամ Տելեմաք Բաղամեանի)։

5. Ընթացիկ հարցեր։

«Այս է մեր այսօրւայ ժողովի օրակարգը»,— ասաց պ. նախագահը և երկրորդ անգամ կարդալով օրակարգի բոլոր հինգ կէտերը՝ աւելացրեց.— «Այս օրակարգը համապատասխանում է մեր ժողովրդի այժմեան կարիքներին։ Խորապէս համոզւած եմ, որ այսպիսի մի ժամանակ, երբ արտաքին թշնամին սպառնում է ոչնչացնել մեզ՝ մենք աչալուրջ կերպով կը վերաբերւենք այս հարցերին։

Բաղամեան (վեր է կենում).— Ես առաջարկում եմ...

Նախագահ.— Նախ ձայն խնդրեցէք։

Բաղամեան.— Ձայն եմ խնդրում։

Նախագահ.— Խօսքը պատկանում է պ. Բաղամեանին։

Բաղամեան.— Ես առաջարկում եմ՝ ահա այս օրակար-

գի կէտերի յաջորդականութիւնը փոփոխութեան ենթարկել։ 4-րդ կէտը, որ իմ առաջարկութեան հիման վրայ է մտցուել օրակարգի մէջ, «ընկերութեան նախագահի և ընկերութեան վարչութեան նախագահի փոխ-յարաբերութեան և փոխադարձ իրաւունքների կոմպետենցիայի խնդիրը».— ահա այս 4-րդ կէտը կարևոր է դարձնել առաջին, առաջնագոյն կէտ, ուրիշ խօսքով ասած, «վարչութեան զեկուցումը» կէտի փոխարէն, որը դրուած է ամենից առաջ, կարևոր է դնել «ընկերութեան նախագահի և ընկերութեան վարչութեան նախագահի փոխ-յարաբերութեան և այլն», այսինքն իմ առաջարկութիւնը։

Ժողովականների միջից լսուում են ձայներ, թէ «օրակարգը լաւ է կազմուած, ոչ մի փոփոխութիւն հարկաւոր չէ»։

Ի լրումն իր արած վերջին առաջարկի, ուսուցիչ Բադամեանը ասում է, որ «իմ առաջարկած փոփոխութիւնը սերտ կերպով կապուած է մեր ներկայ ազգային-սոցիալական դրութեան հետ, որովհետև մեր ընկերութեան այժմեան վարչութեան նախագահը, որ ահա գտնուում է այստեղ՝ չի կարողանում ըմբռնել, որ...

Նախագահը խիստ և մի քանի անգամ զանգահարում է՝ յայտարարելով, որ ինքը թոյլ չի տայ վիրաւորել անդամների։ Ժողովականներից մի քանիսը բողոքում են պ. Բադամեանի խօսքերի դէմ և նախագահը քւէարկութեան է դնում հարցը։ Ձայների մեծամասնութեամբ որոշւում է անփոփոխ թողնել օրակարգի հինգ կէտերի յաջորդականութիւնը։

Դրանից յետոյ ընկերութեան վարչութեան նախագահ Տ. Աբրահամեանը մի ընդարձակ գրաւոր զեկուցում է կարդում։ Զեկուցումը լսելուց յետոյ ժողովը անցնում է «ներկայ մոմենտը և ընկերութեան անելիքը» կէտին։

Սկսում է կարծիքների և հայեացքների փոխանակութիւն։ Բայց ժամանակը ուշ լինելու պատճառով, ժողովի շարունակութիւնը յետաձգւում է յաջորդ օրւան։

«Խնդրում եմ, պարոններ,—ասաց նախագահը՝ ժողովը փակւած յայտարարելով,—խնդրում եմ բոլորիդ վաղը երեկոյեան ժամի ճիշտ $7^1/_2$-ին անպատճառ ներկայ գտնւել։ Հարկաւոր է լուրջ վերաբերւել գործին»։

Ժողովը վերջացաւ գիշերւայ ժամի մօտաւորապէս 1-ին։

Վ. ՎԱԼԱԴԵՍԱՆ

„ԱԼՄԱՆԱԽԻ“ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԸ

(ՇԱՐԺ ՄԻՔ. ՄԱԶՄԱՆԵԱՆԻ)

ՍՏ. ՁՕՐԵԱՆ

Մ. ԷՓՐԻԿ

ԿԱԲԱՐԷԻ ՊԱՐՈՒՀԻ

Օ՜, ես քեզի շատ եմ դիտեր
Խորհրդաւոր, խորհրդաւոր պարի աղջիկ.
Տեսեր եմ քեզ մեղքի, թախծի խելառ թիթեռ՝
Կաբարէի պարուհի...
Կընատիս դուն ծունկըդ ծնկանդ
Երկար, երկար.
Ու մոռացման երազանքին հիւր կերթաս։
Ու երբ յանկարծ կը զարնէ
Մուզիքային ծնծղան,
Դուն ալ դուն չես,
Դուն ալ ան չես.
Կելլաս վազով ինձ կը կանչես.
Դէմքըդ տապ-գոյն, աչքերըդ հուր
Ու միսերըդ ինքնազլուխ կը պարեն։
Ու ձեռքըդ երբ կերկարես,
Զը գիտես թէ ինձ ալ քեզ հետ
Խելառութեան կըտանիս.
Զիղերուս մէջ կենսատենչ
Խարոյկները կը հրդեհես,
Մինչև շունչըդ վերջին
Կը պարես, կը պարես, կը պարես դուն
Մուզիքային արբեցուցիչ վալքին տակ,
Մինչև անոր հնչիւնները կը հալին։

Հնչիւնները շունչիդ հետ
Ու շուրթերէդ ալ, շիկնած
Սա բառերը կը սորայ.
«Ա՜հ, ինչ աղուոր, ինչ լաւ է սա,
Ի՛նձ ալ, քեզ ալ մոռցայ, մոռցայ. .»

ՃԵՐՄԱԿ ՎԱԼ'ՍԸ

Ինչո՞ւ ես հագել էդ ամպոտ շորերդ,
Որ փրփո՞ւր, փրփո՞ւր կը թափա.
Կը լողաս լոյսին տակ անձրևող՝
Կարապի պէս, կարապի պէս ըսպիտակ։

Գիշերը քուկինդ է, թևաւոր թագուհի,
Պարերով արբեցի՛ր, պըտըտի՛ր, պըտըտի՛ր,
Երազներս առ քու թևին տակ պարուրէ,
Ի՛մ խելքի ու մտքի բանալի...

Սուրալով մորթոտէ միտքըս հիւանդոտ,
Գլխապտոյտ դարձրո՛ւ տիեզերքը քեզ հետ.
Կապտաչեայ երազներըս խնկահոտ
Զօնէ, արծաթ թևերով իմ կարապ գիշերուայ։

Դէ փռէ ճերմակ փէշերդ թաւիշեայ,
Դուն մեծ ծով անծնունդ ու անվերջ յոյզերու,
Անբասիր, ամփոփիր լուսակաթ քու գրկում
Բի՛ւր փրփուր խելայեղ հաճոյքի.

Որպէս ծով հեղեղիր կարկաչով
Դահլիճին կամարներն անժպիտ
Ու փռէ քու խելառ վալ՛սով
Արբեցո՛ւմ, արբեցո՛ւմ, արբեցո՛ւմ...

Ոտիդ տակ ըսպիտակ մարմարն է.
Դէ՛, պարէ՛, պարուրէ երազներս անուժ,
Քու ծոցում կապո՛ւյտ երազներ լեցուն,
Դէ՛, սուրա՛.
Ոտիդ տակ ըսպիտակ հոգիս կը լողայ...

Արտ. Յարոյեան



* * *

Աղօթք չունի յոգնած հոգիս այս ուշ պահուն,
Այս ուշ պահուն խօսքեր չունին շուրթերս անգոյն.
— Ողջը տուի, ողջը տուի քո լոյս հոգուն
Ու աչքերիդ, ծով աչքերիդ ծովից անհուն։

— Ո՞րտեղից ուր հանդիպեցիր օրերիս ուշ,
Ո՞րտեղից ուր տարածեցիր հմայքդ անծայր,
Ո՞րտեղից ուր ճառագայթեց հոգիդ պայծառ,
Հոգիդ պայծառ, հայեացքդ լոյս, սիրտդ անյուշ...

Իր Աստծոյ հետ խորհուրդ չունի հոգիս հիմա.
Զրոյց չունի իր սրտի հետ ժեռութեան մէջ.
— Ոսկեզօծուեց այսօր քեզնով կրկին մի էջ
Իմ օրերիս պատմութեան մէջ... ու կրմնայ
Անջնջելի անունը քո որպէս կնիք հոգուս վրայ,
Որպէս փականք սրտիս վրայ խոստումը քո.
— Ո՞րտեղից ուր էս լուսազարդ երկնի ներքոյ
Շղթայեցին մեզ իրարու—երկրի վրայ։

Հէյլի

ԳԱՆՁ

Մեր քեռի Սիմոնը շատ չքաւոր մարդ էր, այնքան չքաւոր, որ շատ օր հաց չէր ունենում տանը և կինն ըստիպւած գարի էր խաշում երեխաներին կերակրելու, իսկ աղջկերքն իրենց գլուխը պահելու համար գնում էին հարևանների մարգերը քաղհանելու կամ ուսնորների բարձերի համար փետուր էին քաշում ձմեռները։

Ես այս բոլորը լաւ յիշում եմ, որովհետև այդ ժամանակները տասը տարեկան մի տղայ էի և շուտ-շուտ գնում էի նրանց տուն։ Չնայած իր այս չքաւորութեան, քեռի Սիմոնը սակայն տարւայ մեծ մասը անգործ էր մնում և առհասարակ այն կարծիքի էր, որ Աստուած իր ստեղծածին պարտաւոր է պահել, ինչպէս թռչուններին։ Լինելով տատիս եղբայրը՝ նա գրեթէ ամեն օր գալիս էր մեր տուն զրուցելու, մանաւանդ ձմրան երկար երեկոներին։ Դա մի բարձրահասակ մարդ էր՝ երկար ձեռներով ու երկարուն ոտներով և կոկորդից դուրս ցցւած մի ոսկորով, որ կարծես բկում ճնացած հաւի գլուխ լինէր։ Իսկ երեսի և գլխի ալեխառն մազերն ինձ միշտ յիշեցնում էին նապաստակի մորթի. այնպէս դժւար էր չոկել նրանց սևն ու սպիտակն իրարից։ Եւ ընդհանրապէս՝ մեր քեռի Սիմոնը մի իսկական գիւղացի էր—նահապետականօրէն աւանդապահ ու սրտաբաց։ Կարծես հիմա էլ տեսնում եմ, թէ ինչպէս սև մորթեանին գլխին, սև չիբուխն ատամների արանքին, բանում է մեր տան դուռը և շէմքում կանգնում։

— Բարի օր ձեզ,—ասում է հանդիսաւոր ձայնով,

և մի առժամանակ կանգ առնելով՝ հայեացքը պտտում տան մէջ։

— Աստծու բարին, քեռի Սիմոն։

— Ի՞նչ ունէք ուտելու։

Մերոնք տալիս են կերակրի անունը.—թանով ապուր կամ բընձով շորբա։

— Դէ, մի ման բերէք տեսնեմ։

— Համեցէ՛ք, քեռի Սիմոն։

Եւ քեռի Սիմոնն ինչպէս իր տանը նստում է եղած կերակուրն ուտելու, վրան չկաթեցնելու համար գդալի տակ հացի մի կտոր բռնելով։ Ու կշտանալուց յետոյ սկըսում է պատմել, թէ ինչ երազ է տեսել գիշերը։

Այսպէս էր քեռի Սիմոնը. գրեթէ ամեն գիշեր նա երազ էր տեսնում. ու նրա երազները լինում էին առաւելապէս այն մասին, թէ ինչպէս Աստուած, սրբերը ներկայանում են նրան և ասում, թէ անտառի այս-ինչ տեղում գանձ կայ թաղուած—մը պղինձ ոսկի՝ խուփն երեսին—ու խորհուրդ են տալիս հանելու. «Ե՛լ, Սիմոն, գնա՛ հանիր,—ասում է Աստուած.—գնա՛, բաւական է խեղճ ապրես»։

— Այսպէս է հրամայում Տէրը,—վերջացնում էր ամեն անգամ քեռի Սիմոնն աստուածավախ ձայնով, երեսը խաչակնքելով։

Տատս, որ մի բարի, միաժամանակ և շատ յամառ կին էր, երբէք չէր հաւատում եղբօր երազներին, կըշտամբելով, որ նա երեխայ ժամանակ էլ փողոցներում պտտում էր փող գտնելու յոյսով, բայց բնաւ չէր գըտնում։ Ու բոլորից վերջը տատս յիշեցնում էր նրան եօթ ռուբլի պարտքը, որ տալու էր իրեն։ Իսկ ինչ վերաբերում է մօրս, նա՝ ամենայն բարեպաշտութեամբ ունկընդրելով քեռի Սիմոնին՝ երկիւղով խաչ էր քաշում երե-

սին ու հետաքրքրվում, թէ ինչ տեսակ մարդ է Աստուած, ինչպէս են երևում սրբերը և ինչ կայ առհասարակ նրանց վրան ու հագին։

— Սրբերը,—խաչակնքում էր երեսը քեռի Սիմօնը,—մեռնեմ նրանց զօրքին. նրանք երևում են ալ-կարմիր հագած, շատ ժամանակ՝ ձի նստած... Իսկ Աստուած —երեսս ոտքի տակը—գալիս է սիպտակ շորերով։ Ծեր, ալևոր մարդ է,—ասում էր նա երկիւղալից խանդաղատանքով.—բամբակի պէս սիպտակ մազեր ունի։ Էնքան բարի է, էնքան քաղցր ձէն ունի, որ երբ խօսում է՝ ուզում ես մի՛շտ լսել։ Ասում է. «որդի՛ս, գնա՛ ու հանիր, գնա՛ ու հանիր»։

— Հ՛ն՛չ բան էլ չես հանի,—նկատում էր տատս ձեռը անյուսալի թափ տալով և երեսը եղբօրից շրջելով։

— Կը հանեմ, Հերիքնազ, կը հանեմ. կը հանեմ ու քո օխտը մանէթը կը տամ. գլխից կը տամ. աղջկերանցս էլ մարդու կը տամ, տուն էլ կը շինեմ...—յայտարարում էր քեռի Սիմօնը հանդիսաւորապէս և մի առ մի օրինակներ թուում, թէ որտեղ ինչ թագնված գանձեր են հանել.—Լսում, ասում են, մինը մի կճուճ ոսկի է գտել արտը վարելիս ու հիմի յայտնի հարուստ է։ Դսեղում մի ռանճպար մարդ, ասում են, արծաթէ ամաններ է գտել հողում, երրորդը՝ գութանի սարք։ Իսկ ես ինչո՞ւ չեմ կարող գտնել. ուրեմն սո՞ւտ է ասում Աստուած։ Կը հանեմ, Հերիքնազ. կը հանեմ։ Կինս էլ չի հաւատում քեզ պէս, բայց կը հանեմ, կը տեսնես,—կրկնում էր քեռի Սիմօնը. —միայն թէ մի հաւատարիմ օգնական ունենամ...

Այս ասելով՝ նայում էր հօրս. իսկապէս նա ուզում էր, որ այդ օգնականը լինի անպայման հայրս, որին և շարունակ առաջարկում էր գնալ գանձը միասին հանելու։ Մենակ չէր ուզում, որովհետև, իր ասելով, միայնակ դըժուար կը լինէր. ուրիշի էլ չէր կամենում ընկերացնել, որով-

հետև՝ ուշ կարելի էր վատահել հիմա... Հայրս թէև, իբրև հին գիւղացի, մասամբ հաւատում էր քեռի Սիմօնի երազներին, բայց, չգիտեմ ինչու, միշտ խուսափում էր նրա առաջարկից, ասելով թէ՝ դժուար է գտնել, տեղը հաստատ յայտնի չէ, և ուրիշ բաներ։ Եւ քեռի Սիմօնը նրա մերժումներից դժգոհ՝ հեռանում էր ամեն անգամ միևնոյն խօսքերը կրկնելով.

— Դէ, դու գիտես։ Ասում եմ մի բանի տէր էլ դու դառնաս...

Բայց հօրս յամառութիւնը, վերջապէս, կոտրուեց մի օր, երբ քեռի Սիմօնն անչափ ուրախ, խնդութիւնից ասես խելագար, նեռւեց մեր տուն և յայտարարեց, թէ գանձի իսկական տեղը գտել է արդէն։ Դա անտառի մէջ է, աւերակ եկեղեցու մօտ, մի մեծ հաճարենու տակ։

— Գիտէք,—սկսեց նա խանդաղատալից եղանակով, երկար ձեռները գլխից վեր բռնած.—Նշանց տուեց Տէրն Ինքը, Տէրն Ինքը Իրա ձեռով։ Եկաւ ու ասում է բարկացած. «Ինչի՞ չես գնում ասածս հանում. դու Ինձ չե՞ս ուզում լսել. ես քու աչքերը կը հանեմ»—ասում է։ Բայց Իրա աչքերը բարի՞, բարի են... «Տէր, ասում եմ, տեղը չգիտեմ»։ «Չգիտես, ասում է, արի ցոյց տամ»... Ու ձեռքս բռնած տարաւ կանգնեցրեց մի մեծ հաճարի ծառի մօտ ու ասում է. «Հէնց սրա տակ է որ կայ»... Ու ինքը գնա՛ց, գնաց. չտեսայ էլ ուր գնաց...

Մի առժամանակ Սիմօնը մնաց գոհութեան լուսաշող ժպիտը դէմքին և ապա դարձաւ հօրս.

— Հը՛, հիմի ի՞նչ կասես... Ես, ասենք, մենակ էլ կերթամ, բայց լաւ կլլի, որ դու էլ ըլես. երեխի տէր ես, թող մի բան էլ քեզ ընկնի։ Դրա համար, յոյս ունեմ, Տէրն ինձ չի պատժի. շատ-շատ՝ իմ քրոջ տղէն է, կասեմ։

Հայրս ծիծաղեց։ Դա նշան էր, որ տրամադրութիւնը լաւ է։ Եւ իսկապէս, չգիտեմ, քեռի Սիմօնի հանդիսաւոր

պատմութեան ազդեցութեան տակ, թէ՞ մօրս յորդորների հետևանքով, նա համաձայնութիւն տուեց քեռի Սիմօնին ընկերանալու։ Որոշուեց հետևեալ օրն իսկ մի զոյգ աղաւնի զոհաբերել մեծ հաճարենու տակ և երեկոյեան, երբ մութը լաւ կը մթնի, գնալ հանելու։

Այդպէս էլ արին։

* * *

Ի՜նչ երջանիկ երեկոյ էր այդ երեկոն...

Ի՜նչ յոյսեր, ի՜նչ երազներ էին սաւառնում մեր փոքրիկ խրճիթում։ Ինչպէ՞ս չպիտի անենք, եթէ մեր ձեռն ընկնի այդ մի կաթսայ ոսկին. էլ նոր տուն, էլ նոր շորեր... ցոյց կըտանք այն ժամանակ բոլոր հարուստներին... Քեռի Սիմօնն ուրախութիւնից շարունակ կատակում էր տատիս հետ. «Ճակատիդ ոսկի պըտի շարեմ, ոսկի». իսկ տատս կրկնում էր միալար. «Քու ոսկին ինձ պէտքը չի, իմ օխտը մանէթը տուր»։

Վերջապէս, երբ մութը լաւ մթնեց և ոտքը խաղաղեց գիւղում, քեռի Սիմօնն ու հայրս՝ բահ ու քլունգ վերցրած՝ դուրս եկան տնից։ Քեռի Սիմօնը ոսկու համար տանում էր իւղի մի տիկ, կաթսան ծանր լինելու դէպքում կէսը նրա մէջ լցնելու նպատակով։ Մենք արթուն մնացինք սպասելու։

Երկար, շատ երկար տևեց այդ սպասումը։ Եւ որքան երկարում էր ժամանակը, այնքան աւելի յոյսերով լցւում էր մեր սիրտը. ուրեմն մի բան գտել են, որ ուշանում են... երևի շատ խորն է թաղուած... անպայման մի բան գտել են...

Չգիտեմ, քանիերորդ անգամն էինք կրկնում այս մտքերը, երբ դուռը թակեցին յանկարծ։ Հայրս էր... բայց դատարկ ձեռներով։ Ինչո՞ւ, մի՞թէ ոչինչ չկար, քեռին ո՞ւր

է հապա—հարցերի տարափ էր, որ տեղում էին հօրս գլխին։ Իսկ տատս, հօրս տեսնելով այդպէս, գլուխը շարժեց քմծիծաղով։—Ես էդպէս էլ գիտէի, որ ոչինչ չի ելի։—յայտարարեց նա։—Գիտէի էլի...

Բայց տատս զուր էր շտապում։ Հայրս եկել էր լինգի։ Նրա պատմածից երևաց, որ քանդել հասել էին մի սալաքարի, որը սակայն չեն կարողանում շրջել, ուստի եկել է լինգը տանելու այդ քարը շրջելու, և ինձ վերցնելու, որ պահակի դեր կատարեմ։ Ո՛վ գիտի, կարող է պատահել մարդիկ գան և իրենք զբաղուած՝ չնկատեն։

— Որ սալ կայ, ուրեմն պղինձն էլ դրա տակ կելի,—ասաւ մայրս։

Հայրս էլ այդպէս էր կարծում, և ամբողջ ճանապարհին շշուկով կրկնում էր, թէ այդ սալի տակ անպատճառ մի բան պիտի լինի... Ժամանակը գիշերուայ կիսից անց էր. աշնանային խոնաւ մութը սարսափ էր բերում իմ վախկոտ հոգուն. ճանապարհի շուրջը երևացող թփերը թւում էին ինձ դարան մտած գազաններ, ծառերը՝ աւազակներ ու վարդապետներ, իսկ մասրենիները՝ պար բռնած սատաններ։ Չնայած այս բոլորին, մի բան այնուամենայնիւ ինձ դիւթում, քաշում էր դէպի մութ, խրշշացող անտառը, ուր, թւում էր թէ, քեռի Սիմօնն արդէն հանած պիտի լինի ոսկին... Բայց մենք նրան գտանք տակաւին փոսի մէջ. սաստիկ հևում և քրտինքը սրբում էր շուտ-շուտ։ Մեզ տեսնելով՝ նա գլուխն աւելի բարձրացրեց փոսի մէջ։

— Եկէք, եկէք. սայլը ժաժ եմ քցել,—գրեթէ բացականչեց նա ակնյայտնի մի հրճւանքով։

Փոսը բաւական խոր էր. քեռի Սիմօնի գօտկատեղից էլ բարձր։ Անտառային փխրուն հողը կիսաւել էր նրա երկու կողմը և սևին էր տալիս գորշ շրջապատի մէջ։ Հայրս խակոյն լինգը ձեռին մտաւ փոսը, և այնուհետև սկսս-

ւեց մի ծանր աշխատանք՝ տնքոցով ու մկանունքների լարումով։ Աստծուն օգնութեան կանչելով՝ ուսերնին դնում էին նրանք լինգի տակ և ջանում սալը շրջել, երբեմն ականջնին սրելով, թէ չի՞ լսւում արդեօք մի ոտնաձայն։ Ոչինչ չկար։ Ես ամենայն աչալրջութեամբ կատարում էի իմ պաշտօնը, բայց ոչինչ չէի նկատում։ Տերևներն էին միայն թափւում աշնան անտառում, որ ահի մի դողով բռնւած, ասես, ինչ-որ շշնջում էր շարունակ խուլ ու խոր մի ձայնով, որ աւելի նման էր հառաչանքի։ Թւում էր երբեմն, թէ անթիւ մարդիկ՝ աչքերնին չորս արած՝ գաղտագողի նայում են մեզ ծառերի ետևից, որ ոսկին դուրս գալուն պէս յարձակւեն յափշտակելու։

Երկար, շատ երկար տևեց աշխատանքը փոսում. և բազմաթիւ փորձերից յետոյ, վերջապէս, յաջողւեց սալը շրջել։ Բայց այն, ինչ որ սպասում էինք՝ չկար, աւա՜ղ։ Ոսկու փոխարէն դուրս եկան մեռելի ոսկորներ... Այդ տեսնելով՝ հայրս վրդովւած դուրս եկաւ փոսից, իսկ քեռի Սիմօնը մի առժամանակ մտածմունքի մէջ ընկաւ։

— Է՛, ինչպէս երևում է, սխալւել ենք,—ասաւ նա քիչ յետոյ.—հաճարի էն կողքը քանդելու տեղակ՝ էս կողքն ենք քանդել. հիմի եմ յիշում, որ էն կողքը պըտի քանդէինք։

Հայրս աւելի վրդովւած հաւաքեց բահն ու լինգը և կանչեց ինձ։

— Ո՞ւր...

— Տուն,—եղաւ հօրս պատասխանը։

— Կաց հլա, ա՛յ մարդ. կա՛ց, մի էն կողքը քանդենք...

— Դու հանի քեզ ըլի,—ասաւ հայրս վերջին անգամ, և մենք ճանապարհ ընկանք։

Մեր ետևից քեռի Սիմօնը ցածր ձայնով մի քանի անգամ կանչեց, խնդրեց դառնալ, բայց հայրս մնաց անդրդւելի. ետ անգամ չնայեց։

Տուն հասանք երկրորդ աքլորականչին՝ հիասթափ-ված ու տրտում...

***

Հետևեալ օրն առաւօտեան հենց նոր նստել էինք թէյի, քեռի Սիմոնն եկաւ՝ դարձեալ ուրախ տրամադրութեան մէջ։

— Չէի ասում,— սկսեց նա շէմքից.— էդպէս էլ կայ. մենք սխալուել ենք։ Գիշերն աչքս կպցրի թէ չէ՝ նորից երևաց Նա (քեռի Սիմոնը խաչակնքեց երեսը)։ Ասում է՝ «ինչու ծառի աջ կողքը քանդեցիր. գնա, ասում է, ձախ կողքը քանդիր»։

— Դէ գնա քանդիր էլի,— ասաւ հայրս դժգոհ հանդարտութեամբ.— Ինձ ինչու ես ասում որ։

— Խի՞, բա դու գալիս չե՞ս։

— Չէ։

Խի՞ որ։

— Էնպէս...

Քեռի Սիմոնը լուռ, դժգոհ հայեացքով չափեց հօրս ոտից-գլուխ և արագ շրջուեց դէպի դուռը։

— Դէ մեղքն ու վարձքը քու վզին, ախպէր,— ասաւ նա շէմքից.— ասում էի՝ մի բանի տէր էլ դու դառնաս...

Ու գնաց։

Երկու օրից յետոյ սակայն նա դարձեալ եկաւ և անկեղծօրէն յայտնեց, թէ էլի շշկլուել է. պէտք էր քանդել ոչ թէ մեծ հաճարենու տակ, այլ նրա կողքի հաճարենու, ուր հենց նշաններ են նկատուում. հողը նստած է մի քիչ։ Այդտեղ անպատճառ մի բան կայ։ Եւ, վերջապէս, չի կարող պատահել, որ չլինի. չէ՞ որ առաջ, մեզանից շատ առաջ, այդտեղ գիւղ է եղել. եկեղեցի կայ. և շատ բնական է, որ մարդիկ թուրքերի երեսից փախչելու ժամա-

նակ իրենց գանձերը թագցրած լինեն այդտեղ։ Ի զուր չէ, վերջապէս, որ երազում միշտ ցոյց են տալիս։

Հայրս սովորաբար լռում էր. տատս սակայն առաջ-այ պէս շարունակում էր իր կասկածանքն ու կշտամբանքը յայտնել։ Բայց քեռի Սիմօնն ամեն անգամ ասում էր հպարտ արժանապատուութեամբ.

— Կը տեսնես հիմի՝ կը գտնեմ, թէ՝ չէ։ Կը տեսնէք...

Անցաւ մի ամիս, երկու ամիս, քեռի Սիմօնը բան չէր գտնում և կինը շարունակ գալիս էր տատիս գանգատելու, որ մարդը գիշերները տանը չի մնում ու խընդրում էր եղբօրը բան հասկացնել։ Իսկ մինչ այդ ձմեռը եկաւ. ձիւնը ծածկեց գիւղ ու անտառ, և գետինը սառաւ քարի պէս։ Երբեմն այնպէս ցրտեր էին լինում, որ ծառերը երամով մտնում էին գոմերը և գայլերը գիշերները ոռնում էին գիւղի մօտ։ Քեռի Սիմօնն այժմ ման էր գալիս իր հին, մաշած քուրքն ուսերին. իր երեկոները նա անցնում էր օդաններում կամ գալիս էր մեր տանը զրուցելու։ Եւ ամեն անգամ երբ խօսք էր լինում գանձի մասին, նա տխրութեամբ նայում էր վառարանին և կրկնում.

— Սպասէք, սպասէք մի գարունը բացւի... կըտեսնէք... Մի բան որ տեղը գիտեմ...

Եւ, իսկապէս, մարտին, երբ ձիւնները կամաց-կամաց հալ ընկան և գետինը փափկեց, քեռի Սիմօնն այժմ աւելի մեծ եռանդով վերսկսեց իր աշխատանքները։ Այժմ նա ասում էր ոգևորուած. «Ըհը, եա էսօր, եա էգուց» .. Բայց օրերն անցնում էին օրերի ետևից և ոչինչ չէր լսւում, թէ քեռի Սիմօնը մի բան է գտել. ու մի օր էլ յանկարծ լսեցինք, որ նա հիւանդացել է՝ սաստիկ հազում է ու տնքում։ Կնոջ ասելով՝ մի գիշեր անտառից եկել էր ու անկողին մտել։ Տատս իսկոյն գնաց եղբօրը տես։

Զանցաւ սակայն մի երկու օր, քեռի Սիմօնը վախճանուեց։

Մեռնելուց մի ժամ առաջ նա յայտնել էր կնոջը գանձի տեղը և յանձնարարել՝ գտնել մի հաւատարիմ մարդ՝ հողի տակից այդ պահուստը հանելու։

— Խոստացիր որ կը կատարես,- ասել էր քեռի Սիմօնը։

Կինը խոստացել էր և նա հանգիստ փակել էր աչքերը։

Այժմ յայտնի չէ ինձ՝ կինը կատարե՞լ է նրա կտակը թէ՞ ոչ, բայց ես այսքանը կարող եմ ասել, որ քեռի Սիմօնի ընտանիքը մինչև այսօր էլ ապրում է առաջուայ պէս չքաւոր, իսկ անտառում՝ աւերակ եկեղեցու շուրջը, կան բազմաթիւ փոսեր՝ պատուտակներով ծածկուած ու հին տերևներով լիքը. և ամեն անգամ, երբ տաւարն արածելու ժամանակ անզգոյշ ոչխարները կամ նոյն իսկ կովերն ընկնում են նրանց մէջ՝ տաւարածներն անլուր հայհոյեանքներ են ուղղում փոսեր կտրողի հասցէին։

Իսկ այդ բոլորը քեռի Սիմօնի կտրած փոսերն են։

ՍՏ. ՋՕՐԵԱՆ

* * *

Էս լուռ գիշերին մտքերիս հետ փակ
Ցիշեցի անդարձ օրերս նորից.
— Որքան տառապանք ապրել եմ մինակ,
Որքան մութ օրեր լուռ, անկարեկից,
Ու որքան տանջանք ապրել եմ մինակ։

Պայծառ հաւատով ես կեանք տեսնչացի,
— Որքան դառնութիւն, կսկիծ կար ձեր մէջ
Օրեր իմ տխուր, գիշերներ լացի
Որ դրոշմել էք թախիծով անվերջ
Եւ բաց ճակատիս և փակ սրտիս մէջ։

Լէյլի

---

* * *

Դու այստեղ հետս ես, այնպէս մօտ, իմ քով,
Կասես հէքեաթուհի եմ կամ երազում...
Համբուրում եմ քեզ ու հարբում թոյնով,
Գուրգուրանքներիդ հրում տապակւում։

Սրտիս լարերը հնչում են մեղմիկ,
Օրհներգում տեսնչանք, փայփայանք ու սէր.
Համբուրում եմ քեզ ջերմագին, լռիկ,
Լռութեան մէջն են իմ իսկ տանջանքներ։

Հզօր իմ կամքով պահում եմ զաղտնի
Թէ որքան սիրում, հեծում է հոգիս,
Ի՞նչպէս ամեն ժամ վառ կարօտով լի
Ես միշտ քեզ հետ եմ, միշտ քոնը, հոգի՜ս...

Բայց դու հէքեաթ ես ու սոսկ երազանք,
Մի վայրկեան... և դու թռար ու անցար...
Ու նորից արցունք, ու նորից տանջանք
Անդարձ հէքեաթի—ցնորքի համար։

Արուս Բ.

ՅԱՐՈՒԹԻՒՆ ՄԵԼՔՈՒՄԵԱՆ

(Ա. Կ Ն Ա Ր Կ)

Մեր «ժողովրդական» հեղինակները (կամ լաւ է ասենք ժողովրդի կեանքից գրող հեղինակները) հայ գիւղացուն դարձնելով իրենց երկերի նիւթ՝ մեծ մասամբ վերջինիս նկատել են իբրև մի միջոց հասնելու համար աւելի կողմնակի քան ուղղակի նպատակների։ Մեծ մասամբ ենք ասում, որ տեղիք չտանք կարծելու թէ մեր հեղինակները ուղղակի նպատակներ էլ են ունեցել։ Մեր ժողովրդի կնանքի զարգացման պայմանները և դրանցից բղխած հայեացքները հէնց այդպէս էլ պիտի անդրադառնային մեր գրականութեան մէջ։ Ժողովուրդը լուսաւորելու, հասարակութիւնը կազմակերպելու, ազգը ազատագրելու անհրաժեշտ պահանջները մեր հեղինակներին դարձրին քարոզիչներ, ռահվիրաներ, հրապ-ուրակախօսներ, և նրանց գրական ուղղութիւնը դարձաւ աւել կամ պակաս չափով տենդենցիոզ։ Հայ գիւղացին միջոց էր մի որև է հասարակական գաղափարի արտայայտման։ Ազգային, հասարակական, դասակարգային և այլ տենդենցները այսպէս թէ այնպէս խանգարել են, որ հայ հեղինակը հայ գիւղացուն դուրս բերէր նախ իբրև մարդ, որի հոգեկան կեանքը պատկերուած լինելուց յետոյ թող հեղինակի գիտումից անկախ և ինքնաբերաբար հայ գիւղացին երևար իր ազգային, հասարակական կամ դասակարգային գոյներով։ Մեր հեղինակները մեծ մասամբ քիչ են հետաքրքրուել հայ գիւղացու մարդկային կողմերով։

Հայ գիւղացին ամեն բան եղաւ մեր վէպերում և պատկերներում՝ բացի մարդ լինելուց։

Ահա այս թերին էր, որ պիտի լրացուէր մեր նոր հեղինակների ձեռքով։ Արդեօք նրանք են այդ նոր առաքեալները թէ դեռ երկար պիտի սպասենք այդ օրուան։ Դժուար է պատասխանել։ Բայց հատուկտոր ակնարկները, հաղուադէպ փաստերը երբեմն գրաւում են մեր ուշադրութիւնը այդ կողմից՝ եթէ մենք զգայուն ուշադրութիւն ունենանք...

Հանգուցեալ Յարութիւն Մելքումեանը, զանգեզուրցի, ուսուցիչ գաւառական դպրոցի, երիտասարդ ուսանող Դորպատի համալսարանում և պատերազմի շրջանում սպայ ռուս և հայ բանակներում՝ հետաքրքիր է ահա վերոյիշեալ տեսակէտից։

Սկսնակների գործի մասին վերջնական խօսք չեն ասում սովորաբար։

Պատասխանատու եզրակացութիւններ էլ չեն անում։

Բայց գուշակութիւններ, ենթադրութիւններ կարծում ենք թոյլատրելի է, մանաւանդ որ ժահը,—տարերային մի հանգամանք,—արդէն վերջ է տուել այս յուսալի սկսնակին։

Յարութիւն Մելքումեանը իբրև սկսնակ՝ ամենից առաջ թերութիւններ ունի. նոյնիսկ այնպիսի թերութիւններ, որ ոմանց աչքում նսեմացնեն նրա մի քանի արժանիքները։ Եւ անշուշտ, գրական գործի անբնական վախճանը այլ ևս թոյլ չի տալու, որ Մելքումեանի մի քանի փորձերը արժէք ունենան։ Ի՞նչ օգուտ, կասէք, եթէ անգամ շատ յուսալից հեղինակ էր նա, չէ՞ որ սրանից աւելի ոչինչ չպիտի տայ, և եղածն էլ թերութիւններով լի է։

Բայց մենք այդպէս չէինք նայիլ խնդրի վրայ։ Մեզ համար ևս խնդիրը փակուած է, բայց Մելքումեանի մի քանի փորձերը կարող են մեր միւս սկսնակների համար գեղեցիկ օրինակ ծառայել թէ ի՞նչպէս պիտի մօտենալ հայ գիւղացուն գեղարուեստական երկի մէջ։ Եւ ինչ որ չկարողացաւ դառնալ Մելքումեանը մահուան արհեստական խափանումով՝ թող մեր սկսնակները այն աչքի առաջ ունենան։

Մեր առջև են Մելքումեանի սակաւաթիւ պատմուածքները գիւղական կեանքից. «Գիւլվարդը», «Ալումը», «Ճատուռնց Անուշը», «Քեաֆուր Աւագը», «Հաճոյքի համար» և այլն։

Ի՞նչ է դրանց նիւթը. ըստ երևոյթին գիւղական օրեայ չարիքը—կուլակներ, խեղճութիւն, տգիտութիւն, բռնութիւն, բան-

տարկւած սէր, նախապաշարմունք... Մեր նախկին «գիւղական» վէպի ծանօթ տիպերը մէջտեղ են.—ահա 13 և 17 տարեկաններ իբրև ամուսիններ, չըբեր մի հարս, սեռապէս անկարող մի ամուսին, նոր են պսակւել, դեռ ամեն ինչ խաղաղ է. ամուսինը գնում է Բագու փող բերելու, վերադառնում է գիւղ. սովորական պատմութիւն. բայց հարսը զաւակ չունի։ Սա խնդիր չէ ամուսիններ ի համար։ Դրութիւնը բարդւել է նրանով, որ սկեսուրը մէջ է ընկել այս խնդիրը լուծելու. ոչ ոք չգիտէ թիւրիմացութեան բուն պատճառը, հարսի չըբերութիւնը որպէս հետևանք տղայի անկարողութեան... Հարսի լեզուն փակ է, տղան լռում է, բայց սկեսուրը, որ թոռան մէջ տեսնում է իր շարունակութիւնը, իր իղձերի կատարումը՝ հալածանք է յարուցել «լեզուն լալիկ» հարսի դէմ։ Ի՞նչ պէտք է անել այս անել կացութիւնից դուրս գալու համար։ Սկեսուրը առաջարկում է մի աւելի անել միջոց— հարսը պիտի իր բարձը փոխէ մի ուրիշ երիտասարդի հետ... Նա շւարած է իր կատաղի սկեսուրի այս առաջարկից։ Բայց սկեսուրը ոտնատակ է տւել ընտանեկան սրբութեան գաղափարը. այստեղ նրա ետն է, որ սանձարձակ բողոքում է թիւրիմացութեան դէմ. նա ուզում է իր սերունդի մէջ շարունակւել. նա տարերային մի մղումն ունի, նա ստիպում է, կռւում, բռնադատում... Եւ ելքը գտնւում է—հարսը ինքնասպանութիւն է գործում։ («Գիւլվարդ»)։

Ահա մի քեաֆուր Աւագ, որ Հնձան գիւղն է եկել հաստատւել։ Ո՞վ է նա, որտեղից, ինչ անցեալ ունի. ոչ ոք չգիտէ։ Եկել ոսկերչութիւն էր անում, յետոյ վարժապետութիւն արաւ։ Մշտական տեղը Հնձան գիւղն է, բայց թափառում է նաև հարեւան գիւղերում։ Երբեմն ծեծւած տուն է դառնում։ Զորա կին էր առել, հինգերորդն էլ կառնէր եթէ չարգելէին։ Ծեծում էր իր կանանց։ Զաւակները փչանում էին։ Մնաց անկին, անզաւակ։ Մեռաւ միայնակ։ Նա ժամագրքի լուսանցքներում մի յիշատակարան էր թողել, ուր ինքը խոստովանում է իր անլուր, անթիւ, ստոր ոճիրները և մեղայ է գալիս։ «Շատ ու շատ կեանքերի քաղցրը հիւթը ծծեցի. ծծեցի, արբեցի, խնդացի ուրիշների տանջանքով, իսկ այժմ անզօր և ոսկրացած եմ ես։ Մեղայ... Զարգարի տասը տարեկան աղջիկը գեղեցիկ էր, նորաբողբոջ վարդի կոկոն. սիրեցի նրան, փչացրի նրան, կորցրի նրան. իմ յանցանքը միայն ես գիտեմ, Տէր...», և այլն։

Ահա Տանձոտ գիւղի քահանան, որ մի կերպ ամուսնացել և քահանայ էր ձեռնադրուել։ Անդորը, կուշտ ապրում էր. բայց ահա կեանքի թիւրիմացութիւնը. կինը մեռնում է, թողնելով հինգ զաւակներ։ «Ասենք երեխաների բանը հեշտ էր. հայրը կարող էր նրանց բարեկամներին տալ խնամելու. ինքն է, որ չէ կարող առանց կնոջ ապրել։ Նա դեռ երիտասարդ է, երեսունհինգ տարեկան առողջ տղամարդ»։

Ո՞ւր է ելքը... Քահանան գտնում է այդ ելքը. «ով իցէ, որ ոչ մեղ իցէ». որբևայրի Շամամին բերում է մօտը իր զաւակներին խնամելու և իր խնդիրը լուծելու։ Չորս տարի ապրեցին. բայց Շամամը յոգնեց «թաւամազ տէրտէրի հաճոյքներից», իր «եթիմն էլ մեծացել է։ Հեռանում է տէրտէրից։ Դարձեալ անել կացութիւն։ «Փարաջան շպրտել և ամուսնանալ չէր կամենում, որովհետև քանի տէրտէր է՝ ուրիշի ցանածը ինքն է հնձում»։ Հիմա էլ ուրիշ ելք է գտնում. իր աղջիկը տալիս է որբևայրի Խանումին և խնամիական երևոյթով փակում է իր ներքին հաշիւը նրա հետ։ Բայց Խանումն էլ մեռաւ։ Եւ ահա տէրտէրը պահում է իր 15 տարեկան որդուն և նրան քաղաք ուղարկելով ինքը է ապրում նրա կնոջ հետ։ Բայց ահա և փորձանքը։ Հարսը յղիացաւ։ Խայտառակութիւնը ծածկելու համար տէրտէրը անյայտացրեց նորածնին, և իր հարսին ամբաստանեց անբարոյութեան մէջ և դուրս արաւ տանից։ («Հաճոյքի համար»)։

Ուրիշ պատկեր։ Մի աղքատ Ալում է ապրում իր համար. աղքատ է, բայց պարտք չի սիրում. «պարտքը իժի աղու է»։ Մի դժբախտութիւն էլ ունի—«ով կիմանար թէ հինգ խիզանի տէր կըլինէր»։ Անել դրութիւն է. կարիքը սեղմում է. բայց Ալումը որոշել է անխօս տանել իր լուծը։ Բայց գիւղի հարուստ Աբգար բէկը չի ուտեցնում իր ինքնասիրութեան, որ Ալումը իրենից պարտք չի վերցնում։ Ուրեմն արհամարհում է։ Ուզում է կոտրել նրան։ Ի հարկէ ամեն չարիքի համար պատրաստ մարդիկ կը գտնուեն։ Գիւղում պարապ գայլեր շատ կան։ Պնակալէզներն էլ իրենց գոյութեանը իմաստ տալ գիտեն։ Աբգար բէկը դաւ է նիւթում Ալումի դէմ։ Խմբովին մի սուտ մուրհակ են սարքում և Ալումին վճարել տալիս։ Ելք.—Ալումը ապանում է Աբգարին և ինքը գնում «բանտ»։

Ահա վերջապէս և ճատունց Անուշը առողջ, կրքոտ և գեղեցիկ, որի ամուսինը Մաթոսը պանդխտութեան է գնացել։ Տանջ-

ւում է սիրակարօտ գեղեցկուհին։ Երազներից արթնացած՝ իզուր գրկախառնւում է իր ծոցը պառկող ինը տարեկան Կարօին։ Ելքը գտնում է. Անուշը իրան տալիս է Ալէքին։ Բայց փորձանքը դարձեալ փակեց ճամբան։ Ահա Անուշը յղիացած է։ Գաղտնիքը յայտնում է տատմէրին։ «Հնարագէտ» տատմէրը վիժել է տալիս Անուշին։ Հիւծւում է Անուշը, հիւանդանում և մեռնում։

Ահա մի քանի պատմւածքների չոր կմախքը։ Ինչպէս տեսնում էք ըստ երևոյթին արդէն վաղուց մշակւած տիպեր են սրանք։ Դէպքերը նոյնպէս։

Բայց սկսնակի ձեռքով անփոյթ մշակած այս պատմւածքների միջից երբեմն բաներ են փայլում, որ արդէն սովորական չեն։ Նախ և առաջ նկատելու է այն վերլուծման մեթոդը, որ կիրառում է հեղինակը հայ գիւղական կեանքը պատկերելիս։ Ի՞նչ է տեսնում Մելքումեանը հայ գիւղական կեանքում, ի՞նչ է որոնում նա այնտեղ։ Արդէն հասարակ բովանդակութիւնը, որ վերև բերինք, ցոյց է տալիս, որ հեղինակը հայ գիւղական կեանքի մէջ տեսնում է շատ խորը հարցեր, մարդ'կային ապրումներ, հոգեբիզիկ դրամաներ և որոնում է նրանց լուծումը։

Կարծում էք հե՞շտ է լուծել այն խնդիրները, որ արծարծում է մարդը Մելքումեանի երկերում։ Ոչ նահապետական կեանքի ոչնչացումը, ոչ ամուսնական հարցի լուծումը, ոչ տնտեսական յարաբերութիւնների հարթումը չպէտք է կարողանան հարթել այն խնդիրները, որ դնում են մեր առջև Մելքումեանի հերոսները։ Այդ խնդիրները կապւած են մարդու հետ և ոչ թէ նրա դիրքի, կոչման, հասակի և այլ արտաքին հանգամանքների հետ։ Մելքումեանի յարուցած հարցերը,—սէր, նախանձ, կիրք, եսականութիւն,—բոլորը մարդկային են և ոչ հայ-գիւղացիական։

Յար. Մելքումեանի մեծ շնորհքը երևում է նաև նրանում, որ նա գաղափարախօս և փիլիսոփայ չէ։ Նրա պատմւածքները կարդալիս ձեր աչքի առջև են գալիս ոչ թէ մտքեր, դատողութիւններ, այլ մարդիկ, որոնք ապրում, զգում են. պատկերներ, որ անցնում-դառնում են կենդանի գոյներով։ Մելքումեանի տիպերը տարերային ուժով են ապրում։ Նրանք բուռն են, կրքոտ, անսեղոն։ Հեղինակը նրանց դուրս բերելով երբեմն կենցաղական, երբեմն տնտեսական, երբեմն բնական միջավայրում՝ բաց է թողնում նրանց, որ արտայայտուեն իրենք, ինչպէս որ կան,—ազատ, անվերապահ, անխնայ։

Մելքումեանը օրիգինալ է, անհարթ և սայթաքող։ Գրում է թափթփած ձևերով։ Զափի զգացումը պակասում է նրան։ Անհոգ է հանգոյցների մէջ, չափազանցումներ շատ ունի։ Բայց և դրանց կողքին նա ունի դիւրին երևակայութիւն, զգացմունք, առողջ շունչ, սիրոյ մի, արևելեան ասենք, ռոմանտիզմ, որ գրուածքին տալիս է հարազատ շունչ և կոլորիտ։ Լաւ գիտէ ժողովրդական բարբառը, ընորոշ դարձուածները։ Գիտէ տիպեր գծել հէնց միայն ճակատի մի շարժումով։

Ամեն տեսակ թերութիւն կարելի է գտնել մեր յիշած առաւելութիւնների հէնց կողքին. բայց մի առաւելութիւն բարձր է Յար. Մելքումեանի գրուածքներում։ Նա զերծ է ամեն տենդենցից։ Նա լաւ հասկացել է իր գործը.—հայ միջավայրում որոնել և դուրս բերել մարդկայինը։

Սխալուած չէինք լինիլ գուշակելով, որ եթէ Յ. Մելքումեանը ողջ մնար և շարունակէր գրական գործը՝ մեզ պիտի ընծայէր յատուկ այն հեղինակը, որին սպասում ենք.—մի հեղինակ, որ հայ գիւղացու մէջ որոնում և գտնում է մարդը և միայն մարդը։

Մի հեղինակ, դէպի որը ձգտում են նաև Յար. Մելքումեանի ժամանակակիցները՝ գրգռելով մեր յոյսերը—Ռէն, Ստ. Զօրեան, Մանուէլեան, Վալադեան, Մարգար և ուրիշները։

Դ. ԳԵՄԻՐՃԵԱՆ

«ՊԱՏԱՆԻ»-Ի ԿՈՐՈՒՍՏՆԵՐԸ

Պատերազմի, յեղափոխութեան և հակա-յեղափոխութեան այս արհաւիրալից տարիներում թւում է, թէ մեռնելն այնքան զարմանալի չէ, որքան կենդանի մնալը։ Երիտասարդ, սկսնակ գեղարուեստական գրողների այն ստուար խումբը, որ սերտ հաւաքւել էր «Պատանի»-ի շուրջը՝ դեռ վերոյիշեալ հասարակական անակընկալներից առաջ, այսօր այնքան թափուր ու ծանծաղ է երևում նրա շարքը, որ մարդ ակամայից մահւան սարսուռի առաջ է ըզգում իրեն։ Մեր օրերի, տարիների ամեն մի շարժում, անպատ հիւանդութիւններ, կարծես յատկապէս ընտել են մեր ծաղիկ հասակների օձիքից ու պոկ չեն գալիս նրանցից։ Դեռ պատերազմի երկրորդ տարին «մեր» Ներսէս Մանուչարեանին, այդ իր դասի՝ բանուորի երգչին, կախեցին նրա համար, որ դէմ էր պատերազմին ու ագիտացիա էր մղում իր զինուորակիցների մէջ։ Արտ. Թումանեան—սպանուեց 1917 թւի Վանի վերջի նահանջի ժամանակ իբրև անձնուրաց հայրենասէր հերոս։ Ռուբէն Մամաջանան, մեր յուսատու երաժիշտներից, սպանուեց Վլադիկավկազում 1918 թւի քաղաքացիական կռուի ժամանակ, որպէս կար մեր բանակի յաղթանակին նախանձախնդիր սպայ։ Յար. Մելքումեանը, այդ մեր յուսատու գիւղական կեանքի բելետրիստի անժամանակ վերահաս մահը, որի մասին «Ալմանախ»-ի այս գրքում տպւած է առանձին յօդւած, Արմենակ Բորեան—«Պատանի»-ի մօտիկ աշխատակից բանաստեղծ, նահատակւած Բագուի 26 նշանաւոր կոմմունիստների հետ միասին։ Կապուտիկեան Բարունակ—այդ մեր շնորհալի բանաստէրը, մահացած տիֆից, և վերջապէս Աւագ Կոժինեանի եղեռնական վախճանը։ Եւ ո՞վ գիտէ, քանի-քանիսների մասին մենք դեռ ոչինչ չգիտենք...

«Պատանի»-ի ընտանիքի համար ծանր էր առանձնապէս Աւագ Կոժինեանի մահը նրանով, որ նա ամենանւիրական աշակիցներից էր մեր գործին՝ գաւառից։ Նա իր գրական ու գործա-

կալական եռանդով ցոյց տուեց, որ առանց Կոծինեանի «Պատանի»-ն զուրկ կը մնար մի բեղմնաւոր գործչից. դրա համար էլ խմբագրութիւնն ամեն մի նոր քայլ անելիս, միշտ հաշուի էր առնում իր ժօտիկ աշխատակցի կարծիքն ու պատրաստակամութիւնը։ Լինելով գաւառական հասուն ու ինտելլիգենտ ուսուցիչ, նա աշխատում էր իր աշակերտներից գաւառական գրողների կադրա ստեղծել, որի համար նա գրական-գեղարուեստական զրոյցներ էր կազմակերպում ու տոն տալիս իր նպատակին։ Չորս տարի գաւառում մնալուց յետոյ նա իրեն նետում է Բագու, մտնում «Արևի» խմբագրատունը,—որպէս աշխատակից։ Բանուորական քաղաքը ի վերջոյ խօսում է նրա մէջ նորանոր հոլերից և ահա Փետրուարեան Յեղափոխութեան օրերից Կոծինեանը կանգնում է ժամանակի հրամայական պահանջների հանդէպ և դառնում է կոմմունիստների գաղափարապաշտ ու պատասխանատու գործիչ։ 1918 թ-ի մեծ նահանջին նա իր բազմաթիւ ընկերների հետ ստիպուած է լինում անցնել Անդրկասպեան երկիրը և նոյն անապատ թափով գործել ու կլիրառել իր գաղափարները՝ որպէս պարագլուխ։ Այնուհետև նա գնում է Մոսկա և կուսակցական հրահանգներով ուղևորուում է դէպի Անդրկովկաս, բայց ճանապարհին, Նովորոսիյսկում, անցած տարուայ սեպտեմբերին ձերբակալուում է նաւի մէջ մի հայ սպայի կողմից և դենիկինեան վճիռը դատապարտում է նրան մահուան պատժի կախաղանի միջոցով—որպէս Բագուի գործօն կոմմունարների զէկը։

Մեր ընկերների եղեռնական մահերի դիմաց կանգնելով մի խօսք միայն ունենք ասելու.

— Հպարտ ենք մենք մեր զոհերի համար։

Յարգանք ձեր անյայտ շիրիմներին, մեր անմոռաց ընկերներ։

Ն. ՏԻՐՈՍԵՆՑ



ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՎԻՃԱԿԸ

(Հայ գրողների կարծիքով)

Ա Ն Կ Ե Տ Ա

Դեռ 1917 թ. վերջերին, երբ մեր գրական աշխարհում համեմատական կենդանութիւն կար և ռուսական յեղափոխութիւնը մեր առջև բացել էր պայծառ հեռանկարներ՝ ապագան դարձնելով դիւթական մի երկիր,—այդ ժամանակ մեր մէջ միտք յղացաւ մի հարցարանով (անկետով) դիմել մեր գրողներին ու քննադատներին և նրանց կարծիքն իմանալ հայ գրականութեան ներկայի ու ապագայի մասին։ Եւ այդ նպատակով կազմեցինք մի հարցարան։ Սակայն քաղաքական ձախորդ իրադարձութիւնները և մեր ժողովրդի գլխին պատած ահաւոր աղէտները, որ հիմն ի վեր կործանեցին ամեն տեսակ ծրագիր ու յղացում, անիրագործելի դարձրին և մեր ցանկութիւնը։ Բայց ներկայ թուին, երբ փոթորիկն անցաւ կարծես և մեր երկինքը փոքր ինչ պարզուեց, մեր վաղեմի միտքը նորից այցելեց մեզ։ Եւ այս անգամ արդէն այդ պատրաստի հարցարանով դիմեցինք մեր գրողներից նրանց, ովքեր այն ժամանակ գտնուում էին Թիֆլիսում, մնացած հեղինակներին, որ գտնուում էին Թիֆլիսից դուրս, անկարող եղանք դիմել՝ խզուած հաղորդակցութեան պատճառով։

Բերում ենք ահա հարցարանը և նրա պատասխանները։

Ս. Զորեան

---

1) Ինչ է Ձեր կարծիքը գեղեցիկ հայ գրականութեան ներկայի մասին. ա) վիպասանութիւն, բ) դրամա, գ) քննարերգութիւն։

2) Ինչպէս էք նայում գեղեցիկ հայ գրականութեան ապագային։

ա) Արդեօք, ներկան երաշխաւորում է նրա ապագայ առաջադիմութիւնը։

բ) Որոնք են, Ձեր կարծիքով, նրա գրաւականները։

3) Ի՞նչ կարծիք ունիք ռուսահայ ու Թիւրքահայ գեղարուեստական բարբառների մասին։

ա) Ապագան այդ բարբառներից որի՞ն է պատկանում։

բ) Ցանկալի՞ է, արդեօք, նրանց ձուլումը. թէ մէկի կամ թէ միւսի չքացումը։

4) Ի՞նչ կարծիք ունիք ժողովրդական բարբառների մասին։

Յարգելի պարոն!

Ահա ինչ կարող եմ ասել իբրև պատասխան Ձեր անկէտին.

Գեղեցիկ հայ գրականութեան ներկան ես այնքան էլ յուսատու և մխիթարական չեմ տեսնում, նոյն իսկ աչքի առջև ունենալով պատերազմը և հայ ազգի վերջին տարիների տառապանքները։ Խօսքս մանաւանդ վիպասանութեանն է վերաբերում։ Ո՞ւր է նա, այդ հայ վիպասանութիւնը։ Ինձ թւում է, որ առհասարակ մենք վաղաժամ ենք գործածում այդ բառը հայ գրականութեան մասին խօսելիս։ Անցեալի մի քանի քիչ թէ շատ գեղարուեստական երկեր դեռ իրաւունք չեն տալիս մեզ ասելու, թէ կայ հայ վիպասանութիւն բառիս ընդարձակ իմաստով։ Ասացի անցեալի, որովհետև ներկան այն էլ չի տալիս, ինչ որ տուել է անցեալը։ Պռոշեանցը 24 տարեկան էր երբ գրեց իր «Սոս և Վարդիթերը», Ռաֆֆին աւելի երիտասարդ հասակում տուեց իր «Հարեմը»։ Կարելի է վիճել այդ երկերի գեղարուեստական կշռի մասին, բայց չի կարելի չը հիանալ նրանց հեղինակների հաւարձակութեամբ և ընդարձակ ծրագրով։ Ներկայ հայ վիպագրութիւնը վերին աստիճանի վեհերոտ է։ Նա վախենում է իր ստուերից։ Կարծես, նա յոյս չունի իր ոյժերի վրայ։ Նա չի ճգնում դուրս գալ փոքրիկ պատմուածքների և պատկերների նեղ շրջանից։ Նա լողում է գետի ափերում դողդողալով և չունի քաջութիւն նետուելու խորը հոսանքի մէջ։ Հարկաւ. գեղարուեստական երկի ստեղծագործական արժէքը նրա թերթերի քանակութիւնից չի կախված և մի փոքրիկ պատմուածք կարող է ունենալ աւելի մեծ գեղարուեստական կշիռ, քան մի մեծահատոր վէպ, բայց այժմեան փոքրիկ երկերն էլ որպէս այդպիսին ինձ չեն գոհացնում։ Եւ մի բան, որ աւելի է վշտացնում ինձ, դա տեմպերամենտի պակասութիւնն է մեր ներկայ վիպագրու-

թեան մէջ, այն ինչ հեղինակի տեմպերամենտն է, որ կրկին ներշնչում է կեանք և կենսունակութիւն և դարձնում նրան ընթերցողի համար հետաքրքրական։

Վերագրել այս տխուր երևոյթի պատճառն ամբողջովին պատերազմին կամ հայ ազգի վերջին տարիների տառապանքներին, կը նշանակէ պարապել ինքնախաբէութեամբ։ Եթէ չեմ սխալվում, մօտ 15 տարի է, որ հայ վէպ լոյս չի տեսնում։ Ո՞ւր էր նա պատերազմից առաջ 10 տարուայ ընթացքում։

Գուցէ մի փոքր աւելի մխիթարական է հայ դրամայի վիճակը։ Մի քանի քիչ թէ շատ շնորքով գրված պիեսներ, իրանց մակերևոյթականութեամբ հանդերձ, ինձ յոյս են ներշնչում, որ մի օր, վերջապէս, մենք ունենալու ենք դրամա, արուեստների այդ թագուհուն։ Սակայն այդ կը լինի միայն այն դէպքում, երբ հայ դրաման չի հեռանալ կեանքի սահմաններից, ուզում եմ ասել երբ խորը կուսումնասիրէ մարդու հոգին և արտաքին էֆէկտներով չի տարվիլ։

Քնարերգութեան մասին վարանում եմ մի որոշ բան ասել, որովհետև ես շատ քիչ եմ ծանօթ մեր երիտասարդ ու պատանի երգիչների գործերին։ Սակայն, ինչ որ կարդացել եմ, թոյլ է տալիս ինձ յուսալու, որ մեր ծերացած և ծերացող քնարերգակները կունենան արժանաւոր ժառանգներ։

Այս է իմ պատասխանը Ձեր առաջին երկու հարցերին։

Գալով ձեր երրորդ հարցին, այն է, թէ ինչ կարծիք ունեմ ռուսահայ և թիւրքահայ գեղարուեստական բարբառների մասին, չի կարելի ասել, թէ ապագան որին է պատկանում։ Ապագան պատկանելու է երկուսին էլ, բայց երկուսին միացած։ Ոչ մէկը նրանցից չի յաղթել և ոչ մէկը չի պարտվել։ Նրանք կը միանան ու կը ձուլվեն, և մենք կունենանք մի հարուստ և սքանչելի գեղարուեստական լեզու։ Ռուսահայ բարբառը ձուլարանի մէջ կը ձգէ իր ժողովրդական առողջութիւնը և իր դրամատիզմը, թիւրքահայ բարբառը՝ գրաբարից վերցրած ընտիր բառերը և ֆրանսերէնից իւրացրած նրբութիւնները։

Ինչ վերաբերում է ժողովրդական բարբառներին, նրանք վաղ թէ ուշ չքանալու են, իրանց տեղը տալով օր օրի վրայ աւելի ու աւելի տարածվող և աւելի ու աւելի մշակվող գրական մաքուր լեզուին։ Եւ այդ մասին չը պիտի ցաւել, այլ ընդհակա-

ռակը։ Այդպէս է եղել բոլոր ազգերի տեղական բարբառների վերաբերմամբ, նոյնն է լինելու և մեր բարբառների վերաբերմամբ։

Շիրվանզադէ

1919 թ. 6 ապրիլի, Թիֆլիս

Ես մեր բանաստեղծների, վիպասանների ու դրամատուրգների գործերը տարիներ առաջ եմ կարդացել։

Սխալ կանէի, եթէ մեր գեղեցիկ գրականութեան վրայ կարծիք յայտնէի հին տպաւորութեան տակ։

Էն ժամանակից դէսը շատ են փոխուած իմ գրական ճաշակն ու հասկացողութիւնը և իմ աշխարհահայեացքը։ Ինչ որ էն ժամանակ թւում էր գեղեցիկ ու հերոսական, այժմ տգեղ է ու բարբարոսական։ Ես վերջին տարիներս, երբ դէպք է լինում՝ վերադառնում եմ իմ հին կարդացածներից մէկին կամ մի ուրիշին՝ հիասթափւում եմ յաճախ։ Ընդհանուր տպաւորութիւնս ու կարծիքս էն է, որ մեր գեղեցիկ գրականութիւնը առողջ ու ամբողջական գործեր շատ չունի։

Մինչև այժմ մեր գրականութիւնը հարազատ հող չի ունեցել իր ոտի տակ, մեծ մասով գաղութային գրականութիւն է եղել։ Բանաստեղծի ոտը հարազատ ու իրական հողի վրայ պիտի լինի, նրանից յետոյ միայն կարող է բարձրանալ, թէկուզ գլուխը մինչև երկինք հասնի։

Հայոց ապագայ գեղեցիկ գրականութեան զարգացման գրաւականը ազատ Հայաստանն է, ազատ հարազատ հողը, ժողովուրդը։

Էդ ազատ Հայաստանն էլ կըտայ մեր գրական ուժեղ ու կենդանի լեզուն, որ լինելու է ժողովրդական բարբառների, գրաբարի ու եղած գրական լեզուի համադրութիւնը։ Հայ ժողովրդական կենդանի բարբառների ազդեցութիւնն է լինելու տիրական։

Զընչին է հայ ժողովրդական բարբառների միջի եղած տարբերութիւնը, կայանում է գլխաւորապէս կը-ի և ուժ-ի մէջ։ Էդտեղ էլ գերակշռելու է կովկասահայ բարբառը։ Էս չընչին տարբերութիւնները մի կոդմ թողած։ Հայ ժողովրդական բարբառները մի լեզու են և յայտաբերում են մի ամբողջական հայութիւն։

Ցովհ. Թումանեան

ԻՄ ՊԱՏԱՍԽԱՆԸ ԱՆԿԷՏԻՆ

Գեղեցիկ հայ գրականութեան ներկա՞ն։ Ո՞րն է այդ, ո՞ւր է այդ։ Ես այդպիսի բան չեմ տեսնում, որովհետև չկայ և չէր էլ կարող լինել այն պարզ պատճառով, որ նախ աշխարհաւեր պատերազմը, յետոյ յեղափոխութիւնը և դրանց ընթացքում մեր ազգի կրած գերմարդկային տառապանքներն իր սաղմի մէջ խեղդեցին այն, ինչ որ կարող էր լինել մեր գեղեցիկ գրականութեան ներկան։ Եւ այս անշուշտ միայն մեզնում չէ, այս երևոյթը պէտք է որ, անտարակոյս, ընդհանուր լինի այս հինգ տարուայ ընթացքում բոլոր ազգերի համար, որոնք այսպէս թէ այնպէս, ուղղակի թէ անուղղակի ընկել են պատերազմի հարուածների տակ։

Ուրեմն խօսք կարող է լինել միայն անցեալի մասին, այսինքն մեր այն գրականութեան մասին, որ ունէինք նախ քան պատերազմն ու յեղափոխութիւնը։

Ճիշտ է. մեր գեղեցիկ գրականութեան այդ անցեալը միևնոյն ժամանակ և նրա ներկան է, որովհետև չէ՞ որ մեր նոր սերունդը նոր բան չունի կարդալու, եթէ ոչ միշտ միևնոյն հեղինակները սկսած Բաֆֆիից մինչև ամենավերջին յուսատու սկըսնակ գրողը, բայց և այնպէս նա անցեալ է և անցեալ էլ կըմնայ, դառնալով պատմութեան սեփականութիւն և առանց իր հետևողական զարգացումն ունենալու ապագայի համար։

Սրանով ես ուզում եմ պատասխանած լինել Ձեր երկրորդ հարցակէտին—«Արդեօք ներկան երաշխաւորո՞ւմ է նրա ապագայ առաջադիմութիւնը»։

Պատասխանս, ինչպէս տեսնում էք, բացասական է, և ահա թէ ինչու։

Համաշխարհային պատերազմը և նրա հետևանքով բռնկած յեղափոխութիւնը, որ նոյնպէս սպառնում է համաշխարհային բնոյթ առնել, այնպիսի խոր անջրպետ են քաշել անցեալ և ապագայի միջև, հնի և նորի միջև, որ որևէ կամուրջ ձգել, որևէ յաջորդականութիւն սահմանել միանգամայն անհնարին պիտի լինի։ Մեր աչքերի առջև հսկայական յեղաշրջում է կատարուում մարդկային կեանքի բոլոր ասպարէզներում և առանձնապէս ցարդ եղած ընդհանուր մտահայեացքի մէջ։ Վերագնահատուում են հին արժէքները, տապալուում են յաւիտենական ճանաչուած ճշմարտութիւնները, խորտակուում են հին կուռքերը, մի խօսքով՝ հին աշխարհը ճարճատում է հիմն ի վեր և պիտի փլի անխուսա-

փիլիսոփէն, տեղի տալով նոր հիմունքներով ստեղծուած մի նոր, դէռ ևս անծանօթ աշխարհի։

Այժմ կատարւում է միայն քանդման պրոցեսը, և այս պրոցեսը շուտ չի վերջանալ, որովհետև քանդւելու են այնպիսի շատ բաներ, որոնք դարերի արմատներ ունեն։

Քանդման այս տարրերային պրոցեսը հարկաւ չի կարող անցնել առհասարակ գեղարուեստի և գեղեցիկ գրականութեան կողքով, առանց նրանց ձեռք տալու. գեղեցիկ գրականութիւնն ևս իր բոլոր ճիւղերով (վէպ, դրամա, քնարերգութիւն) պիտի ընկնի ընդհանուր պերտուրբացիայի շրջապտոյտի մէջ և պիտի վերակազմի սոցիալ-տնտեսապէս, քաղաքականապէս և մտաւորապէս վերաստեղծուած նոր աշխարհի գեղարուեստական պահանջներին համապատասխան։

Հայոց գրականութիւնն ևս, որ իբրև մի փոքրիկ ազգի գրականութիւն՝ միշտ գնացել է քաղաքակիրթ մեծ ազգերի գրականութեան ետևից, ազդւելով և ներշնչւելով նրանից, պիտի ենթարկւի նոյն փոփոխութիւններին, ինչպէս և մեր ամբողջ ազգային կեանքը։

Այսպէս, ուրեմն, ներկայի վրայ հիմնուած որևէ գուշակութիւն անել ապագայի համար՝ աւելորդ ժամավաճառութիւն կըլինի։

Այսքանը միայն կարելի է ասել, որ մեր գեղեցիկ գրականութիւնը ապագայում ինչպիսի փոփոխութիւններ էլ որ կրելու լինի մտքերի յեղաշրջման և քաղաքական-սոցիալական նոր կեանքի ազդեցութեան տակ, իբրև արդէն քաղաքականապէս անկախ մի ազգի գրականութիւն՝ աւելի կորով ու թափ պիտի ստանայ, ստեղծագործական աւելի ազատ թռիչք, զերծ անցեալի բազմազան կաշկանդումներից։ Դրա առհաւատչեան մեր ցեղի անվիճելի ինտելեկտուալ ունակութիւնն է, որը ազատ կեանքի մէջ, իր զարգացման անկաշկանդ պայմանների մէջ աւելի բեղուն ու զեղուն պիտի դառնայ, և այն ժամանակ մեզ թերևս աջողւի դուրս գալ օտարների ազդեցութիւններից և մեր սեփական ուղին հարթել դէպի ընդհանուր գրականութիւնը։

Մնում է լեզուի հարցը։

Հայկական խնդրի լուծումով և Միացեալ Հայաստանի վերաստեղծումով ինքն ըստ ինքեան լուծւելու է արևմտահայ և արևելահայ բարբառների միաձուլման հարցը։ Ինչպէս որ իրարից պատնէշով բաժանուած երկու ջրաւազանների ջուրը պատնէշի

քանդումով պիտի խառնեն իրար, այնպէս և նախկին Ռուսա-Հայաստանը նախկին Տաճկա-Հայաստանից բաժանող պետական սահմանի վերացումով մեր ազգի երկու հատուածները պիտի միախառնեն իրար ոչ միայն իրենց բարբառներով, այլ և իրենց առանձնայատուկ բարքերով, սովորոյթներով և այլն։ Դա բնական է և անխուսափելի։ Եթէ ուշի-ուշով հետևելու լինինք մեր և տաճկահայոց մամուլին ու գրականութեանը, առաւելապէս մամուլին, մանաւանդ վերջին ժամանակներս, երբ տաճկահայ գրեթէ ամբողջ մտաւորականութիւնը հարկադրուած էր տեղահանուել Կովկաս և ապրել մեր մէջ, մենք անշուշտ կընկատենք արդէն այդ միաձուլման պարզ նշանները։ Երկու հատուածներս իրարից վերցրել ենք, գիտակցաբար և թերևս աւելի շատ անգիտակցօրէն ու բնականաբար, արտայայտութեան շատ ձևեր, ոճեր, բառեր ու պարբերութիւններ։ Այդ փոխառութիւնը կատարել ենք առաւելապէս մենք կովկասահայերս, որովհետև մեր հապաղ, անճկուն, բառերով ոչ-հարուստ և աներաժշտական լեզուն մեծ կարիք ունի այդ թերութիւններն ուղղելու. և դրա համար աւելի լաւ աղբիւր չի կարող ունենալ, քան տաճկահայոց գրական հարուստ ու գեղեցիկ լեզուն։ Երբ անկախ ու ամբողջական Հայաստանն արդէն իրականութիւն կըլինի և մենք կունենանք մեր սեփական պետական մեքենան՝ ի միջի այլոց մի ընդհանուր կրթական վարչութեամբ ու ակադեմիայով, մեր ազգի այժմեան երկու հատուածների բարբառների միաձուլումը կըկատարուի աւելի արագօրէն և բնական ճանապարհով, և մենք կունենանք մի ընդհանուր գրական լեզու՝ հաւասարապէս հասկանալի և ընդունելի ամենքի համար։

Ինչ վերաբերում է Ձեր վերջին հարցակէտին — ժողովրդական բարբառների մասին, այդ բարբառներն ապագայում ընդհանուր կրթութեան տարածումով աւելի արագօրէն, քան այժմ, պիտի կորցնեն իրենց բուն ժողովրդական ոգին գրկելով մեզ այն անգնահատելի ծառայութիւնից, որ մատուցանում են նրանք մեր գրականութեանը իբրև ազգային լեզուի հարազատ ոճերի, դարձուածքների և առանձին բառերի շտեմարան։ Միակ ցաւալի, սակայն անխուսափելի կորուստը, որ պիտի կրի մեր գրականութիւնը և մասնաւորապէս գեղեցիկ գրականութիւնը։

Նար-Դոս

30 մարտ 1919 թ.

Յարգելի պարոն,

Ձեր տուած հարցերին պատասխանում եմ.—

Հայ գեղեցիկ գրականութիւնը, ինչպէս և հայ կեանքը, ապրեցին իրենց վտանգաւոր ու ծանր ճգնաժամը։ Հաւանականօրէն հեռու չեն նրանց լուսաշող օրերը։

Ներկայի մասին ոչինչ չը կայ ասելու։ Մի երկու թեթև ցոլքերը երաշխիք լինել չեն կարող։ Հին արժէքների յետին շիթերն են դրանք, որոնք անշուշտ պատմական նշանակութիւն կարող են ունենալ։ Միմիայն այդքան։ Ներկան ոչինչ չունի ասելու՝ ապագայի յառաջադիմութեան մասին։ Սպասել պէտք է այն վիպասանութեան, դրամային և քնարերգութեան, որ առաջներս է։ Մեր քաղաքական նոր կեանքից և մտաւոր ապագայ միջավայրից է կախուած ամեն ինչ։ Իսկ այդ կեանքն ու միջավայրը կարող են տրամագծօրէն տարբերուել մինչև այժմ եղածներից և կատարեալ անակնկալներ առաջացնել։ Համաշխարհային պատերազմը շատ աւելի խոշոր յեղաշրջումներ է պատճառելու, քան պատճառեց Ֆրանսիական Մեծ Յեղափոխութիւնը։

Ապագան, ուրեմն, յղի է մեծ սպասումներով։ Դժուար է գուշակութիւն անել։ Մեր մինչև այժմ ունեցած պատկերացումներից բոլորովին պիտի տարբերուին հայ կեանքն ու ըմբռնումները։

Գալով գրական երկու բարբառներին—նրանց միացման քայլեր 10—15 տարիից ի վեր լինում են արդէն երկու կողմից ևս։ Ապագայում կարող է գոյութիւն ստանալ հարուստ մի բարբառ գրական, որ ինքնաբերաբար և բնական կերպով կազմուելու է երկու բարբառներից։ Քերականութիւնն ու տառադարձութիւնը, հաւանօրէն, ռուսահայ բարբառն է տալու, իսկ լեզուի հարստութիւնը, նուագայնութիւնը և ճկունութիւնը կը ժառանգուի թիւրքահայ լեզուն։ Այժմէն իսկ նկատելի է այդ։ Ռուսահայը ճգնում է ճոխացնելու իր գրական լեզուն և կոկելու թիւրքահայ բարբառի տեսակներով։

Ժողովրդական բարբառները մեռնում են և կը մեռնեն հետզհետէ։ Նրանք գրական լեզուին կը թողնեն իրենց լաւագոյն տարրերը և իրենք կը ոչնչանան բնական մահով։ Անխուսափելի այդ։ Զանքերը՝ նրանցից որևէ մէկով գրականութիւն ստեղծելու—ապարդիւն կը լինին։

Չի՞ թուում Ձեզ, որ 1914-ից ի վեր ոչ թէ հինգ տարի է անցել, այլ կարծես յիսուն տարի։ Այդպիսի մտաւոր ոստուցեա-

ը իրենց անակնկալները են ունենում՝ մանաւանդ գեղարուեստական ըմբռնումների համար։

Սպասենք ուրեմն։ Հեռու չէ վերագնահատումների, նոր արժէքների և նոր հասկացողութիւնների ժամանակը։

Վ. Փափազեան

1919, Ապրիլ 8/26. Թիֆլիզ.

Ցարգելի պարոն Զօրեան.

Ձեր անկեղծային հարցերին պատասխանելը առնւազը դժուար է ինձ համար։ Բայց կաշխատեմ որոշ չափով գոհացնել Ձեզ։

Դուք հարցնում էք՝ ինչ է իմ կարծիքը գեղեցիկ հայ գրականութեան ներկայի մասին. վիպասանութիւն, դրամա, քննարերգութիւն։

Մեր աւագ արձակագիրները թողել են մեծ վէպերն ու վէպիկները և ժշակում են դրաման։ Այստեղ երկար կըլինէր, թերևս և դժուար, բացատրել բուն պատճառը մի երևոյթի, որ նկատւում է նաև ուրիշ ազգերի գրականութեան մէջ։ Այսպէս թէ այնպէս՝ մեր աւագ արձակագիրները՝ Գր. Զոհրապ, Շիրուանզադէ, Շանթ, Մուրացան, Փափազեան, Արփիար, Ահարոնեան, Զարդարեան, Թլկատինցի, Զապէլ Եսայեան, Երուխան, Ֆիւֆէճեան, Զիֆթէ-Սարաֆ և այլն՝ քիչ բացառութեամբ արդէն պաշտօնաթող արձակագիրներ են կամ գուցէ սկսում են դադարել։ Սրանցից ոմանք սայթաքել են իրենց ճամբին՝ ուղղելով դէպի հրապարակախօսութիւնն ու վարնոց ռոմանտիզմը, բայց ոմանք ունեն տաղանդաւոր երկեր և մինչև իսկ ուժեղ տաղանդներ են։ Սրանց յաջորդում են մի շարք երիտասարդներ, որոնց գրական արուեստի ըմբռնումը աւելի է քան դրա գործադրումը և որոնց պակասում է հների թափը, տարերայնութիւնը, ներուժութիւնը։ Հներից ոմանք նոր ճամբայ բացին դէպի գրականութեան հայրենացումը՝ դէպի ինքնուրոյնացումը նիւթով և արուեստով՝ միաժամանակ մնալով համաշխարհային։ Բայց նրանց մէջ պակաս չէ եւրոպական արուեստի հիպնոզը և ընդօրինակումը։ Այսպիսով մեր ներկայ վէպը դեռ ժշակման փուլի մէջ է և գուշակութիւնը հակուած է նրա յաղթանակը հաւաստելու։ «Դէպի համայն մարդկութիւնը՝ հայրենիքի ճամբով»—ահա սա է նրա նշանաբանը, որ երևում է նրանց տաղանդաւոր ներկայացուցիչների գործերից։

Գալով դրամային՝ պէտք է ասել, որ Սունդուկեանից յետոյ

երկար լռելով՝ վերջին տասնամեակին սկսել է ծաղկել ի հաշիւ վիպագրութեան։ Իբրև մի տեսակ «գործնական» արուեստի ճիւղ՝ դրաման տենդային արագութեամբ պահանջում է իր ստեղծագործումն ու մշակումը։ Ահա թէ ինչու մեր դրամատուրգիան մեծ ճիգ է ցոյց տալիս և արդէն սկսել է մի նոր դարագլուխ թատերական արուեստի։ Նա աւելի կըզարգանայ և առաջ կանցնի վէպից, որովհետև մինչ՝ վերջինս պահանջում է քաղաքական և հոգեկան կատարեալ խաղաղութիւն՝ դրաման կենսունակ է նաև քաղաքական խռովայոյզ օրերին, շնորհիւ թատրոնի։

Ինչ վերաբերում է քննադատութեան՝ իմ կարծիքն այն է, որ մեր աւագ բանաստեղծների և կրտսերների մէջ մի ինչ որ հոգեկան մեծ անջրպետ կայ։ Հները, ինձ թւում է շատ աւելի հաւասարակշիռ ու ներդաշնակ էին հէնց իրենց սկսնակ ժամանակ, քան մեր սկսնակները հիմա։ Հները աւելի հեշտ գտան իրենց աշխարհը և այդ աշխարհի ճամբան, քան նորերը, չընայած որ նրանք աւելի աննպաստ պայմանների մէջ էին իբրև սկսնակներ՝ քան մեր նոր սկսնակները։ Հներն աւելի անփոլթ էին ձևի, տաղաչափութեան և արուեստի այլ պահանջների մէջ, բայց շատ աւելի խորն էին, ուժեղ և անմիջական։ Նորերից շատերը ընդհակառակը իրենց տուել են յանգերի, տաղաչափութեան մշակման, կոտրտուքի, հնացած մոդերնիզմի. սրանք աւելի մակերեսային են, վաղանցուկ, անհայրենիք. կերտում են մտքով։ Դուրեանի անկեղծութիւնն ու պարզ վսեմութիւնը չէք գտնի ոչ Սիամանթոի և ոչ Վարուժանի մէջ։ Բայց այսպէս թէ այսպէս՝ ոմանք ունին մի որև է շունչ, անշուշտ բանաստեղծի շունչ, բայց ոչ երկարոգի, ոչ խորը։ Նրանց դեղը հայրենիքն է։

«Արդեօք ի՞նչպէս եմ նայում հայ գրականութեան ապագային»։ Ես կասկած չունեմ, որ հայ գրականութիւնը պիտի դառնայ աշխարհահռչակ մի գրականութիւն։ Ես հաւատում եմ և արդէն իսկ զգում եմ մեր ցեղի այն խտացած ուժը, թագուցեալ տաղանդը, երկու աշխարհների և հին ու նոր ժամանակների համադրութիւնը, որ պիտի երևայ մեր ապագայ գրականութեան մէջ։ Եւ «ներկան երաշխաւորում է նրա ապագայ առաջդիմութիւնը»՝ այս Ձեր հարցումը իբր պատասխան կըվերադարձնէի Ձեզ։

Որոնք են, իմ կարծիքով, նրա գրաւականնե՞ը։—Այն բազմադարեան կենսական փորձը, որ ունի մեր ժողովուրդը՝ ապրելով զանազան երկրների մէջ, շփուելով այլազան ազգերի, մարդ-

կանց հետ, ապրելով ամեն տեսակ վիճակներ, կրելով ամենամեծ տառապանքը, ունենալով ամենադաժան ապրումներ և ծարաւի լինելով կեանքին և կուլտուրային։ Նրա գրականութեան ապագայ առաջդիմութեանը գրաւական են այսպիսի դաժան պայմանների մէջ ծաղկող հէնց ներկայ գրականութիւնը։

Ի՞նչ կարծիք ունեմ ռուսահայ եւ Թիւրքահայ գեղարուեստական բարբառների մ՚ասին։ Գուցէ ուզում էք ասել՝ գրակա՞ն բարբառների մասին։—Թիւրքահայ գրական լեզուն բառարանով անհամեմատ հարուստ է ռուսահայերէնից, նա ենթակայ է աւելի վարպետ գրիչների ջանադիր մշակման, արդէն համարեա վերջնապէս մշակուած է, բայց նրա բառապաշարը մեծագոյն մասով կազմուած է հնաբանութիւններից, բառարաններից հանած պեղածոյ բառերից և խոշոր չափով ինքնահնար բառերից—նորաբանութիւններից։ Այդպիսի բառապաշարի, ինչպէս նոսա յաճախագէպ ֆրանսաբանութիւնների ու այլ օտարաբանութիւնների պատճառով լեզուի համաձայնութիւնը դառնում է մշակուած, բայց շինծու, սակաւարիւն։ Բայց ինչ որ է՝ ինձ դուր է գալիս Զոնրապի կուռ, ժուժկալ, ճիշտ և հասարակ լեզուն. մանաւորապէս հեռաքրքիր է Թլկատինցու, Փիւֆէճեանի, Երուխանի և մի քանիսների փորձերը՝ պատուաստել լեզուն ժողովրդական լեզուի հարստութեամբ։ Իմ կարծիքով՝ Խրիմեան, Սրուանձտեան, Պարոնեան և վերոյիշեալները արդէն դռել են Թիւրքահայ գրական լեզուի ճրշմարիտ ուղին և նրանցից տարբեր ճամբայ ընկնողները շատ հեռու չըպիտի գնան։

Ինչ վերաբերում է ռուսահայ գրական լեզուին՝ ես առ այժմ միայն Ղ. Ալայեանի լեզուն եմ ճանաչում իրրև միակը, որ հասել է որոշ զարգացման և մշակման։ Թումանեան մի բան աւելացրեց Ալայեանի լեզուին և մի բան էլ պակասացրեց։ Մնացածները դեռ պիտի մշակեն իրենց լեզուն՝ եթէ արդէն դա ուշ չէ իրենց համար։ Ընդհանրապէս ռուսահայ հեղինակները լեզուի մշակման այնքան էլ հակամէտ չեն...

Ռուսաբանութիւնը ճարակում է ռուսահայ լեզուն։ Շատերը գրական ասպարէզ են գալիս կատարեալ անգէտ գրիչներով։

Բայց չընայած այս ամենին՝ ռուսահայ լեզուն միւս կողմից էլ աւելի մօտ լինելով երկրին՝ այսպէս թէ այնպէս ենթակայ է կենդանի լեզուի շորշոփին և վերջապէս որոշ առաջդիմութիւն էլ

նկատուում է նրա զարգացման մէջ՝ համեմատած նախկին տասնամեակների հետ։

«Ապազան այդ բարբառներից որի՞ն է պատկանում»։— Այդ գիտեն Կլեմանսօն, Լլոյդ Ջորջը և Վիլսոնը։

«Ցանկալի՞ է արդեօք նրանց ձուլումը, թէ մէկի կամ թէ միւսի չքացումը»։—Ցանկալի է նրանց ձուլումը։ Լաւ է, որ չէք հարցնում թէ կարելի՞ է։

«Ինչ կարծիք ունեմ ժողովրդական բարբառների մասին»։ —Ժողովրդական բարբառները նման են հողի հիւթին, որից սընուում է ծառը։ Առանց նրա մշտական սնունդի չի կարող ապրել և ոչ մի գրականութիւն։ Ահա այստեղից է մեր երկու գրականների ապագան զուշակելու դժուարութիւնը։ Մինչև հիմի մեր երկու գրականները սնուում էին իրենց ժողովրդական բարբառներով։ Այժմ այդ գրականներից արևմտեանը ենթակայ է մի մեծ վտանգի—իր սննդատու ժողովրդի կամ ցրուելուն իրենից աւելի զօրեղ ռուսահայ բարբառի ժողովրդի մէջ, կամ իր երկրում կազմելու մի թոյլ փոքրամասնութիւն՝ եկեղեցիների մէջ։ Այսպիսով գուցէ արևմտեան ժողովրդական բարբառը տեղի տայ արևելեան ժողովրդականին և դադարի կենդանի շունչ տալուց իր գրականին։ Կամ գուցէ արևմտահայ ժողովուրդը գաղթավայրերից ի մի հաւաքի երկրում (քաղաքական և տնտեսական բարեյաջող պայմանների մէջ ի հարկէ)։ Այն ժամանակ արևմտեան գրականն կըշարունակէ ապրել, այլ և ծաղկել։ Հնարաւոր է նաև, որ երկու ժողովուրդներն էլ միասնական կեանքում առաջ բերելով բարբառների նոր խառնուրդ՝ դիւրացնեն նաև միասնական կեանքով ապրող երկու գրականութեան գործը և ստիպեն որ սրանք ևս մերձեցնեն կամ ձուլեն իրենց լեզուն։ Մի խօսքով՝ սա աւելի քաղաքական հարց է քան լեզուական-գրական, ուստի և ոչինչ հաստատապէս ասել չեմ կարող։ Ընդհանրապէս իմ սկզբունքն է. —Արևելահայ և Արևմտահայ հատուածները թողնելու են Պոլսի և Թիֆլիզի գրականների անհարազատ ճամբան և ամեն մէկը մերձենալու է իր ժողովրդական լեզուին, որ ասել է՝ այն ընդհանուր աղբիւրին, որ չընայած իր արտաքին տարբերութիւններին՝ ներքուստ միևնոյն լեզուն է, պարզապէս՝ հայոց լեզու... Վանցու և Երևանցու բարբառները միևնոյնն են իրենց համաձայնութեամբ, իրենց ոգով. մինչդեռ Պոլսի և Թիֆլիզի գրականները իրարու խորթ են իրենց ոգով և համաձայնութեամբ՝ չընայած բառապաշարի

նմանութեան։ «Դէպի Երկի՛ր»—ահա մեր նշանաբանը. սա նշանակում է դէպի հայո՛ց լեզու։

Յարգանօք՝ Դ. Դեմիրճեան

1919 9 օգոստոսի. Թիֆլիզ

---

1. Հայ գրականութեան ներկան, ըստ իս, աննախանձելի է, թէև ունեցել ենք Սունդուկեանի նման թատերագիր և ունենք Յովհ. Թումանեանի նման բանաստեղծ և Շիրվանզադէի նման վիպագիր։

2. Հայ գրականութեանը, իմ կարծիքով, փայլուն ապագայ է սպասում։ Հայ հանճարի կատարուն ծաղկմանը և թեւատարած սաւառնմանը մինչ այժմ խանգարել են անկախ կեանքի բացակայութիւնը, ազգային կենդանի օրգանիզմի յօշոտումը և քաղքենի դասերի գերիշխանութիւնը մեր ժողովրդի ներքին կեանքում։ Երբ ստեղծուի ազատ և միացեալ Հայաստան և հայ աշխատաւոր ժողովուրդը՝ հայ աշխատաւոր մտաւորականութեան ղեկավարութեամբ՝ իր ձեռքն առնի իր բախտի տնօրինութիւնը, հայ հանճարը հնարաւորութիւն կը ստանայ վերջապէս այն թռիչքները, որոնց նա ընդունակ է։

3. Արևմտահայ գրական բարբառը աւելի մշակուած է ու կոկ, քան արևելահայը, բայց և աւելի արհեստական։ Արևելահայ բարբառը, եթէ նոյնքան մշակուի, աւելի գեղեցիկ կը լինի ու արտայայտիկ։ Արևելահայ բարբառը աւելի է մօտ թէ գրաբարին, թէ ժողովրդական լեզուին (այրարատեան բարբառին), քան արևմտահայը։

Ապագան ոչ մէկին էլ չի պատկանում, այլ նրանց համադրոյթին (սինթէզին)։ Միացեալ հայութիւնը պիտի ունենայ և կունենայ մի գրական լեզու, և այդ լեզուն կը լինի աշխարհիս ամենաճոխ, ամենագեղեցիկ և ամենից արտայայտիկ լեզուներից մէկը։

4. Ժողովրդական բարբառները՝ գրաբարի հետ միասին՝ համարում եմ լաւագոյն աղբիւրը նոր հայերէնի համար։ Ով գիտի միայն գրաբարը նա կը կաղի հայերէնում աջ ոտքով։

Տիգրան Յովհաննիսեան

Թիֆլիս
10 ապրիլի 1919 թ.

Մեր գեղեցիկ գրականության ներկան որակում չունի այն պատճառով, որ ցայտուն անուններ ու գործեր չկան հրապարակի վրայ։ Մի երկու վիպական անուններ (Կ. Միքայէլեան, Միք. Մանուէլեան, Ստ. Զօրեան) դեռ ևս գրչի հզօրության չեն տիրացել և նոյնիսկ դժուար է ասել, թէ հայ միջավայրը կարող կըլինի առնութիւն մատակարարել նրանց դալուկ վրձինին։ Նոյնը կարելի է կրկնել նաև դրամայի նկատմամբ (Վ. Վալադեան)։ Ֆնարերգության բնագաւառում Վ. Տէրեանի մուսան ահա քանի տարի է, որ խլացրել է միւս ձայները։ Մեր բոլոր մատաղ բանաստեղծները շարունակում են հարկ մատուցանել Վ. Տէրեանի քնարով յորուցած մոտիվներին, մի հոգեվիճակ, որ մենք որակել ենք «մենության ժղձաւանջը» անունով։ Երիտասարդ բանաստեղծների մէջ երջանիկ բացառութիւն է կազմում Թիւրքահայ Վէսպէրը, որը գիտէ առնական նուագներ կերտել և դա շնորհիւ նրան, որ երգչի հոգուն տիրում է ցեղի ու հայրենիքի վերածնության կարօտը։

Ասացինք, որ հայ գեղեցիկ գրականության ներկան որակում չունի։ Աւելի ճիշտ կըլինի ասել, որ այժմ տիրում է գեղեցիկ գրականության բացակայության շրջանը։ Սակայն մեր գրականության անցեալը և հին վարպետների դեռ ևս հնչուող ձայնը գրաւական է, որ գրական պարապութիւնը երկար չպիտի շարունակուի։ Գեղեցիկ գրականութիւնը, ինչպէս և հոգևոր մնայուն կարգի երկերը պարապ և անօդ տարածության մէջ չեն ստեղծուում։ Պատերազմի, մեծ յեղափոխության և մեր ազգային ոգորումների հետևանքով կերտուում է հայ պատմության նոր շրջանը, որի նկատմամբ կարելի է լուսաւոր գուշակութիւններ անել։ Այդ նոր շրջանում իրար պիտի խառնուին երկու տարբեր ապրումներ—անցեալի յիշողութիւնները՝ լի թախիծով, սոսկումներով և ափսոսանքով և ապագայի որոնումները, ուր մտքի վարանումը կցորդուած կըլինի խիզախության հետ։ Այստեղ հնարաւոր է և՛ ռոմանտիզմը կրօնական շղարշով պարուրուած և՛ ցայտուն ըէալիզմը։ Մեր ապագայ տնտեսական ու քաղաքական միջավայրից շատ բան է ցախուած։ Կըկարողանա՞ն արդեօք եկած հայ գրիչները նոր պայմաններում ունկնդիր հանդիսանալ նոր ձայներին, նկատել նոր ներկերը և ըստ այնմ լարել իրանց եռանդը, թէ անցեալի անցուդարձերը, հին հասարակակարգի փլուզումը նրանց արդէն դարձրել է մտաւոր անկարներ—այս հարցին

դժուար է պատասխանել։ Հաւանօրէն մեր արդի գրողներից շատերը կապաւինեն իրանց յիշողութիւններին։ Բայց և համոզուած ենք, որ նրանց փոքրաթիւ մասը նոր կորովի ոյժերի հետ սպասաւոր կըկանգնէ նոր պահանջներին և կըսպառէ գրական բացակայութեան այս շրջանը։ Մեր ազգի անսպառ և աննկուն աշխարհաշէն եռանդն է մեզ իրաւունք տալիս նման եզրակացութեան յանգելու։

Մեր ազգի քաղաքական ամբողջացումը, նրա հաւաքումը միևնոյն պետական յարկի տակ հրամայական է դարձնում ռուսահայ և թիւրքահայ բարբառների ձուլման խնդիրը։ Ազգը չի կարող տարբեր բարբառներ գործադրել պետական և հասարակական հաստատութիւններում և այստեղից էլ պիտի սկսուի ձուլողական աշխատանքը։ Գիտակցական, կազմակերպուած վերաբերմունքը շատ բան կարող է անել այստեղ։ Յիշենք, որ դպրոցին վերապահուած է խոշոր դեր։ Եթէ հայկական երկու հատուածների հոգևոր ղեկավարները զլանան ձեռնամուխ լինելու բարբառների ձուլման աշխատանքին, ապա հարցի լուծումը կըմնայ տարերքին, այսինքն բնական մրցմանն ու զարգացմանը։ Լեզուն կենդանի է նրա գործածողների թեով։ Այս հանգամանքը պէտք է որ գիրակշռութիւն տայ նախկին ռուսահայերի բարբառին։ Մեւս կողմից արդէն պարզ է, որ ռուսահայերը պիտի կազմեն հայկական պետականութեան (իբրև ապարատի) ողնաշարը։ Սա էլ մի գրաւական է, որ նրանց բարբառը առաջնութեան վիճակում պիտի լինի։ Այսպիսով կան տուեալներ, որ այժմեանից նշմարելի են դարձնում ռուսահայ բարբառի գերիշխանութիւնը։ Պարապ հարց է, թէ ցանկալի՞ է բարբառների ձուլումը կամ նրանց մէկի չքացումը։ Ուժեղը պիտի յաղթի և մենք յաղթութիւնը գուշակում ենք յօգուտ ռուսահայերի։

Հէնց որ հայ լեզուն տէր ու տիրական ունեցաւ, հէնց որ հայ պետութիւնը հոգատար կանգնեց մեր «աննիւթ գանձին», — հայ հոգևոր բարեմասնութիւններին, ապա դրանով վճիռ պիտի արձակուի նաև հայ ժողովրդական բարբառներին։ Նրանցից ոչ մէկը յաւակնութիւն չի ունենալ պետական լեզու դառնալու, բայց նրանցից ամեն մէկը կըդայ բառերով և պատկերաւոր դարձուածքներով հարստացնելու մեր գրական լեզուն, նայած թէ տուեալ ժողովրդական բարբառը որպիսի տաղանդով օժտուած ներկայացուցիչ կըտայ մեր գրականութեան։

Մենք հաւատով ենք նայում մեր գրականութեան ապագային։ Հոգևոր զէնքը երբէք հայը բաց չի թողել իր ձեռքից։ Եւ առաւել նա այդ չի կարող անել ազգերի և վարի խաւերի ազատագրութեան պահուն, երբ խօսքին ու գրչին վերապահուած է այնքան վճռողական, այնքան վիթխարի դեր։ Եթէ հայ մարդիկ հրաժարուեն քաղաքական փնթիութիւնից և պայծառ հայրենաշէն ծրագիր առաջադրեն մեր գրական ոյժերին, ապա դրանով նրանք հրահրած կլինեն ազգի մէջ պահուած ոյժը, ստեղծելով գրական ճակատ, ուր կըխաժրի թոյլը և յաղթական ճաճանչներ կարձակէ հզօրը։

Դ. Անանո ն

18 հոկտ. 1919. Երևան

ՍՏ. ԶՕՐԵԱՆԻ ԱՆԿԷՏԱՑԻՆ ՊԱՏԱՍԽԱՆ.

1. «Ի՞նչ է ձեր կարծիքը գեղեցիկ հայ գրականութեան ներկայի մասին»։

Գեղեցիկ հայ գրականութիւնը երեկուայ գրականութիւն է։ Նա մեր կեանքի ներկան չէ անդրադարձրել։ Նա ունի անցեալ և մօտաւոր անցեալ։ Պատերազմն ու յեղափոխութիւնը ստեղծեցին հասարակական պայքար, իսկ պայքարի շրջանում գեղարուեստական ստեղծագործութիւնը կանգ է առնում։ Ինչ վերաբերում է մեր մօտաւոր անցեալի հայ գեղարուեստական գրականութեանը, ըստ իս, նա ունի հետևեալ պատկերը։ Վիպասանութիւնը տակաւին յանգած է մնում Շիրվանզադէի ստեղծագործութեան վրայ, մնալով նրա ռէալիստական տարրերով։ Անկասկած, նոր վիպագրողների խումբը շատ յուսալի գրաւականներով է օժտուած, սակայն նոր ուղիներ նա տակաւին չէ հարթել։ Դրաման մնում է նախկին վիճակում։ Սունդուկեանի արժանաւոր յաջորդ Շիրվանզադէի գծած սահմաններից նա չէ անցել։ Իսկ ոչ-ռէալիստական ուղղութեամբ ներկայացուած գործերը եղակի են և պատահական։ Քնարերգութիւնը հարուստ է ըստ ամենայնի. նրա ուղիները հարթուած են նորագոյն աւագ և մասամբ կրտսեր բանաստեղծների կողմից։ Քնարերգութիւնը ունի բազմակողմանի բովանդակութիւն ու մօտիւներ։ Նա արդէն յաղթահարել է հին տրադիցիաները և թևակոխել նոր շրջաններ։ Հայ գրականութեան ընդհանուր բնոյթը դէմոկրատական է, օժտուած ըստ մեծի մասին քաղքենի հոգեբանութեամբ, տոգորուած մանր բուրժուական գաղափարներով ու տենչերով։ Նրա գեղարուեստական արժէքը անժըխ-

տելի է որպէս կենդանի անդրադարձումն մեր երեկուայ իրականութեան։

— «Ի՞նչպէս էք նայում գեղեցիկ հայ գրականութեան ապագային»։

Գրական վերոյիշեալ երեք ձևերն էլ իրանց բովանդակութեամբ ու գրական աւադ և կրտսեր մշակներով ըստինքեան գրաւականներ են, որով երաշխաւորւում է ապագայ հայ գեղեցիկ գրականութեան առաջադիմութիւնը, պայմանով սակայն, եթէ մեր վերապրած աղէտաւոր հնգամեակին յաջորդեն ազատ և խաղաղ կեանքի տարիներ, հաստատուն ճշմարիտ դէմոկրատական կարգեր։ Ըստ որում կատարուած տնտեսական և հասարակական արմատական յեղաշրջման յաղթանակը բերելու է գեղարուեստական ըէալիզմ և բեղմնաւորելու է ըստ մեծի մասին վիպագրութիւնն ու դրամն, մինչ յետաշրջման դէպքում տիրող կըդառնայ բօմանտիզմը, իսկ գրական գերակշռող ձևը կըլինի քնարերգութիւնը՝ չափական և արձակ բանաստեղծութիւնը։ Առաջին դէպքում նոր գրականութեան մէջ արտացոլւող տենչերի ու խոհերի առանցքը լինելու է կոլեկտիւիզմը, իսկ երկրորդ դէպքում՝ ինքնամփոփ անհատապաշտութիւնը, որ բուրժուական գրականութեան կարմիր թելն է կազմում։

— «Ի՞նչ կարծիք ունիք ռուսահայ և թիւրքահայ գեղարուեստական բարբառների ապագայի մասին»։

Այդ խնդիրը պայմանաւորուած է հայութեան քաղաքական ապագայով։ Եթէ երկրագործ Հայաստանի ժողովուրդը միանայ ռուսահայ հատուածին, ապա մի՛ացեալ Հայաստանում ռուսահայ գրական լեզուն ամենակարճ ժամանակում կըդառնայ միակ տիրապետողը։ Ապագան պատկանելու է նրան։ Իսկ թիւրքահայ գրական բարբառը կըսահմանափակւի պոլսահայ և այլ եւրոպական հայ գաղութային գրականութեամբ։ Այդպիսով մէկի գերակշռութիւնը դառնալու է անհրաժեշտութիւն, սակայն երկու գրական բարբառների ձուլումը՝ երբէք։

— «Ի՞նչ կարծիք ունիք ժողովրդական բարբառների մասին»։

Ինչ վերաբերում է ժողովրդական բարբառներին, դրանցից մի քանիսը հայ գրական լեզուի համար՝ ինչպէս միշտ՝ ապագայում էլ հանդիսանալու են մի-մի շտեմարաններ իրանց հարուստ ու կենդանի բառամթերքով։

Սուրխաթեան



ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ Гос. библиотека ZUUП-Арм.ССР им. А. Мясникяна Ս. ՍԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎ.